Սուրբ Խոստովանության, Մկրտության, Ամուսնության և Սուրբ Հաղորդության Խորհուրդները պետք է պահպանվեն

ԿԻրակի 1 հուլիսի,2012թ., ցերեկվա ժ 03:45

Իմ սիրելի աղջիկ, ինչպես է մեղքը ճզմում Ինձ այս պահին, և ինչպես եմ Ես տառապում մերժման ցավը:
Իմ գլուխը ճզմվում է, ինչպես Իմ Թագի փշերից, զգալով հալածանքի այն ցավը որով տառապում է երկրի վրա Իմ Եկեղեցու գլխավորը՝ Իմ Սուրբ Երեցը իր թշնամիներից: Երկրի վրա Իմ Եկեղեցին՝ երկրի վրա Իմ Մարմինը՝ մեկ է: Խաչելությունը նախապատրաստվում է:
Շուտով Իմ Եկեղեցու ուսմունքները բաժան-բաժան կարվեն շուտով ճիշտ այնպես, ինչպես փարիսեցիները մասնատեցին Իմ ուսուցումները երկրի վրա և նրանք, ովքեր կարծում էին, թե Ինձնից ավելի շատ գիտեին Իմ Հոր Խոսքը:
Դուք բոլորդ պետք է աղոթեք երկրի վրայի Իմ Եկեղեցու համար: Դուք պետք է միշտ հիշեք, որ գոյություն չունի ոչ մի այլ ուսմունք նրանից բացի, որը հռչակվեց Իմ կողմից երկրի վրա Իմ գտնվելու ժամանակ:
Այն ամենն, ինչ Ճշմարտությունն է, երբեք չի փոխվի, քանի որ եթե փոխվի, ապա ձեզ կստիպեն կուլ տալ մի սուտ:
Աղջիկս, երբեք թույլ մի տուր, որ նրանք, ովքեր շարունակում են մերժել Իմ Խոսքըմ հուսահատեցնեն քեզ կամ Իմ հետևորդներին այս ժամանակ, եր չօգնեն Ինձ փրկել երկրի վրայի Իմ Եկեղեցին:
Սուրբ Խոստովանության, Մկրտության, Ամուսնության և Սուրբ Հողորդության խորհուրդները պետք է պահպանվեն: Նույնիսկ դրանց դժվար կլինի հասնել:

Իմ սրբազան սպասավորները, ովքեր սիրում են Ինձ, պետք է սկսեն նախապատրաստությունը հիմա: Շատ շուտով ձեզ կարգելեն այդպիսի ընծաներ տալ Աստծո զավակներին:
Նախապատրաստման ժամանակը եկել է:
Թույլ տվեք Ինձ առվորեցնել ձեզ, առաջնորդել և օգնել՝ բերելու Իմ Մնացորդ Եկեղեցին Դրախտի դարպասների մոտ:
Ձեր սիրող Հիսուս

Իմ Խոսքն Իմ Խոսքն է: Ոչ մի մարդ չի կարող պարտության մատնել Իմ Խոսքը, քանի որ այն փորված է քարի մեջ

Երկուշաբթի, 2 հուլիսի, 20212թ, երեկոյան ժ 06:00

Իմ սիրելի աղջիկ, կարևոր է, որ Իմ հետևորդները նման համբերատար:
Ապագան երբեք չպետք է շտապեցնել:
Իմ Հավիտենական Հոր կողմից որոշված պլանները կծավալվեն բնական կերպով՝

Աստվածային Նախախնամությանկողմից:
Ձեզ հատկացված ժամանակը՝ օգնելու Ինձ նախապատրաստել մարդկությանը Իմ Մեծ Գթասրտության համար, շատ թանկ է: Դա մի ժամանակ է, որի մեջ շատերը կփրկվեն ձեր աղոթքների միջոցով:
Իմ՝ ձեր սիրող Հիսուսի հանդեպ հույսը, հավատը և սերը կպահեն ձեզ ձեր առաքելության մեջ:
Երբ ականատես լինեք վայրագությունների ձեր առջև, երբ Ինձ պատվող ամեն ինչ ոչնչացվի, այդ ժամանակ կիմանաք, որ ժամանակը ավելի է մոտենում:
Դուք պետք է հիշեք, որ այս բաները պետք է կատարվեն, և որ ձեր պարտականությունը կռվել է ու թշնամուն դիմադրելը՝ որպես Իմ բանակի մաս:
Իմ Բանակը կհամալրվի Աստվածային Ընծաներով, և նա դրանցով կսրբի բոլոր նրանց, ովքեր խավարի մեջ են:
Նախապատրաստությունը ժամանակ է պահանջում: Աղոթքը ձեզ ավելի է մոտեցնում Իմ Սուրբ Սրտին և հեղեղում ձեր հոգիները թթվածնով, որի կարիքն այն ունի դիմանալու համար առջևում սպասվող մարտին:
Մինչ դուք ավելի եք ուժեղանում այն շնորհների միջոցով, որոնք Ես տալիս եմ ձեզ, ձեզ համար շատ հեշտ կլինի ճանաչել ձեր հակառակորդներին, ովքեր ատում են այն ամենն, ինչի կողմը Ես կանգնած եմ: Դա ձեզ ցավ կպատճառի, վիրավորանք և զայրույթ, բայց դուք պետք է միշտ արժանապատվությամբ մնաք Իմ Անվամբ:
Երբ ձեզ մարտահրավեր են նետում Իմ Անվամբ, դուք պետք է պատասխանեք սիրով:
Երբեք չփորձեք վերլուծել Իմ Պատգամները, քանի որ կարիք չկա այդպես անելու:
Իմ Խոսքն Իմ Խոսքն է: Ոչ մի մարդ չի կարող պաշտպանել Իմ Խոսքը, քանի որ այն փորված է քարի մեջ:
Ով էլ որ փորձի կոտրել Իմ Խոսքը կամ զրպարտանք նետել նրա վրա, կձախողվի, քանի որ նրանք անզոր են մ Սուրբ Խոսքի դեմ:
Հիմա, երբ ճանաչում եք Իմ Ձայնը, պետք է ճանաչեք այն ցավը, որը կարող եք ակնկալել կրելու, երբ հռչակեք Իմ Խոսքն այն ժամանակ:
Նշեք Իմ Անունն այսօր նույնիսկ այսպես կոչված քրիստոնյաների մեջ, և անհարմար լռություն կտիրի:
Բացահայտորեն խոսեք բարու և չարի մասին, և դուք ծաղրի կենթարկվեք:
Մատնանշեք, թե ինչպես կարող է մեղքը ոչնչացնել ձեր զավակներին, և ձեզ կհարցնեն. Ի՞նչ է մեղքը:
Այսօր շատերը չգիտեն թե ինչ է մեղքը: Շատերը մեղքն ընդունում են որպես նորմալ մաս, մի ընդունելի բնավորության գիծ, իրենց կյանքում:
Նրանք երջանիկ են մեղքին թողություն տալու, որովհետև դա նրանց տալիս է ազատությունը՝ հետապնդելու այլ հաճույքներ, պաշտելու կողծ աստվածների և բավարարելու իրենց ցանկությունները:
Ոչ, նրանք չեն ցանկանում լսել, քանի որ դա հարմար չէ իրենց:
Դուք, Իմ սիրելի հետևորդներ, կդիտվեք որպես կրոնի և Աստծո հանդեպ սիրով բռնված, որն այսօր կույրերի աչքում քիչ պտուղ է տալիս:
Ահա թե ինչու պետք է նախապատրաստվեք: Ահա թե ինչու պետք է ուժեղ լինեք: Հենց այդ հոգիների համար է,որ դուք պետք է աղոթեք և օգնեք Ինձ փրկել:
Ժամանակի կորուստ է թույլ տալ, որ այդպիսի հոգիները վրդովվեցնեն ձեզ, վիրավորեն կամ ցավ պատճառեն:
Պատասխանեք սիրով և վեհ լռությամբ:
Երբեք մի վախեցեք Ինձ հռչակելուց, բայց նաև երբեք մի պարտադրեք Ինձ հոգիներին

այնպիսիձևով, որ նրանք հեռու փախչեն ձեզնից: Դրա փոխարեն բերեք նրանց Ինձ մոտ ձեր աղոթքների և տառապանքների միջոցով:
Ես օրհնում եմ ձեզ, Իմ ուժեղ, քաջ բանակ:
Ես սիրում եմ ձեզ:
Ես քայլում եմ ձեզ հետ յուրաքանչյուր քայլը, որը դուք կատարում եք՝ Ինձ հոգիներ բերելու համար:
Ձեր սիրող Հիսուս Քրիստոս

Ամենավատ տառապանքը հոգևոր դատարկությունն է, երբ չեք կարողանում զգալ մեկ ունցիա սեր Իմ՝ ձեր սիրող Հիսուսի հանդեպ

Երեքշաբթի, 3 հուլիսի, 2012թ, երեկոյան ժ 08:00

Իմ սիրելի աղջիկ, երբ Ես ուղարկում եմ քեզ այնպիսի փորձություններ ինչպես հոգևոր չորությունը, դու պետք է սովորես ճանաչել դրանք որպես այդպիսին:
Դու պետք է նաև ընդունես, որ երբ դիմանում ես հոգու այդպիսի չորությանը, ուրեմն դա ինչ-որ նպատակի համար է: Նպատակը հոգիներ փրկելն է այդպիսի տառապանքի միջոցով:
Շատ զոհաբերվող հոգիներ հավատում են, որ տառապանքը երկուսից մեկն է: Առաջինը, կա աֆիզիկական տառապանք, որը կամովին առաջարկվում է Ինձ որպես ընծա՝ փրկելու համար միլիոնավորների կյանքը:
Դրանից հետո, ամենավատ տառապանքը հոգևոր դատարկությունն է, ուր չեք կարողանում զգալ մեկ ունցիա սեր Իմ՝ ձեր Հիսուսի հանդեպ, ուր աղոթքի ոչ մի քանակություն ձեզ չի բաց թողնում լքվածության բանտից:

Որքան էլ փորձեք, աղոթքը կդառնա տառապալից:

Որքան էլ կփորձեք սեր և կարեկցանք զզգալ Իմ հանդեպ՝ կպայքարեք:
Սա հոգևոր լքվածության մի ձև է, որտեղ Ես այնքան հեռու եմ թվում, որ այլևս չեք կարղանում հասնել Ինձ:
Բայց դուք չգիտեք հետևյալը:

Սա մի ընծա է՝ մի շնորհ՝ Իմ կողմից: Այնձեզ բարձրացնում է վեր Իմ աչքում, և փորձություններն ու տառապանքը, որ կրում եք, թույլ է տրվում Իմ կողմից ձեր առատաձեռն ու մաքուր սիրո պատճառով՝ փրկելու սևացած հոգիներին:
Դա կարող է անարդար թվալ, բայց որքան ավելի եք մոտենում Իմ Սուրբ Սրտին, այնքան ավելի շատ եք կրում Իմ սեփական հալածանքը մարդկության մեղքերի պատճառով:
Միայն նրանք, ովքեր մաքուր խոնարհ սիրտ ունեն, իրենց անձի հանդեպ ոչ մի անձնական կախվածություն, երբ նրանք Ինձ դնում են այն ամենից առաջ, ինչ այս երկրից է, կարող են դիմանալ Իմ ցավին:
Այդպիսի հոգիները զգուշորեն ընտրված են Իմ կողմից, կաշխատեն Ինձ հետ, իրենց տառապանքի ընծայի միջոցով, օգնելու Ինձ Իմ Փրկության պլանի մեջ:

Երբեք չվախենաս, աղջիկս, թե Ես այդտեղ չեմ: Դու կարող է չզգաս Իմ ներկայությունը, չտեսնես Ինձ կամ Իմ հանդեպ խորը սեր չզգաս, ինչպես սովորաբար զգում ես, բայց Ես քո կողքին եմ:
Միշտ վստահեք Ինձ, Իմ սիրելի հետևորդներ, նույնիսկ այն ժամանակ, երբ դժվարանում եք աղոթել:
Վստահեք Ինձ, երբ տենչում եք Ինձ, որը չի կարող բավարարվել կամ հագեցվել, անկախ նրանից, թե որքան շատ եք փորձում հաղորդակցվել Ինձ հետ:
Իմացեք, որ երբ դա տեղի է ունենում, որ Ես շատ ավելի մոտիկ եմ, քան հասկանում եք:
Իմացեք, որ այդ ժամանակ է, որ Ես ձեզ վեր եմ բարձրացնում, որ դառնաք ճշմարիտ զինվոր, ճշմարիտ մարտիկ Իմ մարտում՝ հոգիներ փրկելու համար:
Ես սիրում եմ ձեզ: ԵՐբեք տեղի չտաք: Երբեք չգաք ձեզ հուսախաբված, քանի որ Ես միշտ քայլում եմ ձեզ հետ:
Կգա օրը, երբ տառապանքը կմոռացվի: Դրա փոխարեն կլինի մի ուրախություն, որը կմխրճվի աշխարհի մեջ և որը հնարավոր կլինի միայն Աստծո բոլոր զավակների համար ձեր կատարած զոհողությունների պատճառով, ովքեր ձեր կարիքն ունեն:
Ձեր Հիսուս

ԿՈույս Մարիամ. Ինչ էլ որ պատահում է աշխարհում, զավակներս, դուք պետք է իմանաք, որ Հայր Աստվածն է հրամանատարը

Չորեքշաբթի, 4 հուլիսի, 2012թ

Զավակս, նրանք, ովքեր ականատես են եղել երկրի վրա Իմ երևումների հրաշքներին, կիմանան, որ շուտով կանխասացված գաղտնիքների և մարգարեությունների ժամանակը կսկսվի:
Զավակներս, արդեն որոշ ժամանակ է, ինչ Ես Ինձ հայտնի եմ դարձրել աշխարհում՝ օգնելու համար ձեզ նախապատրաստվել Իմ Որդու փառահեղ վերադարձին:

Իմ Որդին նախապատրաստում է ձեզ բոլորիդ տեսանողների և մարգարեների միջոցով, որպեսզի արժանի լինեք ստանալու հավիտենական կյանքի Նրա Ընծան:
Դուք երբեք չպետք է վախենաք ապագայից, եթե հավատում եք Իմ Որդուն, որովհետև Նա Կյանքի Հացն է, և դուք կունենաք հրաշալի նոր ապագա:
Ինչ էլ որ պատահի աշխարհում, զավակներս, պետք է իմանաք, որ Սմենաբարձրյալ Աստծո հրամանատարության տակ է:
Օձը քիչ զորություն ունի Իմ Հոր դեմ:
Օձի զրությունն ուժեղացնում են միայն նրանք, ովքեր դառնում են մեղքի և գայթակղությունների զոհ, որոնք նա դնում է ն բանց ճանապարհին:
Մարդը դառնում է բանտարկյալ, երբ մեղք է գործում, որովհետև Իմ Հոր հանդեպ մյուս մեղքերին ու վիրավորանքներին դիմադրելու ուժը թուլանում է:
Հետո նա շարունակում է մեղանչել, մինչև որ նրան ողողում է մի այնպիսի թանձր խավար, որ նա չի կարողանում փախչել դրանից որքն էլ փորձի:
Զավակներս, հիմա դուք պարտավոր եք, Իմ Որդու հանդեպ սիրուց ելնելով, օգնել այդ խեղճ հոգիներին:

Միայն դուք կարող եք օգնել նրանց, որովհետև շատերն ի վիճակի չեն լինի օգնել իրենք իրենց:
Դուք այն զինվորներն եք, որոնց կարիքն ունի Իմ Որդին այս ժամանակ: Նրա հանդեպ ձեր ունեցած սիրո միջոցով է, որ Նա շնորհներ կհեղի կորած հոգիների վրա, երբ դուքՆրա օգնությունը խնդրեք ձեր աղոթքների միջոցով:
Ահա մեղավորներին փրկելու համար խաչակրաց արշավանքի աղոթքը:

Խաչակրաց արշավանքի աղոթք (64) փրկիր իմ եղբայրներին և քույրերին

Ոհ, իմ սիրելի Փրկիչ Հիսուս Քրիստոս

Ընդունիր աղոթքի և զոհողության իմ ընծան՝ օգնելու համար փրկել իմ եղբայրներին և քույրերին այն խավարի բանտից, որի մեջ նրանք գտնվում են
թույլ տուր ինձ օգնել՝ փրկելու նրանց հոգիները

Ես աղերսում եմ Քեզ, որ ներես նրանց իրենց մեղքերը և խնդրում եմ
որ ողողես նրանց հոգիները Սուրբ Հոգով, այնպես որ նրանք
ընկնեն Քո բազուկների մեջ, որպես այն ապաստանը, որի կարիքը նրանք ունեն
այնքան հուսահատ կերպով, նախքան ընդմիշտ կկորչեն,
ես իմ կամքն եմ հանձնում Քեզ որպես ընծա խոնարհ սպասավորությամբ և շնորհակալությամբ:
Ամեն:

Զավակներս, դուք մեկ եք Իմ Որդու հետ:
Ձեր սերը մեծ սփոփանք է բերում Նրան, և ձեր զոհողություններն ու աղոթքները կօգնեն Նրան բերելու ողջ մարդկությանը դեպի երկրի վրա Նրա Նոր Դրախտի ապահովությունը:
Միայն այդ ժամանակ կարող է Ամենաբարձրյալ Աստծո Սուրբ Ընտանիքը վերամիավորվել և ապրել խաղաղության մեջ ընդմիշտ:

Ձեր սիրող Մայր
Մայր Փրկության

Հայր Աստված. Ոչ մի մարդ, որքան էլ փորձի, չի կարող բացատրել, թե Ես ինչպես ստեղծեցի տիեզերքը կամ մարդկությունը, քանի դա անհնար է

Հինգշաբթի, 5 հուլիսի, 2012թ, ցերեկվա ժ 03:30

Իմ սիրելի աղջիկ, օգնիր Ինձ իմ վշտի մեջ, մինչ Ես սգում եմ Իմ այն բոլոր զավակների համար, ովքեր մերժում են ընդունել, որ Ես գոյություն ունեմ:
Որքան եմ Ես տենչում նրանց:
Որքան եմ Ես ողբում նրանց խեղճ հոգիների համար:
Այնքան խելացի և խելոք մարդկային հասկացողությամբ, նրանք չեն կարողանում

ընկալել Ճշմարտությունը, թե ով Եմ Ես:
Ես սկիզբն եմ:
Ես արարիչն եմ ամեն եղածի:
Ես նրանց Հայրն եմ, չնայած նրանք մերժում են Ինձ:
Եթե նրանք միայն տեսնեին Ճշմարտությունը:
Եթե նրանք Ինձ թույլ տային միայն դիպչել իրենց սրտին, որպեսզի Ես կարողանայի նրանց ցույց տալ Իմ հրաշալի և փառահեղ պլանները, որոնք սպասում են նրանց:
Այդ հոգիներից շատերը չեն ճանաչում Ինձ ոչ իրեմց սեփական մեղքով:
ԱՅդ հոգիներին ցույց կտրվի Ճշմարտությունը, որպեսզի նրանք ընտրեն Իմ Ուղին:
Հետո, նրանք, ում կտրվի Ճշմարտությունը, բայց ովքեր թույլ կտան որպեսզի մարդկային պատճառաբանությունն ու մարդկային ինտելեկտի փառանումը կուրացնի իրենց, արդեն կորած կլինեն Ինձ համար:
Այդպիսի հոգիներից շատերը դարձի կգան, բայց շատերը կմերժեն Իմ սիրելի Որդու կողմից նրանց տրվող **Փրկության Գավաթը**:
Իմ արցունքները հոսում են այս ժամանակ, և Ես խնդրում եմ որ բերեք նրանց Ինձ մոտ Իմ Որդու Աստվածային Գթասրտության միջոցով:
Այդ հոգիներից այնքան շատերը, ներառյալ երիտասարդները, արհամարհաբար և հրապարակայանորեն մերժումեն Ինձ, որպեսզի ցույց տան ուրիշներին թե իրենք որքան խելոք են:
Մարդկային ինտելեկտի հանդեպ չափազանցված հարգանքը գայթակղություն է, որը Իմ զավակների հոգիների մեջ է մտցրել Իմ թշնամին:
Գազանը խժռում է Իմ զավակների հոգիները, իսկ նրանք գաղափար չունեն, թե նա ինչ է անում իրենց հետ:
Այնքան շատ ընկած հրեշտակներ են մարդկությանը համոզում, թե մարդկային ինտեկետը անթերի է:
Երբ մարդկությունը հավատում է, կամ համոզում ինքն իրեն, թե գիտի Արարչության Աստվածային Օրենքը, ապա նա ընկել է խաբեության թակարդի մեջ:
Ոչ մի մարդ, որքան էլ փորձի, չի կարող բացատրել, թե Ես ինչպես ստեղծեցի տիեզերքը կամ մարդկությունը, քանի որ դա անհնար է:
Ե՞րբ կհասկանան նրանք:
Ե՞րբ կտեսնեն նրանք, որ Իմ այն զավակները, մաքուր, խոնարհ, պարզ հոգիները, ովքեր ընդունում են Ինձ, հասկանում են պարզ Ճշմարտությունը:
Նրանք ապացույցի կարիք չունեն, որովհետև զգում են Իմ Սերը իրենց մաքուր սրտերում, որոնք նրանք թողնում են բաց, որպեսզի Ես կարողանամ ողողել իրենց հագիները Աստվածային Շնորհներով:
Ես ձեր Աստվածն եմ, ձեր Արարիչը և ձեր Բնական Հայրը:
Իմ զավակները պետք է գան Ինձ մոտ Իմ սիրելի Որդու և իրենց սեփական ազատ կամքի միջոցով: Ես չեմ կարող ստիպել նրանց:
Ձեզ, զավակներս, ուժ է տրվել, օգնելու համար փրկել նրանց հոգիները:
Ձեզ բոլորիդ, ովքեր արձագանքում են Իմ աղերսին՝ աղոթքի և զոհողության միջոցով փրկելու ձեր եղբայրներին և քույրերին, կտրվեն հատուկ շնորհներ:
Իմ զորությունն անսահման է:
Իմ հրաշքները, Իմ զավակների տառապանքի և աղոթքների հետ միասին, կօգտագործվեն փրկելու համար կորած հոգիներին հավիտենական մահից:
Ես սիրում եմ ձեզ Իմ սիրելի զավակներ:
Եկեք և օգնեք Ինձ միավորել Իմ փայփայած ընտանիքը և օգնեք Իմ Ո Ր դուն

պարտության մատնել գազանին, նախքան նա կգողանա ավելի շատ Իմ զավակներից:
Ձեր սիրո Հայր
Աստված Ամենաբարձրյալ

Երկրի մեկ երրորդը կոչնչանա, մինչ հրեշտակները կրակ կթափեն Երկնքի չորս անկյուններից

Ուրբաթ, 6 հուլիսի, 2012թ, ցերեկվա ժ 04:15

Իմ սիրելի աղջիկ, ժամանակ է տրվել, որպեսզի աշխարհին տրվող Իմ այս Սուրբ Պատգամները լսվեն յուրաքանչյուր հոգու կողմից՝ ծեր, երիտասարդ, յուրաքանչյուր ազգի մեջ:
Աստծո զավակներից շատերը կնստեն և կլսեն Իմ հրահանգներին, եթե նրանց հնարավորություն տրվի ծանոթանալ այս պատգամներին:
Իմացեք հիմա, որ փոփոխություններն արդեն սկսվել են ինչպես կանխասացվել է, երբ ցանքսերն այլևս բերք չեն տա ինչպես նախկինում և երբ եղանակներն այլևս առաջվա նման չեն լինի:
Այս փոփոխությունները Իմ Հավիտենական Հոր Ձեռքով են, մինչ Նա ներմուծում է երկրի նոր օրենքները, որը կնկատեն բոլոր մարդիկ:
Աշխարհում ոչ մի բան բնության օրենքներից չի մնա այնպես ինչպես եղել է:
Ծովերը կբարձրանան, ջրերը դուրս կհորդեն, երկիրը կցնցվի և հողը կդառնա անպտուղ:
Իմ Հայրը մի մեծ երկնային պատիժ կուղարկի՝ դադարեցնելու համար մեղքի տարածումը, որը մեծ վշտի ակունք է Նրա համար:
Այն ազգերը, որոնք արհամարհում են Նրա Օրենքները, ամենաշատը կտառապեն:
Շուտով նրանք կհասկանան, որ իրենց մեղքերն այլևս անհանդուրժելի են, և իրենք կպատժվեն:
Նրանց պատիժը արգելելու համար է, որ վարակեն այլ հոգիների, և եթե նրանք չփոխեն իրենց չար ուղիները, ապա նրանց կստիպեն փոխել դրանք աստվածային միջամտության միջոցով:
Աղջիկս, դու պետք է արագորեն տարածես Իմ Խոսքը հիմա, մինչ Նախազգուշացումն ավելի է մոտենում:
Շատ ազգերի պետք է տրվի Ճշմարտության Գիրքը, որպեսզի նարնք կարողանան նախապատրաստվել Իմ Երկրորդ Գալուստին:
Իմ Երկրորդ Գալուստի ժամանակը կլինի Նախազգուշացումից հետո:
Երկնային պատիժները, որորնք ներքև են իջեցվում հրեշտակների ձեռով Իմ Հոր հրամանով, սկսվել են էտապներով: Դրանք կշարունակեն աճել, մինչ մեղքը կշարունակի առաջ գնալ:
Մարտը սկսվել է, և դրա առաջին էտապները տեսանելի են շատ երկրներում:
Դուք բոլորդ ականատես կլինեք կլիմայի ավերման, որը կանձրևի երկրի վրա քանի որ ցավից տնքում է մեղքի հետևանքով անկման պատճառով:
Ցնցումները կավելանան, և ազգ ազգի ետևից կտառապի մեղքի այն աստիճանին համապատասխան, որը քայքայում է նրա միջուկը:
Այն առաջնորդները, ովքե հետևում են հակա-Քրիստոսին, չեն խուսափի Իմ Հոր աչքից և կկործանվեն:

Իմ Հայրը պատժում է նրանց, ովքեր հիմա առաջնորդում են չար կառավարությունների, որպեսզի փրկի Իր զավակներին նրանց չար ճանկից:
Նա ետ չի կանգնի և դիտի, թե ինչպես են այդ առաջնորդները, որ հետևում են հակա-Քրիստոսին ով թաքնված է մնում այս ժամանակ, ոչնչացնում Իր զավակներին:
Երկրի մեկ երրորդը կկործանվի մինչ հրեշտակները կրակ կհեղեն Երկնքի չորս անկյուններից:
Այդ ժամանակ շատերը կհասկանան, որ ինչ-որ բան սխալ է, և որ դա Իմ Հոր զայրույթի պատճառով է:
Չնայած դրան, շատերը դեռևս չեն իմանա: Նախազգուշացումից հետո շատերը դարձի կգան: Սակայն շատերն էլ դարձի չեն գա նույնիսկ այն ժամանակ, երբ բոլորին կտրվի նրանց հոգու վիճակի ապացույցը:
Նրանք կշարունակեն կռապաշտել այն կեղծ հմայքը, որն իրենց կարծիքով երկիրն ունի առաջարկելու: Միայն թե այս անգամ նրանց ագահությունն ու նյութական պաշտամունքը կդառնա ավելի գռեհիկ ու չար: Նրանց բոլոր մեղքերը, որոնք տեսանելի կլինեն բոլոր նրանց, ովքեր կարող են տեսնել դրանք ինչպիսին որ կան, այնքան տգեղ կդառնան, որ Աստծո զավակներից քչերը կկարողանան դիմանալ նայելու դրանց:
Յուրաքանչյուր ատելի մեղք հրապարակայնորեն կցուցադրվի Աստծո հանդեպ եղած արհամարհանքով:
Յուրաքանչյուր գործողություն կայլասերի մեղավորին այնպիսի խորությամբ, որ նրանք իրենց կպահեն կենդանիների պես:
Մարդկային մարմնի հանդեպ ամեն հարգանք կանհետանա, և ամեն պղծություն ի ցույց կդրվի աշխարհին տեսնելու համար, առանց իրենց հոգում ամոթի:
Դրանք սՍատանայի գերիներն են: Նրանք բոլոր էլ Աստծո զավակներն են, բայց իրենց հոգին կկորցնեն գազանին:
Երկնային պատիժները երկիրը մաքրելու Աստծո պլանների մի մասն են՝ մաքրագործելու համար թե մեղավորին, և թե այն հողը որի վրա քայլում եք:
Միայն այն ժամանակ, երբ երկիրը մաքրագործվի, միայն այդ ժամանակ կարող է տեղի ունենալ Իմ Երկրորդ Գալուստը:
Քողոթեք, իմ հետևորդներ, արիության և տոկունության համար, որ կարողանաք գործ ունենալ այդ պատիժների հետ:
Դուք երբեք չպետք է վախենաք դրանցից, քանի որ դուք, Իմ բանակ, կաղոթեք այդ ազգերի համար և կօգնեք այն մաքրագործման գործում, որն անհրաժեշտ է մարդկության դարձի համար:
Կենդանի Աստծո Կնիքը կպաշտպանի ձեզ բոլորիդ և ձեզանից յուրաքանչյուրին:
Իմ Հայրը պետք է պատժի նրանց Իր բոլոր զավակների հանդեպ ունեցած սիրո պատճառով, քանի որ եթե Նա չանի դա, ապա նրանք առաջ կգնան, առանց հասկանալու, դեպի Դժոխքի դարպասները:
Ձեր Հիսուս

Նրանք կարող են չլսել, բայց նրանց պետք է տրվի Աստծո Խոսքը

Շաբաթ, 7 հուլիսի, 2012թ, ցերեկվա ժ 03:30

Իմ սիրելի աղջիկ, երբ Ես խնդրում եմ մարդկությանը լսել Իմ Ձայնը, Ինձ վիրավորում է այն, որ նրանք ովքեր սիրում են Ինձ, ասում են թե Ես երբեք չեմ խոսի այս ձևով: Եթե միայն նրանք լսեն, ապա Իմ Սիրտը վեր կբարձրանա, և այնքան շատ հոգիներ կփրկվեն:
Իմ Երկրորդ Գալուստի համար նախապատրաստությունը տրվում է Իմ Աստվածային Շուրթերից այս պատգամների միջոցով:
Իմ Ծննդյան համար նախապատրաստությունը նույնպես հայտնվել է նախօրորք մարգարեների միջոցով՝ զգոնացնելու համար Աստծո զավակներին Մեսիայի գալստյան համար:
Ինչու՞ են Իմ առաքյալները երկրի վրա մերժում ընդունել, որ Իմ Հայրը կուղարկի Իր մարգարեներին Իմ Երկրորդ Գալուստն ազդարարելու համար:
Որքան քիչ գիտեն նրանք այն ձևի մասին, որով Իմ Հավիտենական Հայրը նախապատրաստում է մարդկությանը մեծ իրադարձությունների համար:
Իմ հոգևորականությունը՝ Իմ սրբազան սպասավորները, պետք է լսեն Իմ կանչը հիմա, քանի որ Ես նրանց օգնության կարիքն ունեմ: Չնայած դրան, շատերը չեն պատասխանի: Նրանք կմերժեն Ինձ Իմ պատգամների միջոցով:
Նրանք կհասկանան ճշմարտությունը, բայց միայն այն ժամանակ, երբ չափազանց ուշ կլինի:
Աղջիկս, երբեք չվախենաս հրապարակել Իմ պատգամները, ներառյալ նրանք, որոնք քո կարծիքով տարօրինակ կամ վախեցնող են:
Նրանք կարող են չլսել, բայց նրանց պետք է տրվի Աստծո Խոսքը:
Մարդը չէ, որ պետք է թելադրի քեզ դադարեցնել Աստծո Խոսքը հայտնելուց:
Փակիր ականջներդ և անտեսիր կարծիքի արհամարհանքը, քանի որ այն կարևոր չէ: Ձեզանից նրանց, ովքեր իրենց քրիստոնյա են կոչում և ովքեր վիրավորանքներ են հեղում Իմ պատգամի վրա, Ես ասում են հետևյալը.
Իմ խոսքը մասնատելով, Իմ պատգամները վիրավորական գտնելով և Իմ Խոսքը ծաղրելով դուք կտրել եք այն լարը, որը կապում է ձեզ Իմ սրտին:
Դուք չեք կարողանում ընդունել Իմ պատգամները, որովհետև կարծում եք թե ճանաչում եք Ինձ և ճանաչում եք Իմ խոսքերը երբ դրանք ասվում են: Դուք խաբեբայի զոհն եք դարձել, ով կուրացնում է ձեզ Ճշմարության հանդեպ:
Ես կոչ եմ անում բոլորիդ, մեկ անգամ ևս, կանչել Ինձ՝ ձեր սիրող Հիսուսին, և թույլ տալ Ինձ բացելու ձեր սրտերը:
Թույլ տվեք Ինձ լցնել ձեզ Սուրբ Հոգու զորությամբ, որպեսզի ճանաչեք Ինձ:
Քահանաներին. Ես կոչ եմ անում ձեզ հասկանալ, որ եկել է ժամանակը Դանիելի մարգարեությունների կատարվելու համար, և Հայտնության Գրքի Կնիքների բացման համար՝ Իմ՝ Աստծո Գառան կողմից:
Հիշեք Իմ Խոստումը:
Ես կգամ նորից՝ դատելու համար կենդանիներին և մեռածներին:
Իմ խոստումը՝ բերելու հավիտենական կյանք բոլոր նրանց, ովքեր հավատարիմ են Ինձ, պատրաստ է կատարվելու:
Դուք պետք է վստահանաք, որ համապատասխան ձևով եք նախապատրաստվել այդ Փառահեղ Իրադարձությանը:
Ձեր Հիսուս

Զգուշացեք: Նոր համաշխարհային կրոնը արտաքինից լավ և սուրբ կազմակերպություն կթվա՝ լի սիրով և կարեկցանքով

Կիրակի, 8 հուլիսի, 2012թ, երեկոյան ժ 05:17

Իմ սիրելի աղջիկ, մեծ հավատուրացությունը, որի մասին Ես խոսել եմ, հիմա տարածվում է աշխարհում:
Այս անգամ այն տարածվում է ինչպես քող երկրի վրայի Իմ Սուրբ Եկեղեցու վրա և պարուրում նրա տեսողությունը խիտ մառուխուղի պես:
Սա Իմ Եկեղեցու բաժանման ժամանակն է երկու մեծ բանակների:
Մի կողմում կլինեն Իմ սիրելի սրբազան սպասավորները, ովքեր հետևում են Իմ ուսուցումներին և երբեք չեն շեղվում դրանցից:
Մյուս կողմում՝ այն քահանաները և Իմ քրիստոնյա եկեղեցիների մյուս առաջնորդները, ովքեր կրում են ժամանակակից կյանքի ազդեցությունը և ովքեր կսրբապղծեն Իմ Օրենքները:
Նրանք խոնարհվում են մարդկանց ճնշման առջև, ովքեր պահանջում են իրենցից հանդուրժողականություն ցույց տալ Աստծո անվամբ՝ փոխելով Աստծո Օրենքները՝ հարմարեցնելու համար դրանք իրենց սեփական պահանջներին:
Նրանք լի են հպարտությամբ, մեծամտությամբ և աշխարհիկ նկրտումներով: Նրանց համար նշանակություն չունի եթե փոխեն Սուրբ Խորհուրդները՝ հարմարեցնելու համար դրանք մեղավոր նպատակների:
Ոչ, նրանք կուժեղացնեն սրբապղծության գործողությունները, որոնք կկատարվեն Իմ Հոր Եկեղեցում, և այդ ամենը՝ քաղաքացիական իրավունքների և հանդուրժողականության անվամբ:
Նրանք թողություն կտան մեղքին և կվիրավորեն Ինձ՝ ցուցադրելով այդպիսի մեղքերը Իմ Սուրբ Խորանների առջև՝ ակնկալելով որ Ես կուլ տամ այդպիսի չար ստեր:
Շուտով նրանք կպղծեն Խորհուրդները՝ բոլորին հարմարվելու համար:
Դրանց փոխարեն անց կկացվեն տոնախմբություններ և զվարճանքի այլ տեսակներ:
Այն կդառնա Նոր Աշխարհի Եկեղեցի, որը վեր կբարձրանա որպես մի ազդեցիկ կառույց Հռոմում, բայց որը չի պատվի Աստծուն:
Այն կկառուցվի գաղտնի սատայական սիմվոլներով այնպես, որ բոլորը տեսնեն, և կկռապաշտի գազանին:
Իմ սիրելի Հոր համար ատելի յուրաքանչյուր մեղք հրապարակայնորեն պատվի կարժանանա, և միլիոնավոր մարդիկ նրանց սրբապղծության օրենքները կընդունեն որպես արժեքավոր Աստծո Աչքերում:
Իմ սրբազան սպասավորները, ովքեր կմնան Ինձ հավատարիմ, ստիպված կլինեն գաղտնի կատարել Պատարագներ, այլապես կբանտարկվեն:
Նրանք կհավաքվեն զորությամբ և, լցված Սուրբ Հոգով, կշարունակեն սնել Աստծո զավակներին Կյանքի Սնունդով:
Նրանք պետք է համոզվեն, որ բոլոր նրանց, ում իրենք առաջնորդում են, առաջարկվի Կենդանի Աստծո Կնիքի պաշտպանությունը:
Ժամանակը շատ մոտ է հիմա, որ Նոր Տաճարը կառուցվի ի պատիվ Գազանի:

Այն կկառուցվի հակաքրիստոսի բռնապետության ներքո, ով կարճ ժամանակից կմտնի աշխարհի թատերաբեմ որպես խաղաղության մարդը:
Համախմբվեք,Իմ հետևորդներ, որքան կարող եք շուտ: Իմ սպասավորները, ովքեր ճանաչում են Իմ Ձայնը, պետք է սկսեն իրենց նախապատրաստությունները՝ վստահանալու համար, որ երկրի վրայի Իմ Եկեղեցի կկարողանա զորությամբ դիմանալ գալիք հալածանքին:
Ժամանակի ընթացքում ապաստարանները պատրաստ կլինեն օգտագործելու համար, քանի որ որոշ ժամանակ է, ինչ Ես հրահանգում եմ Իմ հետևորդներին վստահանալու, որ դրանք կծառայեն ձեր նպատակներին:
Այդ հալածանքը կարճ կտևի, և դուք կհաղթահարեք կանցնեք դրա միջով, չնայած այն ցավոտ կլինի:
Զգուշացեք: Նոր Համաշխարհային կրոնը արտաքինից կթվա մի լավ և սուրբ կազմակերպություն՝ լի սիրով և կարեկցանքով:
Այն կցուցադրի հոյակապ հանդուրժողականություն և կփառաբանի Աստծուն հայտնի ամեն մեղք: Այն կշրջի յուրաքանչյուր մեղք այնպես, որ այն ընդունելի կթվա Աստծո Աչքում:
Բայց դուք պետք է իմանաք, որ այդպիսի սրբապղծություններից Ես նողկում եմ, և վայ նրանց, ովքեր կհետևեն դեպի հավիտենական դատապարտություն տանող այդ վտանգավոր ուղուն:
Մեղքը միշտ կմնա որպես մեղք Իմ Աչքում:
Ժամանակը չի փոխում դա: Նոր օրենքները, որոնք մարդու մեղսավոր ցանկություններին հարմարվելու համար են, երբեք չեն ընդունվի Իմ կողմից:
Նախապատրաստվեք հիմա այդ մեծ խաբեությանը, քանի որ այն տեղի կունենա շատ շուտով:
Ձեր Հիսուս

Աշխարհում կենդանի բոլոր մարդիկ կտեսնեն իրենց հոգիները և շատերն առաջին անգամ կիմանան, որ իրենք հոգի ունեն

Երկուշաբթի, 9 հուլիսի, 2012թ, երեկոյան ժ 11:00

Իմ սիրելի աղջիկ, Ես ցանկանում եմ հիմա նախապատրաստել Իմ բոլոր սիրելի հեետևորդներին մի այն պիսի ձևով, որը Նախազգուշացման ընթացքում կօգնի ոչ միայն նրանց, այլև բոլոր նրանց սիրելիներին:
Բավական չէ ապաշխարել միայն վախի պատճառով: Ձոջում /հատուցում/ է պահանջվում:
Իմ բոլոր հետևորդներին. Լսեք հիմա Իմ հրահանգները՝ նախապատրաստելու համար ձեր հոգիները Նախազգուշացմանը:
Դուք պետք է սկսեք՝ մտորելով ձեր և ձեր մերձավորների դեմ կատարած այն ամբողջ վատության մասին, որում մեղավոր եք:
Ձեզնից նրանք, ովքեր կաթոլիկներ են, պետք է կատարեք Խոստովանության Խորհուրդը յուրաքանչյուր երկու շաբաթը մեկ, եթե ցանկանում եք մնալ Շնորհի վիճակում:

Այս կերպ ձեր ցավը մեղմ կլինի Նախազգուշացման ընթացքում, և դուք ուժ կունենաք օգնելու ձեր եղբայրներին և քույրերին, ովքեր կտառապեն սարսափելի ցավով և մեղավորությամբ մինչ կփորձեն ըմբռնել իրենց գիտակցության լուսավո րմը:
Ձեզնից նրանք, ովքեր քրիստոնյաներ են կամ այլ հավատամք ունեն, և հավատում եք այս պատգամներին, դուք պետք է ասեք Խաչակրաց արշավանքի 24-րդ աղոթքը՝ մեղքերի ամբողջական թողության համար:
Դուք պետք է ասեք այդ աղոթքը յոթ օր շարունակ, և Ես՝ Հիսուսը, ձեզ ներում կշնորհեմ:

Ով Իմ Հիսուս, Դու երկրի Լույսն ես

Դու այն բոցն ես, որ դիպչում է բոլոր հոգիներին

Քո գթասրտությունն ու սերը սահման չեն ճանաչում

ՄԵՆՔ արժանի չեն այն զոհաբերությայնը, որը Դու կատարեցիր խաչի վրա

Սակայն գիտենք, որ մեր հանդեպ Քո սերն ավելի մեծ է, քան այն սերը որը մենք ունենք Քո հանդեպ

Տուր մեզ, ով Տեր, խոնարհության ընծան, որ արժանի լինենք Քո Նոր Թագավորությանը

Լցրու մեզ Սուրբ Հոգով, որ կարողանանք առաջ գնալ և առաջնորդել Քո բանակը

Քո Սուրբ Խոսքի ճշմարտությունը հռչակելու և մեր եղբայրներին ու քույրերին նախապատրաստելու համար

Երկիր վրա Քո Երկրորդ Գալուստի փառքի համար

Մենք պատվում ենք Քեզ

Մենք գովաբանում ենք Քեզ

Մենք առաջարկում ենք մեր անձը, մեր վշտերը, մեր տառապանքները՝ որպես ընծա Քեզ, հոգիներ փրկելու համար

ՄԵՆՔ սիրում ենք Քեզ, Հիսուս

Գթա Քո բոլոր զավակներին, որտեղ էլ որ նրանք լինեն:

ԱՄԵՆ:

Հիմա Ես ձեզ տալիս եմ նաև մի յուրահատուկ աղոթք, որ ասեք այն խեղճ հոգիների համար, ովքեր կմահանան շոկից Նախազգուշացման ընթացքում և ովքեր կլինեն մահացու մեղքի մեջ.
Խաչակրաց արշավանքի աղոթք (65) մահացու մեղքի մեջ գտնվողների համար

Ով սիրելի Հիսուս, մարդկության Փրկիչ
Քո Աստվածային Գթասրտությամբ ես աղերսում եմ անհիշաչարություն այն բոլոր խեղճ հոգիների համար, ովքեր կվերցվեն այս երկրից Նախազգուշացման ընթացքում, Ներիր նրանց իրենց մեղքերը, և ի հիշատակ Քո Տառապանքի ես աղերսում եմ Քեզ որ շնորհես ինձ այս յուրահատուկ շնորհը ի հատուցում նրանց մեղքերի. Ես առաջարկում եմ Քեզ իմ անձը՝ մտքով, մարմնով և հոգով որպես հատուցում փրկելու համար նրանց հոգիները և նրանց հավիտենական կյանք տալու համար:
Ամեն:
Իմ հետևորդներ, Նախազգուշացումը կլինի Փրկության մի մեծ իրադարձություն, ուր Ես աշխարհին կապացուցեմ Իմ Աստվածային Գթասրտությունը:
Աշխարհում կենդանի բոլոր մարդիկ կտեսնեն իրենց հոգիները, և շատերն առաջին անգամ կիմանան, որ հոգի ունեն:
Ժամանակը կարճ է հիմա, և դուք պետք է սկսեք նախապատրաստվել:
Մի մոռացեք Իմ հրահանգները՝ ունենալ սնունդ, որը կհերքի տաս օրվա համար, օրհնված մոմեր և սուրբ իրեր ձեր տներում:
Վստահեք Ինձ և ուրախացեք, որովհետև շատ հոգիներ կփրկվեն:
Ես ամսաթիվ չեմ բացահայտի, բայց դուք գիտեք, թե ինչ պետք է արվի:
Երբ ձեր մեղքերը բացահայտվեն, դուք պետք է խնդրեք Ինձ ներել ձեզ և խոնարհ շնորհակալությամբ խոնարհվել այդ Աստվածային Ընծայի համար, որը ձեր անձնագիրն է դեպի հավիտենական կյանքը Երկրի վրա Նոր Դրախտում:
Հիշեք, ոչ մի մեղք չկա, որքանէլ այն լուրջ լինի, որը հնարավոր չլինի ներել, եթե ճշմարատ զղջում եք դրա համար:
Ձեր սիրող Փրկիչ
Հիսուս Քրիստոս

Նրանք կմերժեն Ինձ՝ ասելով, թե Իմ Սուրբ Խոսքը հակասում է Աստծո Խոսքին

Չորեքշաբթի, 11 հուլիսի, 2012, երեկոյան ժ 07:30

Իմ սիրելի աղջիկ, դու կրում ես Իմ ցավը հիմա, մինչ Ես ողբում եմ Աստծո զավակների այն թվի պատճառով, ովքեր մեռնում են մահացու մեղքի մեջ:
Այնքան ցավոտ են Իմ Խաչելության ժամանակ Ինձ հասցված այն սարսափելի վերքերը, որոնք հիմա Ես նորից կրում եմ:
Աղջիկս, կարևոր , որ դու հասկանաս, թե ինչ է տեղի ունենում քեզ հետ, քանի որ պետք է նախապատրաստվես թե ինչպես վարվես այս աառաքելության հետ երն այն քեզ այսպիսի տառապանք է պատճառում:
Իմ Անվան համար մեղադրանքը, որը կրում ես, սպասելի է:
Երբ որևէ ընտրյալ հոգի հայտնել է աշխարհին Իմ Սուրբ Խոսքն անցյալում, նրանք ճնշվել են ճիշտ այնպես, ինչպես դու՝ հիմա: Նրանց ծաղրել են, մեղադրել, հիմարի տեղ դրել և նույնիսկ ավելի վատ, մեղադրել են խաբեության մեջ՝ ասես թե ստեր են փչել:
Ինձ նույնպես ստախոս են անվանել: Ինձ վրա նույնպես ծիծաղել են: Ասել են, ե Ես խարդախ եմ, ինքնակոչ և ադեմ Աստծո Խոսքին:

Նրանք ամեն պատճառաբանություն ներկայացնում էին ապացուցելու համար, թե Ես խարդախ եմ:
Նրանք նույնիսկ օգագործում էին Աստծո՝ Իմ Հավիտենական Հոր Սուրբ Խոսքը, փորձելով ապացուցել, թե այն ինչ Ես խոսում էի, մերժում էր Սուրբ Գրվածքները:
Ցանկացած ոք կարող է ասել, թե ներկայացնում է Աստծո Խոսքը: Շատ քչերին են լուրջ ընդունում, ովքեր ասում են, թե ստանում են Աստծո Խոսքը: Սովորաբար նրանց արհամարհում են:
Բայց նրանց, ովքեր ասում են, թե իրենք խոսում են Իմ Անվամբ, բայց այդպես չէ, և ովքեր դիտավորյալ ստեր են տարածում, սովորաբար նրանց ծափահարում են և ընդունում Սատանայի խաբեբա ազդեցությամբ:
Ճշմարիտ մարգարեի դեպքում, այդպիսին է Իմ Ձայն ի զրությունը, որ այն կառաջացնի ուժեղ արձագանք: Նման դեպքերում մարդիկ կամ կգրկեն Իմ Խոսքը՝ Ճշմարտության հանդեպ սիրով, կամ էլ ուղիղ կմերժեն Ինձ:
Նրանք, ովքեր ընդունում են Ինձ, զգում են, թե ինչպես է Իմ սերը դիպչում իրենց հոգիներին այնպիսի ձևով, որ բոցավառում է իրենց սրտերը, այնպես որ այլև ետ դարձ չկա:
Նրանք, ովքեր մերժում են Ինձ, չեն անտեսում Ինձ: Դրա փոխարեն նրանք ծաղրում են Ինձ և զրպարտում Իմ Սուրբ Խոսքն այնպիսի չարությամբ, որը շեղվում է այն քրիստոնեական արժանիքներից, որոնք իրենք ասում են թե ունեն:
Նրանք կմերժեն Ինձ՝ ասելով, թե Իմ Սուրբ Խոսքը հակասում է Աստծո Խոքին, ճիշտ ինչպես արեցին այն ժամանակ, երբ Ես քայլում էի երկրի վրա:
Նրանք չեն կարողանում հասկանալ, թե ինչու է Իմ ԽՈՍքն առաջացնում այդպիսի հզոր արձագանք: Նրանք գայթակղվել են Սատանայի կողմից, սակայն չգիտեն դա:
Նրանք թուլացրել են իրենց հսկողությունը և թույլ են տվել նրան մշուշել Իմ հանդեպ իրենց ունեցած սերը:
Ոչ մեկը չի անտեսի Իմ Խոսքը: Նրանք չեն կարող անտեսել: Քանի որ եկրու դեպքում էլ այն առաջացնում է արձագանք՝ սիրո կամ ատելության:
Ձեր Հիսուս

Նախազգուշացումը շատերի համար կլինի սարսափեցնող իրադարձություն, երբ կթվա, թե աշխարհի վերջը եկել է

Հինգշաբթի, 12 հուլիսի, 2012թ. առավոտյան ժ. 10:50

Իմ սիրելի աղջիկ, թող ոչ ոք չթերագնահատի այն ազդեցությունը, որը կունենա Նախազգուշացումը ողջ մարդկության վրա:
Շատերի համար Նախազգուշացումը կլինի սափսափելի իրադարձություն, երբ կթվա, թե աշխարհի վերջը եկել է:
Շատերի համար այն կթվա որպես կատաստրոֆիկ իրադարձություն, երբ տեսնեն թե ինչպես են երկու գիսաստղ բախվում իրար և պայթում երկրի մակերևույթին մոտիկ:
Կրակի բոցերը կթվան այնպես, ասես երկնքում հրաբուխ է ժայթքել, և շատերը կվախենան:

Կարմիր կրակի ճառագայթները Իմ Արյան ճառագայթներն են, Իմ Գթասրտության ճառագայթները, որոնք կտրվեն ձեզ բոլորիդ որպես այնպիսի մեծության ընծա, որ ոչ մի մարդ չի կարողանա հասկանալ, թե ինչ է տեղի ունենում:
Շատերը այրող կրակ կզգան իրենց մարմինների միջով, ասես արևի ջերմությունը թուլացնում է իրենց:
Ներքուստ նրանք կզգան մի այրող տաքություն, մինչև գիտակցության զգացողությունը հնարավորություն կտա նրանց ականատես լինել իրենց հոգիների պատկերին:
Շատերը կզգան երկրի ցնցումը, ասես երկրաշարժի ժամանակ:
Գետինը կցնցվի, կհառաչի և շատերը վայր կընկնեն՝ ճանկելով այն, ինչ կարող են՝ ապաստանի համար:
Սակայն գետինը չի բացվի և նրանց կուլ չի տա, քանի որ դա ֆիզիկական երկրաշարժ չի լինի, այլ՝ գերբնական:
Նախքան դա տեղի կունենա, եղանակի ձևերը կփոխվեն:
Իմ Խաչը կերևա երկնքում պայթյունից հետո:
Շատերը լաց կլինեն զղջման և տխրության դառն արցունքներով և կկրեն նվաստացման ցավը՝ իրենց մեղքերի պատճառով:
Մյուսները կճչան և կհայհոյեն, որովհետև ի վիճակի չեն լինի դիմանալ /գիտակցության/ լուսավորմանը, որը մի աստվածային նշան է, իրենց հոգու խավարի պատճառով, և կդիմադրեն Իմ Գթասրտության լույսին:
Նրանք կգալարվեն դժոխքի կրակների ցավերով, քանի որ Իմ Գթաստրության Նշանը նրանց ցույց կտա այն կրակը, որն սպասում է իրենց, եթե չապաշխարեն և չփոխեն իրենց ուղիները:
Այն բարի հոգիները, ովքեր սիրում եմ Ինձ, նույնպես կտառապեն, որովհետև նրանցից շատերը նույնպես մեղքի բծեր կունենան, բայց նրանք կստանան վայրկենական Թողություն: Նրանք նույնպես կխոնարհեցվեն, երբ նրանց ցույց տրվի իրենց հպարտության մեղքը:
Շատերը դրանից հետո տնից դուրս չեն գա մի քանի օր, և շատերը ստիպված կլինեն իրենք հոգալ իրենց կարիքները՝ սպասարկման բացակայության պատճառով: Ահա թե ինչու պետք է նախապատրաստվեք:
Այն կլինի նաև տառապանքի շրջան, երբ հոգիները կզգան քավարանի ցավերը, երբ նրանց մաքրագործումը տեղի ունենա: Այս կերպ շատերը կզգան իրենց հոգիների վիճակի հայտնությունը և կխոնարհեցվեն մի այնպիսի ձևով, որը երբեք նախկինում չեն զգացել:
Այնքան շատերը կընդունեն այն, ինչ տեղի կունենա, և կիմանան որ իրենց տրվել է Իմ Շնորհների Մեծ ընծան և Իմ Աստվածային Գթասրտությունը:
Գլոբալ դարձ կլինի, և այնպիսի չափերով, որը չի տեսնվել Խաչի վրա Իմ Մահից հետո:
Միլիարդավորներ կդառնան դեպի Աստված, որովհետև ճշմարտությունը ակնհայտ կդառնա:
Նրանք ճշգրտորեն կիմանան, թե ինչ տեղի կունենա **Դատաստանի Օրը** և կիմանան թե ինչպես փրկեն իրենց հոգիները, որովհետև Իմ Սերը կպարուրի նրանց:
Նրանք կարող են նորից ամբողջական դառնալ մտքով, մարմնով և հոգով:
Իմ Խաչը կլինի վաղուց ի վեր խոստացված Իմ Աստվածային Գթասրտության ցուցադրման ապացույցը: Այն կերևա երկնքում ողջ աշխարհով մեկ:

Իրենց քնից արթնացնելու համար Աստծո զավակներին տրվող այս աստվածային միջամտության գործողության արդյունքում երկրի վրա հանդարտություն կիջնի:
Բայց ընկած հրեշտակները կհարձակվեն Աստծո բոլոր զավակների վրա իրենց նվիրված բանակի միջոցով, ովքեր կմերժեն Իմ Փրկության Գավաթը:
Այնքան դաժան, քարե սրտերով և վարակված Սատանայի աղտով, նրանք կկռվեն նրանց դեմ, ովքեր սիրում են Աստծուն:
Նրանց թիվը չի համապատասխանի նրանց, ովքեր հետևում են Ճշմարտությանը, սակայն նրանց ատելությունը կոգեշնչի նրանց նյութելու չար գործողություններ, որոնք կոչնչացնեն այդ խաղաղությունն ու անդորրը:
Կկազմվի մի պլան՝ համոզելու համար աշխարհին, թե այդ իրադարձությունն, անշուշտ, տիեզերական միջադեպ էր, որի մասին կասեն, թե գիտնականները կարող են ապացուցել: Ցավոք, այդ ժամանակ շատերը կհավատան, թե դա այդպես է, և Աստծո զավակներից շատերը ետ կընկնեն հին մեղավոր կյանքի մեջ, որով ապրել են:
Այդ ժամանակ կսկվի հոգիների համար մարտը, և որոշ ժամանակ կպահանջվի մինչև այն հասնի վերջնական հաստատմանը, երբ Իմ Երկրորդ Գալուստը վերջ կտա չարությանը:
Իմ սիրելի հետևորդներ, թույլ չտաք, որ այս հայտնությունները վախ առաջացնեն:
Դրա փոխարեն նախապատրաստվեք այդ փառահեղ իրադարձությանը, և թույլ տվեք ձեր հոգիներին գրկել այն:
Ընդունեք այդ հրաշալի Աստվածային Գործողությունը՝ ամրապնդելու համար ձեր որոշումը և տարածելու համար ձեր սերը ավելի հեռու՝ ձեր ընտանիքի անդամների և ձեր ընկերների մեջ:
Հպարտ եղեք Ինձ հետ՝ ձեր Հիսուսի հետ ունեցած ձեր կապերով, և օգնեք Ինձ փրկել այն հոգիներին, ովքեր կմերժեն ընդունել Իմ Գթասրտությունը:
Գնացեք: Նախապատրաստվեք: Ուրախացեք, քանի որ ժամանակը մոտ է:
Ես սիրում եմ ձեզ:
Ձեր Հիսուս:

Համաշխարհային պատերազմից հետո կգա սովը, հետո՝ աղետները: Սակայն աղոթքը կարող է մեղմացնել երկնային պատիժը

Ուրբաթ, 13 հուլիսի, 2012թ, ցերեկվա ժ 04:25

Իմ սիրելի աղջիկ, Իմ հետևորդները պետք է իմանանան իրադարձությունների հաջորդականությունը, քանի որ դա հասկանալով, նրանք ուժ կստանան այն այդ իմացությունից որպեսզի կարողանան օգնել՝ մեղմացնելու համար երկնային պատիժը:
Նախազգուշացում տեղի կունենա որպես մի վերջին հովանավորություն Իմ Հավիտենական ՀՈՐ կողմից, որպեսզի մարդկության սրտերի մեջ մխրճի Աստծո լույսը՝ Ճշմարտության լույսը:
Առանց դրա մարդկության մեծ մասը դժոխք կնետվեր, քանի որ նրանք արժանի չեն լինի Իմ Հոր թագավորությանը:

Սա Մեծ Գթասրտության Աստվածային մի գործողություն է, դուրս քաշելու համար չարի ց Աստծո բոլոր զավակներին և նրանք իրավամբ իրենց պատկանող ժառանգությանը հասցնելու համար:
Աստծո այդ Գործողությունն անհրաժեշտ է այն մեծ խավարի պատճառով, որը հիմա ծածկում է երկիրը:
Այն կբաժանի լավերին նրանցից, ովքեր խրված են մեղքի մեջ և համառորեն կփարվեն Գազանին այն փառքի, որը նա խոստանում է ն րանց երկրի վրա: Այդպիսի խեղճ հոգիների համար այն ժամանակի կորուստ է, որովհետև նրանք պետք է իմանան, որ երկրի վրա իրենց ժամնակը լարճ է:
Երկիրը կփոխարինվի մի Նոր Դրախտով, ուր կմերժվի նրանց մուտքը, եթե նրանք մերժեն Իմ Սիրո և Գթասրտության Գործողությունը:
Շատերը կմնան խավարի մեջ: Շատերը դարձի կգան անմիջապես: Եթե մարդկության մեծ մասն ապաշխարի, ապա Մեծ Դբախատությունն այնքան էլ դժվար չի լինի:
Համաշխարհային պատերազմը նույն ազդեցությունը չի ունենա, եթե մարդկանց մեծամասնությունն ապաշխարի Նախազգուշացումից հետո:
Համաշխարհային պատերազմից հետո կգա սովը, իսկ հետո՝ աղետները: Չնայած դրան, աղոթքը կարող է մեղմացնել երկային պատիժը:
Աղոթեք սրտանց, որպեսզի պատերազմը և երկնային պատիժը, որը կհետևի նրան, կթուլացվի և դրանցից խույս կտրվի. Սրան կարելի է հասնել միայն մարդկության հավատի և Իմ՝ ձեր Աստվածային Փրկչի հանդեպ հավատարմության միջոցով:
Աղջիկս, այդ Ես՝ ձեր Հիսուսը չէ, որ կբերեմ այդ սրսափելի վշտերը: Դա կլինի մարդկանց չար մեղքերի միջոցով, որոնց սերն անհագ է ուժի, փողի և աշխարհը վերահսկելու հանդեպ:
Մինչ Իմ հետևորդներից շատերը համբերատարությամբ և մեծ ցանկությամբ կսպասեն Իմ Երկրորդ Գալուստին, ավելի շատ խառնաշփոթություն կլինի:
Շատերն առաջ կգան և կհայտարարեն, թե իրենք Ես եմ՝ Մեսիան, և մարդիկ կհիմարացվեն:
Հիշեք, թե Ես ինչ ասացի ձեզ. Ես կվերադառնամ երկիր ճիշտ այնպես, ինչպես հեռացա, երբ բարձրացա վեր ամպերի միջով:
Անտեսեք նրանց, ովքեր կասեն թե իրենք Ես Եմ՝ մարմով, քանի որ դա տեղի չի ունենա:
Իմ հետևորդներն ուժեղ կլինեն Իմ հանդեպ իրենց սիրո մեջ, և նրանք պետք է կենտրոնան միակ ցանկության վրա, որը եթե իրականան, Ինձ ուրախություն և սփոփանք կբերի: Դա կլինի հոգիներ փրկելու Առաքելությունը՝ բոլոր հոգիներին փրկելու, նախքան Ես կգամ նորից:
Հիշեք, որ հավատարմությունն Իմ հանդեպ կլինի փրկության բանալին և ապագայի աշխարհը, որը վերջ չի ունենա, քանի որ այն կլինի Նոր Դրախտը, որը ձեզանից յուրաքանչյուրին առաջարկում է հավիտենական կյանք:
Ձեր սիրող Հիսուս

Ուստի հիմա դու պետք է հասկանաս, թե ինչու ես տարբեր տեսանողներից: Դա այն պատճառով է, որ դու մարգարե ես՝ վերջին ժամանակների մարգարեն:

Ուրբաթ, 13 հուլիսի, 2012, երեկոյան ժ 11:05
Իմ սիրելի աղջիկ, դու պետք է իմանաս, որ մարգարեի դերը տարբերվում է տեսանողի դերից:
Մարգարեն միշտ կլինի դուրս նետված, ատված, նրանից կվախենան և նա մեկուսացված կլինի:
Մարգարեն միշտ միայնակ է աշխատում, ասես մի գործողություն է անապատում:
Միակ պտուղն անբերրի անապատում կլինի Աստծո Ձայնը:
Աղջիկս, երբ միայնակ ես զգում և լքված, իմացիր որ այդպես են զգացել մարգարեներն անցյալում: Շատ մարգարեներ են զգացել իրենց դեմ դրված այդ առաջադրանքի ծանրությունը:
Նրանցից շատերը գիտեին, ո ր իրենք արժանի չէին ասելու Աստծո Սուրբ Խոսքը, բայց ընդունում էին Երկկնքից եկող աստվածային կանչը, որովհետև ուղարկված էին:
Որովհետև նրանք ուղարկված էին աշխարհ, նրանք գիտեին, բնազդով, այն պարտավորությունները, որոնք պետք է կատարեին, չնայած դա հեշտ չէր:
Նրանց ասած ամեն մի բառը ետ էր շպրտվում իրենց դեմքերին:
Ամեն մի բառը բզկտվում էր ժողովարաններում և տաճարներում, որոնք ստեղծված էին Աստված պաշտելու համար: Շատերը դուրս էին նետվում իրենց սեփական ժողովրդի կողմից և չէին կարողանում վերադառնալ իրենց ծննդավայրը:
Շատերը դարձան թափառական և ընդհանրապես եղ չգտան, ուր կընդունվեին որպես կորած որդիներ: Դրա փոխարեն նրանք աշխատեցին, ապրեցին և մնացին միայնակ, չունենալով ոչ մեկին ում կարող էին դիմել:
Սակայննրանք գիեին իրենց սրտերում, որ իրենք առաջնորդվում են Աստծո կողմից և վախ չէին զգում, երբ խոսում էին Նրա ձայնով:
Նրանց տրված շնորհները նրանց ուժեղ էին դարձնում: Նրանք երբեք չերերացին Աստծո ժողովրդին ուղղված նախազգուշացումները, մարգարեությունները և Աստծո Խոսքը հաղորդելու ժամանակ:
Մերժված, ծաղրված, մի կողմ նետված և տարօրինակ համարվող, ճիշտ ինչպես Ես էի երկրի վրա Իմ գտնվելու ժամանակ, նրանք շարունակում էին հայտնել Աստծո Խոսքը:
Նրանց խոսքերն ապրում են ընդմիշտ: Նրանք երբեք չեն մեռնի, ո րովհետև խոսել են Տիրոջ՝ Ամենաբարձրյալ Աստծո Խոսքը:
ԵՎ այդպես կլինի նաև քեզ հետ: Դու կմնաս միայնակ ինչպես մի ձայն անապատում:
Քեզ կանտեսեն երկրի վրայի Իմ Եկեղեցու շատ մասերում:
Այս անգամ տարբերությունն այն է, որ այդ մարգարեությունները կկատարվեն ձեր կյանքի ընթացքում, և ճշմարտությունը կապացուցվի այս սե ընդին:
Այդ ժամանակ նրանք կհավատան, երբ ականատես լինեն Նախազգուշացման ճշմարտությանը:
Կնիքների մարգարեությունները, մինչ Ես բացում են դրանք և բացահայտում ձեզ բովանդակությունը, նույնպես կապացուցեն, որ Ես խոսում եմ աշխարհի հետ քո՝ 7-րդ հրեշտակի, 7-րդ պատգամատարի միջոցով:
Քեզ կլսեն, սակայն Ես կոչ եմ անում քեզ լուռ մնալ և չպատասխանել նրանց, ովքեր հարցականի տակ կդնեն քեզ կամ մարտահրավեր կնետեն:
Դու դեռևս չես հասկանում պատգամների իմաստը: Ժամանակի ընթացքում կհասկանաս:Միևնույն ժամանակ, դու իրավասություն չունես պաշտպանելու Իմ Խոսքը:

Ամեն փորձ կարվի քեզ ծուղակը գցելու համար, որ պատասխանես, այն հույսով որ դու ինքդ քեզ ծուղակը կգցես իմացության պակասի պատճառով: ՈՒստի դու պետք է հանգիստ մնաս, մեկուսացված և անանուն, մինչև որ Ես քեզ հրահանգ կտամ: ՈՒստի հիմա պետք է հասկանաս, թե ինչու ես դու տարբեր տեսանողներից: Դա այն պատճառով է, որ դու մարգարե ես՝ ժամանակների վերջի մարգարեն:
Այս առաքելությունը պաշտպանավում է Երկնքի կողմից և չի կարող ոչնչացվել:
Գնա խաղաղությամբ և հասկանալով, աղջիկս:
Ձեր Հիսուս

Բավական չէ հավատալ Հորը, քանի որ նրանք, ովքեր մերժում են Նրա Որդուն, մերժում են փրկությունը

Շաբաթ, 14 հուլիսի, 2012թ, ցերեկվա ժ 03:15

Իմ սիրելի աղջիկ, այնքան շատ կրոններ են աշխարհում հետևում սխալ ուղուն, դրանով իսկ դժվարացնելով Աստծո զավակների համար հավիտենական կյանք ստանալը:
Հավիտենական կյանքը միայն հնարավոր դարձավ Խաչի վրա Իմ Մահվամբ:
Իմ Հայրը, ով ուղարկեց Ինձ՝ Իր միայ Որդուն, որպես ղոհաբերության Գառը, ողջ մարդկության համար հնարավար դարձրեց փրկություն և հավիտենական կյանք ձեռք բերել:
Հավիտենական կյանքը տրվել էր որպես ընծա Ադամին և Եվային: Հետո, մեղքի և անհնազանդության պատճառով այն վերցվեց:
Դրա փոխարեն մարդը դարձավ մահկանացու, նրա մարմինը՝ անմաքուր, նրա կյանքը ֆիզիկական վիճակում՝ անկատար, իսկ երկիրը դարձավ Եդեմի պարտեզում Ադամի և Եվայի համար ստեղծված հոյակապ երկրի խղճուկ նմանակումը:
Աստված՝ Իմ Հավիտենական Հայրը այդ ժամանակ փրկություն շնորհեց նրանց, ովքեր ընդունեցին Ինձ՝ Նրա միածին Որդուն, որպես դեպի Նրա Նոր Դրախտը տանող ճանապարհ:
Միայն Իմ միջոցով կարող եք ընդունվել Իմ Հոր կողմից:
Բավական չէ հավատալ Հորը, քանի որ նրանք, ովքեր մերժում են Նրա Որդուն՝ մերժում են փրկությունը:
Հիշեք, թե որքան շատերն Աստծո զավակներից չիմացության պատճառով չեն ճանաչում Ինձ՝ մարդկության Փրկչին: Բայց Իմ Մեծ Գթասրտության պատճառով ճշմարտությունը կբացահայտվի նրանց աստվածային միջամտությամբ:
Նրանք բոլորն էլ հավասար են Իմ Հոր աչքում, և Նա ցանկանում է միավորել բոլոր այդպիսի հոգիներին Իմ գրկում: Նա սիրում է նրանց բոլորին:
Երբ նրանք տեսնեն ապացույցը, նրանք կընդունեն, որ Աստված՝ Ամենաբարձրյալը, տվել է իրենց հավիտենական կյանքի ընծան Խաչի վրա Իմ Զոհաբերության միջոցով:
Այս ձևով բոլորը կպաշտեն մեկ Աստծո:
Քանի որ միայ մեկ Աստված կա ով ստեղծել է ձեզանից յուրաքանչյուրին:
Հիմա գնա, աղջիկս, և օգնիր վստահանալ, որ Իմ պատգամները տրվել են յուրաքանչյուր հավատամքի, յուրաքանչյուր ազգի և յուրաքանչյուր Աստծո զավակի:
Ես ներառում եմ հեթանոսներին և քարե սիրտ ունեցողներին:

Նշանակություն չունի, եթե նրանք թքեն քեզ վրա, կամ մերժեն լսել, դու պետք է տաս նրանց պատգամները:
Ցանկացած մարդ կամ Իմ՝ Հիսուս Քրիստոսի հետևորդ, ով չի կարողանում ընդունել, որ Ես ցանկանում եմ հաղորդել Աստծո Սուրբ Խոսքը բոլոր կրոններին, ճշմարիտ քրիստոնյա չէ:
Այնքան շատերն են մերժել աշխարհին տրվող Իմ այս պատգամները, որովհետև Ես գրկում եմ ողջ մարդկությանը և բոլոր այլ կրոններին, ներառյալ աթեիստներին:
Դուք իրավունք չունեք ենթադրելու, թե միայն դուք՝ ճշմարիտ քրիստոնյաներդ եք սիրված Աստծո՝ Իմ Հավիտենական Հոր կողմից:
Դուք օհնյալ եք և սիրված, բայց առանց ողջ մարդկության դարձի Իմ Հայրը չի հասնի այն հաղթանակին, որով Նա ցանկանում է միավորել Իր բոլոր զավակներին:
Դուք, Իմ հետևորդներ, մեծ պարտականություն ունեք այն պատճառով, որ ձեզ տրվել է Ճշմարտության Գիրքը:
Ձեր պարտականությունն է տարածել ՍՈւրբ Խոսքը, որպեսզի բերեք այն խեղճ հոգիներին, ովքեր չգիտեն Իմ գոյության մասին դեպի Աստծո Թագավորությունը:
Ձեր Հիսուս

Կույս Մարիամ. Իմ Որդու Եկեղեցին երկրի վրա չի լսի այս անգամ, չնայած նրանք գիտեն, թե ինչպես վարվեցին Իմ Որդու հետ առաջին անգամ:

Կիրակի, 15 հուլիսի, 2012թ, ցերեկվա ժ. 03:45

Ձավակս, ցավը, որն Իմ Որդին և Նրա առաքյալները կրեցին երկրի վրա Նրա առաքելության ժամանակ, նույնն է, ինչ պետք է կրեն Նրա հետևորդները, մինչ Նա նախապատրաստվում է նորից գալու:
Երբ Իմ Որդին երկրի վրա էր, Նա մեծ խոչընդոտների էր հանդիպում:Իր սեփական համայնքում ծատ քչերն էին նախապատրաստված լսել Նրան:
Նրա հետ վարվում էին արհամարհանքով և վերևից էին նայում նրանք, ովքեր պատասխանատու էին տաճարներում և ժողովարաններում:
Սակայն Նրա սիրով էին դիմավորում հասարակ մարդիկ և ընադունում Նրա խոսքը, որովհետև նրանք տեսնում էին Ճշմարտությունը, որը Նա խոսում էր:
Նրա Խոսքը վախ և անորոշություն էր առաջացնում շատ մասերում, բայց քչերն էին անտեսում Նրա ուսուցումների իմաստությունը:
Իմ Որդին բաժանում առաջացրեց, չնայած Նրա մտադրությունն այդ չէր:
Նրա պարզ պահվածքը նշանակում էր, որ քչերը կընդունեին, որ Նա Աստծո Որդին է:
Շատերը հարցնում էին, թե ինչպե՞ս կարող է Մարդու Որդին լինել այդպիսի հասարակ մարդ:
Նրանք մերժում էին Նրան, քանի որ մտածում էին, թե Մեսիան լինելու է վեհապանծ, հպարտ և գրավելու է եկեղեցու ամենաբարձր էշելոնների ուշադրությունը:
Իմ Որդին չէր կարող գրավել այդ ժամանակի եկեղեցու սպասավորներին, որ լսեն Իրեն: Նրանց հպարտությունը խանգարում էր իրենց լսել Ճշմարտությանը:
Նույնը տեղի կունենա հիմա, մինչ Իմ ՈՐդին նախապատրաստում է աշխարհը Իր Երկրորդ Գալուստի համար:

Երկրի վրա Իմ Որդու Եկեղեցին չի լսի այս անգամ, չնայած նրանք գիտեն թե Իմ Որդու հետ ինչպես են վարվել առաջին անգամ:
Այս անգամ, վերջին ժամանակների մարգարեին տրվող Նրա Սուրբ Խոսքը չի ընդունվի երկրի վրայի Նրա Եկեղեցու կողմից:
Իմ Որդու Եկեղեցին խուլ է մարգարեության ընծայի հանդեպ: Նրանք մերժում են մարգարեությունը, որովհետև չեն ցանկանում լսել:
Իմ Որդու աշակերտները կմերժվեն նրանց կողմից, ովքեր պատասխանատու են Կաթոլիկ Եկեղեցու համար կմեղադրվեն որպես կեղծ:
Չնայած Իմ Որդու ուսուցումները երբեք չեն փոխվել, նրանք սխալ կգտնեն Նրա Սուրբ Խոսքի մեջ, որը տրվում է իրենց հիմա:
Նրանք կհայտարարեն, որ այս պատգամները հակասում են Աստծո Խոսքին:
Զավակներս, դուք պետք է միշտ հիշեք, որ Իմ Որդին երբեք չի հակասի երկրի վրայի Իր Եկեղեցուն, քանի որ Նա է Եկեղեցին:
Ճշմարտությունն այն է, ինչ միշտ եղել է:
Դուք պետք է հետևեք Աստծո Խոսքին, քանի որ Իմ Որդու ձայնը մի կողմ է նետվում և արհամարհվում ճիշտ ինչպես առաջին անգամ էր:
Թույլ մի տվեք ձեզ մերժել Նրա Փրկության Ընծան, երկրի վրա Նրա Գթասրտության վերջին գործողությունը:
Իմ Որդին այնքան համբերատար է եղել այսքան երկար ժամանակ: Ճշմարտությունը տրվեց մարդկությանը Խաչի վրա Իմ Որդու Տառապանքով:
Այն ամրապնդվեց այն բելեր ընտրյալ հոգիների միջոցով, ովքեր լուսավորվեցին Սուրբ Հոգու զորությամբ դարերի ընթացքում:
Հիմա եկել է ժամանակը,ո ր Իմ Որդին նորից գա, և միայն նրանք ովքեր Սուրբ Հոգու ընծայի պատճառով կճանաչեն Նրա ձայնը, միայն նրանք կհետևենՆրա հրահանգներին:
Եկեղեցին կմերժի Իմ Որդու խոսքը մինչ Նա նախապատրաստվում է Իր Երկրորդ Գալուստի համար, ճիշտ ինչպես առաջին անգամ մերժեց երկրի վրա ԻՄ Որդու գտնվելու ժամանակ:
Նրանք չեն կարողանա ոչ ճանաչել ոչ էլ ընունել Նրան:
Նրանք ոչինչ չեն սովորել:
Աղոթեք, որ եկեղեցու մեջ այն քաջ հոգիները, ովքեր կճանաչեն Նրա ձայնը, արիություն ունենան առաջնորդելու Աստծո բոլոր զավակներին դեպի հավիտենական կյանք պատմության մեջ այս վճռորոշ ժամանակ:
Ձեր Սիրող Մայր
Մայր Փրկության

Հայր Աստված: Ես կսրբեմ նրանց կեղծ եկեղեցիները, նրանց չար կուլտերը, նրանց կեղծ կուռքերը, նրանց քաղաքներն ու ազգերը

Կիրակի, 15 հուլիսի, 2012թ, ցերեկվա ժ 05:45

(Ստացված Սուրբ Հաղորդության պաշտամունքի ժամանակ)

Իմ թանկագին աղջիկ, Իմ զավակների համար դժվար է ազատ մնալ մեղքից այն անեծքի պատճառով, որը հասցվել է նրանց օձի ձեռքով:
Ես երբեք չեմ ակնկալում որ Իմ զավակներն ամբողջությամբ ազատ լինեն մեղքից, քանի որ դա անհնարին է:
Կարևոր էմ որ յուրաքանչյուր ոք, ով գիտի երկրի վրա Իմ Որդու Եկեղեցու ուսուցումները, որքան հնարվոր է հաճախ փնտրեն մեղքերի թողություն /զղջում/:
Թողության միջոցով ավելի հեշտ կլինի մնալ շնորհի վիճակի մեջ, իսկ դա պատնեշ կստեղծի հետագա գայթակղությունների սեմ:
Զավակներս, շուտով դուք ականատես կլինք մեծ հարատև փոփոխությունների աշխարհում: Դրանք տեղի կունենան Նախազգուշացման տեղի ունենալուց հետո:
Մինչ շատերը կանտեսեն Երկնքից տրվող այս պատգամները, նրանք, ովքեր ընդունում են պատգամները որպես Աստծո Խոսք, պետք է նախապատրաստվեն:
Դուք թշնամու դեմ Իմ զենք ու զրահի կապն եք, և ձեր հավատի միջոցով Ես ձեզ կենդանի կպահեմ և կպաշտպանեմ հալածանքից:
Իմ Որդու՝ Հիսուս Քրիստոսի, տիեզերքի Փրկչի հանդեպ ձեր սերը կլինի, որով Ես կկարողանամ փրկել այն զավակներին, ովքեր չեն կարող տանել Աստծո Լույսը:
Սիրո, տառապանքի և աղոթքների ձեր նվիրաբերումը կլինի նրանց փրկող շնորհը դժոխքի կրակներից:
Մի վախեցեք ձեր անձերի համար, այլ նրանց, ովքեր ոչ միայն չեն կարող տեսնել, այլև մերժում են տեսնել այն ժամանակները, որում ապրում եք այսօր:
Նախապատրաստություններն ավարտված են, և ժամանակը հասել է որփոփոխությունները սկսվեն, քանի որ Ես թույլ չեմ տա Գազանին հոգիներ գողանալ:
Այս միջամտությունը, այնքան վաղուց խոստացված մարդկությանը, տեղի կունենա շատ շուտով, իսկ հետո կսկսվի մարտը՝ փրկելու համար Իմ զավակներին:
Մի վախեցեք Իմ Ձեռքից, քանի որ երբ այն իջնի, այն կօգտագործվի պատժելու համար նրանց, ովքեր փորձում են ոչնչացնել Իմ զավակներին:
Ես կկասեցնեմ նրանց հոգիներին խաբելուց:
Ես կկասեցնեմ նրանց իրենց մարդասպան նպատակից և կսրբեմ նրանց կեղծ եկեղեցիները, նրանց չար կուլտերը, նրանց կեղծ կուռքերը, նրանց քաղաքներն ու ազգերը, եթե նրանք շարունակեն մերժել այն Ձեռքը, որը սնում է իրենց:
Նրանք նախազգուշացվել են: Դուքմ Իմ սիրելի զավակներ, կօգնեք իմ Որդուն փրկել նրանց:
Երբեք չվախենաք, որովհետև Կենդանի Աստծո Կնիքն ունեցողները ոչ միայն պաշտպանված են, այլև նրանց տրված են շնորհները՝ պաշտպանելու Աստծո Խոսքը, որպեսզի Կյանքի Ընծան տրվին որքան հնարավոր է շատ հոգիների:
Ձեր սիրող Հայր
Աստված Ամենաբարձրյալ

Իմ սիրելի երեց Բենեդիկտ XVI Պապի հալածանքի գագաթնակետին մոտենալու ժամանակը մոտ է

Երկուշաբթի, 16 հուլիսի, 2012թ, ցերեկվա ժ. 03:05

Իմ սիրելի աղջիկ, ժամանակն է նախապատրաստել Աստծո բոլոր քահանաներին, եպիսկոպոսներն և բոլոր նրանց, ովքեր ղեկավարում են Իմ Սուրբ Կաթոլիկ և առաքելական Եկեղեցին երկրի վրա:
Քանի որ ժամանակը մոտ է, որ Իմ սիրելի երեց Բենեդիկտ XVI Պապի հալածանքը մոտենա գագաթնակետին:
Շատ շուտով նրան կստիպեն փախչել Վատիկանից: Հետո կգա ժամանակը, երբ Իմ Եկեղեցին կբաժանվի՝ մի կողմը մյուսի դեմ:
Ես կոչ եմ անում Իմ բոլոր սրբազան սպասավորներին հիշել իրենց սուրբ երդումները: Երբեք չլքեք ձեր առաքելությունը: Երբեք չլքեք Ինձ: Երբեք ստերը Ճշմարտության տեղ չընդունեք:
Դուք պետք է խնդրեք Ինձ օգնել ձեզ առջևում սպասվող դժվար ժամանակներում:
Դուք պետք է բարձրանաք, միավորվեք և հետևեք Ինձ:
Այս հատուկ Խաչակրաց արշավանքի աղոթքի միջոցով աղոթեք այն զորության համար, որի կարիքը կունենաք,.
Խաչակրաց արշավանքի աղոթք (66) հոգևորականների համար. **Օգնիր ինձ հավատարիմ մնալ Քո Ամենասուրբ Խոսքին**

Ո՜հ, սիրելի Հիսուս, օգնիր ինձ միշտ հավատարիմ մնալ Քո Ամենասուրբ Խոսքին,
Տուր ինձ զորությունը՝ վեր պահելու համար Քո Եկեղեցու Ճշմարտությունը դժվարության ժամանակներում,
Լցրու ինձ շնորհով՝ կատարելու Սուրբ Խորհուրդներն այնպես, ինչպես Դու ես մեզ սովորեցրել,
Օգնիր ինձ սնել Քո Եկեղեցուն Կյանքի Հացով և հավատարիմ մնալ Քեզ նույնիսկ այն ժամանակ, երբ ինձ կարգելեն այդ,
Ազատիր ինձ խաբեության կապանքից, որի դեմ կկանգնեմ Աստծո Ճշմարիտ Խոսքը հռչակելու համար:
Ծածկիր Քո բոլոր սրբազան սպասավորներին Քո Թանկագին Արյամբ այս ժամանակ, որպեսզի մնանք քաջ, հավատարիմ և հաստատուն Քո՝ մեր սիրելի Փրկիչ Հիսուս Քրիստոսի հանդեպ մեր նվիրվածության մեջ:
Ամեն:

Մի հուսալքվեք, Իմ սիրելի սրբազան սպասավորներ, քանի որ այս տարաձայնությունը մարգարեացվել է և պետք է կատարվի հոգիների համար /մղվող/ վերջնական մարտում:
Ես սիրում եմ ձեզ և Ես կլինեմ ձեզ հետ հիմա, մինչ դուք Ինձ հետ քայլում եք դեպի Գողգոթա տանող փշոտ ճանապարհով, որպեսզի մեկ անգամ ևս Փրկություն հասցվի բոլոր հոգիների համար:
Ձեր սիրող Հիսուս

Երիտասարդ հոգիները սիրելի են Ինձ, և Ես սգում եմ նրա համար թե ինչպես նրանցից շատերին երբեք չի ասվել Ճշմարտությունը

Երեքշաբթի, 17 հուլիսի, 2012թ, ցերեկվա ժ 04:00

Իմ սիրելի աղջիկ, քո առաքելությունը պետք է ընդգրկի Աստծո բոլոր զավակներին: Ես հատկապես տենչում եմ երիտասարդների հոգիներին և նրանց, ովքեր թույլ են տալիս մարդկային բանականությանը փակել իրենց ականջները Իմ Գոյության Ճշմարտության հանդեպ:
Երիտասարդ հոգիները սիրելի են Ինձ, և ես սգում եմնրա համար, թե ինչպես նրանցից շատերին երբեք չի ասվել ճշմարտությունը:
Նրանք առաջնորդվել են իրենց ծնողների կողմից, որոնցից շատերը չեն հավատում Աստծուն, դեպի խավարի մի անդունդ:
Նրանց փնտրած լույսն այն ամեն փայլող բաների կեղծ լույսն է: Նրանք հրապուրվում են երաժշտությամբ, հագուստներով զվարճանքներով, որոնք բոլորն էլ նախատեսված են նրանց զգայարանները խթանելու համար:
Նրանք չեն ճանաչում Ինձ: Շատերը երբեք չեն լսել Իմ մասին, որ էլ այն մասին, թե ինչ հույս եմ Ես ներկայացնում ապագա երջանկության իրենց փնտրտուքի մեջ:
Լյուցիֆերը, Իմ Հոր բարձրագույն սերովբեների հիրերարխիայի ընկած հրեշտակը, տազանդավոր երաժիշտ էր:
Այսօր աշխարհում որպես Սատանա, **նա գայթակղեցնում է Իմ երիտասարդ քնքուշ հոգիներին երաժշտության միջոցով:**
Երաժշտությունը նրա ավերածության զենքն է, և նա ամեն տեսակ օգտագործում է գրավելու համար փոքրիկ անմեղ հոգիներին դեպի իր խաբեության սարդոստայնը:
Երաժշտությունը Աստծուց եկող մեծ պարգև է: Այն օգտագործվում է նաև ծածկելու համար չար նվիրվածությունը չարին քնարերգության միջոցով, որը գովերգում է գազանին: Շատ քիչ երիտասարդ հոգիներ են հասկանում երաժշտության ուժը, կամ էլ երբ այն օգտագործվում է սխալ ձևով:
Խնդրում եմ, Ես կոչ եմ անում ձեզ օգնել Ինձ՝ փրկելու համար նրանց փոքրիկ հոգիները:
Բերեք նրանց Ինձ մոտ: Երբեք մի ստիպեք նրանց: Դրա փոխարեն նվիրաբերեք երիտասարդ երեխաներին Ինձ՝ այս աղոթքի միջոցով:
Խաչակրաց արշավանքի աղոթք (67) Պահիր իմ երեխաներին ապահով Ստերի Թագավորից

Խնդրում եմ, սիրելի Հիսուս, ես խնդրում եմ Քեզ հեռու պահել իմ երեխաներին Ստերի Թագավորից,
Ես նվիրաբերում եմ այս երեխաներին (ասեք անունները) Քո Սուրբ Սրտին և խնդրում, որ Քո Թանկագին Արյան ծածկոցով լուսավորես նրանց հոգիները և ապահովությամբ վերցնես նրանց Քո սիրող բազուկների մեջ որպեսզի նրան պաշտպանված լինեն ամեն վնասից:
Ես խնդրում եմ, որ Դու բացես նրանց սրտերը և ողողես նրանց հոգիները Քո Սուրբ Հոգոց Գիտակցության Լուսավորման ընթացքում, որպեսզի նրանք մաքրվեն ամեն մեղքից:
Ամեն:

Աղոթք աթեիստների համար Նախազգուշացման ընթացքում
Ձեզնից նրանք, ովքեր ասում են թե իրենք աթեիստ են, լսեք հիմա Իմ խոստումը: Ես սիրում եմ ձեզ և Ես երբեք չեմ դադարեցնի Իմ պայքարը ձեզ Խաբեբայի՝ Սատանայի ճանկերից ազատելու համար, ով կուրացնում է ձեզ Ճշմարտության հանդեպ:

Երբ ժամանակը գա, և երբ տեսնեք ձեր մեղքերը ձեր աչքերի առջև Նախազգուշացման ընթացքում, խնդրում եմ ասեք հետևալ խոսքերը.
Հիսուս, ցույց տուր ինձ ճշմարտությունը և փրկիր ինձ չարից:
Ես ճշմարիտ ներողություն եմ խնդրում իմ մեղքերի համար և խնդրում եմ Քեզ որ ինձ հիմա տանես ու ցույց տաս Քո գթասրտության լույսը: Ամեն:
Դուա այլևս երբեք չեք շփոթվի, երբ ասեք այս աղոթքը: Ձեր սրտից մի ծանրություն կվերցվի, և դուք ճշմարիտ խաղաղության մեջ կլինեք:
Հիշեք այս խոսքերը, երն օրը գա:
Ես ձեզ չեմ լքի: Ես կպահեմ ձեզ և դուք կզգաք թե ինչպես է Իմ սերն անցնում ձեր մարմնի միջով, իսկ հետո ձեզ կտրվի այն ապացույցը, որին ձգտում էիք:
Ձեր Հիսուս

Երբ Նախազգուշացումը տեղի ունենա, շատ խառնաշփոթ կլինի

Երեքշաբթի, 17 հուլիսի, 2012թ, երեկոյան ժ 11:18

Իմ սիրելի աղջիկ, ժամանակը հիմա արագ է անցնում: Ես արդեն որոշ ժամանակ է ինչ նախապատրաստում եմ ձեզ բոլորիդ:
Դուք, Իմ հետևորդներ, գիտեք թե ինչ պետք է անեք: **Ձեր սեփական խոստովանությունը կարևոր է, և դուք պետք է աշխատեք դա անել յուրաքանչյուր շաբաթ այժմվանից սկսած:**
Եղեք խաղաղության մեջ: Ես գոհ եմ թե ինչպես եք հետևում Իմ հրահանգներին:
Խնդրում եմ շարունակեք ասել Իմ Խաչակրաց արշավանքի աղոթքները և կենտրոնացեք աղոթքների վրա՝ փրկելու համար այլոց հոգիները:
Երբ Նախազգուշացումը տեղի ունենա, շատ խառնաշփոթ կլինի:
Ամենուրեք մարդիկ այնպես կխոնարհանան, որ հնարավոր չէ նկարագրել:
Շատերը չափից դուրս ընկճված կլինեն անմիջապես իրենց աշխատանքին վերադառնալու համար: Մեծ պաշտոն ունեցող, կառավարության կազմում աշխատող մարդիկ հարցականի տակ կդնեն իրենց օրենքները:
Ձեր համայնքներում գտնվող մարդասպաններն ու ռճրագործները սարսափելի վիշտ կզգան և հուսահատություն, բայց շատերը կքավեն իրենց մեղքերը:
Իմ քահանաներն ու Իմ սրբազան սպասավորներն անմիջապես կիմանան, որ այս պատգամները գալիս են Իմ Աստվածային Շուրթերից:
Հետո նրանք կբարձրանան և կհետևեն Իմ հավատարիմ հետևորդներին՝ օգնելու համար Ինձ նախապատրաստել աշխարհն Իմ Երկրորդ Գալուստի համար:
Նրանց միջից ոմանք կիմանան, որ այդ Ես եմ որ խոսում եմ իրենց հետ, բայց քաջություն չեն ունենա բացահայտորեն հռչակելու Իմ Սուրբ Անունը:
Ժամանակի ընթացքում նրանց կտրվեն շներհները՝ վեր պահելու համար Իմ Խորհուրդները, երբ հասկանան, որ դրանք պղծվելու են: Այդ ժամանակ նրանց կտրվի այս մարգարեությունների ապացույցը:
Այդ պահից սկսած շատ ծնողների համար անհրաժեշտ կլինի ներարկել իրենց զավակների մեջ, 7 տարեկանից բարձր տարիքի, աղոթքի և ապաշխարության կարևորությունը: Ծնողներ, դուք պարտականություն ունեք՝ սովորեցնելու ձեր զավակներին ճշմարտությունը:

Նախազգուշացումից հետո նրանց սրտերը բաց կլինեն Իմ սիրո հանդեպ, և դուք պետք է շարունակեք ուղղություն ցույց տալ նրանց հոգևոր հարցերում:
Ապահովեք, որ ձեր տանը այժմվանից սկսած լինի օրհնած ջուր, սբ. Բենեդիկտի խաչ և Կենդանի Աստծո Կնիքը /աղոթքը/ կախված ձեր տանը: Այս ամենը կպաշտպանեն ձեր ընտանիքները:
Հետևեք Իմ ցուցումներին, և ամեն ինչ լավ կլինի:
Աղջիկս, դու հիմա պետք է գնաս և վստահանաս, որ Ճշմարտության Գիրքը հրատարակվի որքան հնարավոր է շուտ: Կարևոր է, որ այն հոգիները, ովքեր համակարգչից չեն օգտվում, նրանց տրվի այդ գիրքը:
Չվախենաս, քանի որ Ես քեզ ուղղություն կտամ և օգնություն կուղարկեմ՝ ապահովելու, որ այդ գիրքն ուղարկվի աշխարհով մեկ:
Գնա խաղաղությամբ: Գնա սիրով: Ես քեզ հետ եմ միշտ:
Ես կանգնած եմ քո կողքին օրվա յուրաքանչյուր պահի՝ ուղղություն տալով քեզ նույնիսկ այն ժամանակ, երբ դու դա չես հասկանում: Ես քո սրտում եմ:
Ձեր սիրող Հիսուս

Կույս Մարիամ. Այսօրվա այսպես կոչված հանդուրժող հասարակությունը խոժոռվում է երբ ասում եք, թե հավատում եք Հիսուսին

Չորեքշաբթի, 18 հուլիսի, 2012թ, երեկոյան ժ 06:15

Զավակս, Ես սգում եմ ա յս ժամանակ, այն բանից թե ինչպես են Աստծո զավակները վախենում կամ ընկճվում հայտարարել իրենց սերը Նրա Որդի Հիսուս Քրիստոսի հանդեպ:
Այնքան շատերն այսօր աշխարհում, ովքեր սիրում են Իմ Որդուն, ընկճված են՝ բացահայտորեն հայտարարելու հանրությանը Նրա Անունը՝ վախենալով, որ հանդիմանության կենթարկվեն:
Այսօրվա այսպես կոչված հանդուրժող հասարակությունը խոժոռվում է, երբ ասում ք, թե հավատում եք Հիսուս ՔՐիստոսին՝ Մարդու Որդուն, և որ հավատում եք Նրա Ուսուցումներին:
Չնայած դրան, շատերը երկու անգամ չեն մտածում, երբ օգտագործու են Նրա Սուրբ Անունը, օրվա ընթացքում շատ անգամ, երբ հայհոյանքներ են ասաում:
Նրա անունը շատ հաճախ են տալիս, բայց ոչ այն ձևով, ինչպես այն պետք է լին:
ԱՅնքան շատերն են վախենում բաց լինել Իմ Որդու հանդեպ իրենց սիրո մեջ մի աշխարհում, որը խոժոռվում է քրիստոնեության վրա:
Աշխարհի երկու երրորդն արհամարհում է քրիստոնեությունը:
Քրիստոնյաներին ճնշում են, վիրավորում և հաճախ հալածում ինչպես ոչ մի կրոնի աշխարհում:
Աստծո ընտրյալ ժողովուրդը՝ հրանելը, տառապում են և հալածանքի ենթարկվում ամենաանմարդկային ձևով դրա պատճառով: Մի ընտրյալ ռասա, որ շուտով դարձի կգա և կողջունի Մեսիային երկրորդ անգամ, չնայած նրանք չընդունեցին Նրան առաջին անգամ:

Զավակներս, դուք ե բբեք չպետք է վախենաք Իմ Որդու անունը հռչակել: Երբ դուք բացահայտ և անվախ ձևով արտահայտեք Նրա հանդեպ ձեր ունեցած սերը , շատերը կլսեն: Որքան շատ դուք հռչակեք Նրա Սուրբ Խոսքը, այնքան վստահ կդառնաք: Հետո ավելի շատ շնորհներ կստանաք՝ ձեզ ուժ տալու համար կատարելու հաջորդ քայլը:
Որոշ ժամական անց ձեզ չի անհանգստացնի թե ուրիշներն նչ են մտածում ձեր մասին: Սակայն շատերը կազդվեն ձեր անկեղծությունից և շատերը կցանկանան ավելին իմանալ Իմ Որդու մասին:
Հիմա է ժամանակը, որ խոսքե Իմ Որդու Գթասրտության մասին որքան հնարավոր է շատ մարդկանց մոտ:
Նրանց պետք է ասվի Նրա Աստվածային Գթասրտության մասին՝ Նախազգուշացման ամենամեծ պարգի, որը կտեսնեն ողջ աշխարհով մեկ:Հետո, դրանից, հետո, նրանք կիմանան Ճշմարտությունը, և շատ ու շատ ավելի մարդիկ կցանկանան լսել Երկնքից եկող այս պատգամներին:
Շնորհակալ եմ, զավակս, որ պատասխանեցիր կանչիս:
Ձեր սիրող Երկնավոր Մայր
Մայր Փրկության

Իմ թևերը դուրս էին քաշվել իրենց բներից Իմ Խաչելության ընթացքում և, որպես այսպիսին, Թուրինի Վարշամակի վրայի պատկերն այդ ցույց է տալիս

Հինգշաբթի, 19 հուլիսի, 2012թ, առավոտյան ժ 07:00

Իմ սիելի աղջիկ, մի մեծ պլան է նյութվում խաբելու համար Աստծո զավակներին, ոպեսզի ոչնչացնեն Իմ գոյության փաստը:
Շուտով շատերն առաջ կգան, դիմակավորված որպես Ինձ նվիրված սրբազան սպասավորներ, որպեսզի փորձեն և ոչնչացնեն Իմ՝ ձեր սիրող Հիսուսի հանդեպ հավատը:
Նրանք կսկեն հարցականի տակ դնել Իմ ծնունդը, Իմ Մոր մաքրությունը և Իմ Հարությունը մեռածներից:
Նրանք այս ամենը կպղծեն և կներկայացնեն որպես կեղծ և կներկայացնեն իրենց կոչված ապացույցը, որպեսզի որքան հնարավոր է շատ քրիստոնյաներ սկսեն կասկածներ ունենալ երկրի վրա Իմ Կյանքի մասին:
Նրանք ստեր կստեղծեն Իմ Խաչելության մասին և հայտարարություններ կանեն Իմ բարոյական կերպարի մասին:
Հետո կսկսեն գրոհել մասունքների վրա, հարցականի տակ կդնեն դրանք և կփորձեն ցույց տալ դրանք որպես ոչ այլ ինչ, քան քրիստոնյաների սնոտիապաշտություն:
Նաև Թուրինի Վարշամակը՝ այն կտորը, որը ծածկել է Իմ մահացած մարմինը գերեզմանում: Նրանք վերջապես կժխտեն դրա վավերականությունը և կքարոզեն ստեր:
Նրանք կասեն, որ Իմ բազուկները չափազանց երկար են, և դա հարցականի տակ կդնեն: Սակայն նրանք չեն կարողանում հասկանալ այն չարչարանքը, որը Իմ Մարմինը ստիպված էր կրել Իմ Խաչելության ընթացքում: Իմ բազուկները դուրս էին

քաշվել իրենց բներից Իմ Խաչելության ընթացքում, և որպես այդպիսին, Թուրինի Վարշամակը դա ցույց է տալիս:
Հետո նրանք կփորձեն ապացուցել, թե Հարություն երբեք տեղի չի ունեցել: Նրանք կասեն ամեն մի սուտ, այնքան որ հուսահատորեն են փորձում սրբել վերացնել Իմ բոլոր հետքերը:
Հետո նրանք կփորձեն զրկել բոլոր նրանց, ովքեր դարձի կգան Նախազգուշացման ընթացքում, Սուրբ Խորհուրդներից և ՍՈւրբ Աստվածաշնչից:
Նրանք կարգելեն Աստվածաշունչը շատ տեղերում:
Հետո նրանք կներկայացնեն **մի նոր կեղծ գիրք,** որը, իրենց ասելով, կհռչակի միմյանց սիրելու կարևորությունը:
Նրանք կօգտագործեն քրիստոնյաների սրտում ունեցած սերը, որը Պարգև է Աստծուց, հմտորեն խաբելու համար նրանց, որ ընդունեն այսպես կոչված սիրո պատգամ:
Սիրեք միմյանց, կասեն նրանք: Հիմա սիրեք միմյանց կրոնները: Միավորվեք որպես մեկ կրոն և ճշմարիտ սեր ցույց տվեք ձեր եղբայրների և քույրերի հանդեպ:
Սեփական անձի հանդեպ սերը կլինի հիմքում ընկած պատգամը:
Առաջին հերթին սիրիր ինքդ քեզ, և դրանից հետո քեզ համար ավելի հեշտ կլինի սիրել հարևանիդ, կլինի նրանց պատգամը, և սա կլինի ամենամեծ սուտը, որը նրանք կստիպեն ձեզ, Իմ հետևորդներ, կուլ տալ:
Սեփական անձի հանդեպ սերը՝ մյուսներից առաջ, վիրավորում է Աստծուն:
Այն եսասեր է: Չլսեք այդ ստերին: Սակայն նրանք այնքան համոզիչ կլինեն, որ շատերը կհավատան այն բանին, ինչ իրենց ասվում է, և կհետևեն այդ Մեկ համաշխարհային կրոնի առաջնորդին ինչպես գառները՝ դեպի սպանդանոց:
Ներթափանցելով այնքան շատ ազգերի մեջ՝ Նոր Համաշխարհային Կրոնին թողություն կտրվի շատ կառավարությունների կողմից:
Նրանք արմատից կհանեն քրիստոնեական օրենքները:
Հետո նրանք կստեղծեն օրենքներ, որ արգելեն բոլոր կրոնները, հատկապես քրիստոնեությունը:
Նրանք կպարտադրեն տույժեր բոլոր նրանց, ովքեր չեն կատարի իրենց պահանջները:
Կոմունիզմը կլինի այս ամբողջ չարիքի երթուղին:
Ոչ թե այն պատճառով, որ կոմունիզմը քարոզում է աթեիզմ, այլ որովհետև այն կքարոզի ատելություն Աստծո հանդեպ:
Ռուսաստանն ու Չինաստանը շատ ազգերի վրա իշխանություն կունենան՝ սկսած Եվրոպայից:
Եվրոպական Միությունը՝ տասը եղջյուրներով գազանը, կուլ կգնա երկրորդ գազանին՝ ավելի անողոք ու ավելի հզոր:
Կոմունիզմը առաջ կգնա մինչև որ տարածվի ամենուր:
Այս ժամանակահատվածը երկար չի տևի: Այն կարճ կլինի:
Ձեր աղոթքները կթուլացնեն ազդեցությունը, սակայն սա կանխասացվել է և կիրականանա:
Աղոթեք, աղոթեք, աղոթեք ողջ աշխարհի դարձի համար Նախազգուշացման ընթացքում:
Եթե հոգիների մեծամասնությունը դարձի գա, ապա Մեծ Դժբախտության մեծ մասը կարող է թեթևացվել և կթեթևացվի:
Ձեր Հիսուս

Շուտով աշխարհին կներկայացվի ամենախորամանկ սուտը, որն այս էտապում մարդկության համար անհնարին է ընկալել

Ուրբաթ, 20 հուլիսի, 2012թ, երեկոյան ժ 05:46

Իմ սիրելի աղջիկ, Դժբախտության ժամանակաշրջանի մնացած երեք ու կես տարին սկսվում է 2012թ. դեկտեմբերին:
Սա այն ժամանակահատվածն է, երբ հակաքրիստոսը դուրս կգա որպես ռազմական հերոս:
Նրա հոգին տրվել է Սատանային, ով տիրում է նրա յուրաքանչյուր մասին:
Նրա ունեցած իշխանությունը նշանակում է, որ ժամանակի ընթացքում նրան կտեսնեն ոչ միայն որպես խաղաղության մարդը, այլև մարդիկ կմտածեն թե նա Ես եմ՝ Հիսուս Քրստեսը, մարդկության Փրկիչը:
Ժամանակի ընթացքում նրանք նաև կհավատան, թե հակաքրիստոսն ուղարկվել է ազդարարելու համար Երկրորդ Գալուստը:
Այնքան շատ թշվառ հոգիներ դրա հետևանքով կամովին կընդունեն նշանը՝ Գազանի նշանը: Քանի որ նա գազանն է ամեն ձևով, այն ձևի պատճառով որով Սատանան ինքն իրեն կցուցադրի նրա մարմնի մեջ:
Նա կկատարի հրաշքներ երկնքում:
Նա կբուժի մարդկանց:
Նա կլինի Նոր համաշխարհային կրոնի գլուխը, և նա ու Կեղծ մարգարեն, ով կգնա դեպի երկրի վրա Կաթոլիկ եկեղեցու կմախքը, սերտորեն կաշխատեն՝ խաբելու համար Աստծո բոլոր զավակներին:
Շուտով աշխարհին կներկայացվի ամենախորամանակ սուտը, որն այս էտապում մարդկության համար անհնարին է ընկալել:
Ձեզանից նրանց, ում տրվում է Ճշմարտության Գիրքը՝ Իմ Այս Սուրբ պատգամները՝ նախազգուշացնելու համար մարդկությանը այս բաների մասին, իմացեք հետևյալը.
Այնքան բարդացված կլինի նրանց պլանը, որ շատերը կհիմարանան այն սիրալիր մարդասիրական արտաքինով, որը նրանք կներկայացնեն իրենց չար պլանի համար:
Հակաքրիստոսն ու Կեղծ մարգարեն իրար հետ արդեն ավարտում են իրենց չար թագավորման պլանավորումը, և առաջին բանը, որը նրանք կանեն, **Միջին Արևելքում պատերազմի աճը կլինի:**
Հակաքրիստոսը կլինի այն հիմնական մարդը, որը կձգի թելերը ետնաբեմում: **Հետո նա առաջ կգա և կերևա որպես խաղաղության պլանի միջնորդ:**
Այդ ժամանակ է, որ աշխարհը կընկնի նրա խոսքի տակ:
Այդ նույն ժամանակ Կեղծ մարգարեն իշխանություն կվերցնի Կաթոլիկ եկեղեցում:
Շատ շուտով այն կներքաշվի Նոր համաշխարհային կրոնի մեջ, որը ճակատ է սատանայական պաշտամունքների համար: Սեփական անձի պաշտամունքը կլինի այդ պղծության հիմնարար նպատակը, ինչպես նաև այնպիսի օրենքների ներմուծումը, որոնք հանգեցնում են երկու բանի.
Խորհուրդների վերացմանը և մեղքի վերացմանը:

Խորհուրդները հասանելի կլինեն միայն այն քահանաների և քրիստոնյա հոգևորականների միջոցով, ովքեր կմնան Ինձ հավատարիմ: Նրանք կմատաուցեն այդ խորհուրդները հատուկ ապաստանների եկեղեցիներում:
Մեղքի վերացումը կներմուծվի այնպիսի օրենքների ներմուծման միջոցով, որոնք կսատարեն հանդուրժողականությունը:
Այդ օրենքները կընդգրկեն աբորտը, էֆթանազիան և համասեռ ամուսնությունները: Եկեղեցիներին կստիպեն թույլատրել համասեռ ամուսնությունները, իսկ քահանաներին՝ օրհնել դրանք Իմ Աչքերի առջև:
Այդ ժամանակի ընթացքում նրանք կշարունակեն ասել Սուրբ Պատարագի իրենց սեփական տարբերակը: Սուրբ Հաղորդության առաջարկումը նրանց կողմից, երբ նրանք կպղծեն սուրբ Հաղորդությունը, կկատարվի կաթոլիկ եկեղեցիներում:
Իմ Ներկայությունը չի լինի ոչ միայն այդպիսի պատարագների ժամանակ, այլև այն եկեղեցիներում, որտեղ նրանք կանարգեն Ինձ:
Այս ամենը չափազանց վախեցնող կլինի Իմ հետևորդների համար: Դուք այլևս չեք կարողանա օգտվել Խորհուրդներից, բացառությամբ երկրի վրա Իմ Մնացորդ Եկեղեցու քահանաների միջոցով:
Ահա թե ինչու Ես հիմա տալիս եմ ձեզ Ընծաներ, ինչպես Մեղքերի Ամբողջական թողությունը, ձեր մեղքերի թողության համար: Կաթոլիկների համար դա չի փոխարինի Խոստովանության գործողությանը:
Դա կլինի մի միջոց, որով դուք կկարողանաք մնալ շնորհի վիճակի մեջ:
Չնայած Նախազգուշացման ընթացքում միլիարդավոր մարդիկ դարձի կգան, այդ մարգարեությունները տեղի կունենան: Բայց դրանց մեծ մասը կարող է թուլացվել աղոթքի միջոցով՝ նվազեցնելու համար տառապանքը և հալածանքը:
Դուք, Իմ հետևորդներ, հիշեք, միշտ պաշտպանված են Կենդանի Աստծո Կնիքով:
Դուք պետք է տարածեք Կնիքը և հասցնեք այն որքան հնարավոր է շատ մարդկանց: Խնդրում եմ հասկացեք, որ Ես ասում եմ ձեզ այս բաները ձեզ նախապատրաստելու համար, որպեսզի դուք կարողանաք կանխել Գազանի Նշանի ընդունումը որքան հնարավոր է շատ մարդկանց կողմից:
Սատանան կօգտագործի տիրապետման ուժը այն հոգիների մեջ, ովքեր կվերցնեն նշանը, և չափազանց դժվար կլինի փրկել նրանց:
Դուք հրահանգներ կստանաք ձեր ճանապարհի յուրաքանչյուր քայլի ժամանակ, Իմ հետևորդներ, այս առաքելության միջոցով: Դուք չպետք է թույլ տաք, որ վախը մտնի ձեր սրտերի մեջ, քանի որ Ես կլցնեմ ձեզ խիզախությամբ, զորությամբ, կորովով և վստահությամբ, որ բարձրանաք ձեր գլուխները բարձր պահած, մինչ կքայլեք Իմ Բանակի մեջ:
Հիշեք, Սատանան չի կարող հաղթել այս մարտում, քանի որ դա երբեք չի կարող լինել:
Միայն նրանք, ովքեր ունեն ԿԵնդանի Աստծո Կնիքը և նրանք, ովքեր կմնան հավատարիմ և անսասան Աստծո հանդեպ, միան նրանք կարող են հաղթել:
Ձեր Հիսուս

Աստծո սերը կփայլի բոլոր նրանց վրա, ովքեր կխնդրեն Իմ Հորը կասեցնել հակաքրիստոսին մարդկության վրա սարսափելի տառապանք պարտադրելուց

Շաբաթ, 21 հուլիսի, 2012թ, ցերեկվա ժ 03:15

Իմ, սիրելի աղջիկ, ձեզնից նրանք, ովքեր անհանգստանում են առջևում սպասվող ժամանակներից, պետք է իմանաք, որ ողջ իշխանությունը Իմ Հավիտենական Հոր Ձեռքերում է:
Նրա միակ ցանկությունը Իր բոլոր զավակներին Գազանի ճիրաններից փրկելն է: Ցավոք, Գազանը՝ Սատանան, անտեսվում է չհավատացողների կողմից որպես երևակայության արդյունք:
Նա և չարքերի նրա բանակն ամենուր են, հուշելով Աստծո զավակներին, որ մեղանչեն իրենց մտքով, գործողություններով և արարքներով օրվա յուրաքանչյուր պահի:
Իմ Հայրը ոչ միայն ցանկանում է փրկել իր զավակներից յուրաքանչյուրի հոգին, Նա ցանկանում է պաշտպանել նրանց հակաքրիստոսի հալածանքից:
Այդ փորձությունները կանխելու, նվազեցնելու և մեղմացնելու զորությունը ձեր ձեռքերում է, Իմ հետևորդներ:
Ձեր աղոթքները կարող են թեթևացնել այդ տառապանքի մեծ մասը, որը պլանավորվում է Սատանայի բանակի կողմից գալիք տարիներին:
Նրանք, ովքեր դարձի կգան կվերադառնան Ամենաբարձրյալ Տեր Աստծո ուղիներին, նրանց կտրվեն շնորհներ՝ օգնելու կասեցնել այդ զզվելի և չար պլանի մեծ մասը, որը նյութվում է այդ չար խմբի կողմից իրենց ընկեր եղբայրների և քույրերի դեմ:
Աստծո Սերը կփայլի բոլոր նրանց վրա, ովքեր կխնդերն Իմ Հորը կասեցնել հակաքրիստոսին մարդկության վրա սարսափելի տառապանք պարտադրելուց:
Դուք պետք է սրտանց աղոթեք, որ նա /հակաքրիստոսը/ Կեղծ Մարգարեի հետ միասին արագորեն ցած գցվի:
Ձեզ, Իմ հետևորդներ, կտրվեն Խաչակրաց արշավանքի հատուկ խնդրանք աղոթքներ՝ կոտրելու և թուլացնելու նրա ուժը:
Դրանք պետք է ասվեն ամեն օր Նախազգուշացումից հետո, իսկ ամենալավը՝ Սուրբ Հաղորդության Պաշտամունքի ընթացքում:
Այդ խնդրանք աղոթքները, որոնք նախատեսված են ոչնչացնելու համար հակաքրիստոսին և նրա բանակը, հզոր ուժ կլինի, և եթե բավարար չափով հոգիներ միանան այդ աղոթնքերին, ապա դրանք նշանակալի դեր կունենան ընդհատելու այն պլանների մեծ մասը, որոնք նյութվում են հակաքրիստոսի և Կեղծ Մարգարեի կողմից:
Առաջին աղոթք խնդրանքը շուտով կտրվի ձեզ:
Ուժեղ մնացեք և վստահեք ձեր հանդեպ Իմ ունեցած սիրուն, քանի որ Իմ ցանկությունը չէ տեսնել ձեզ տառապելիս:
Ես ցանկանում եմ միայն ողջ մարդկության միավորումը առջևում սպասվող Խաղաղության Նոր Դարաշրջանում:
Միայն սրա վրա պետք է դուք կենտրոնացնեք ձեր ուշադրությունը: Ողջ տառապանքը կսրբվի և կմոռացվի երբ այդ Նոր դարաշրջանը սկսվի:
Համբերատար եղեք: Վստահեք Ինձ և իմացեք, որ Իմ Հավիտենական Հոր սերն Իր զավակների հանդեպ անհաղթահարելի է և վեր ձեր հասկացողությունից:
Սիրեք և վստահեք Նրա մեծ սիրուն և իմացեք, որ Իմ Աստվածային Գթասրտության զորությունն այնքան մեծ է, որ երբ այն պարուրի ողջ մարդկությանը, միլիարդավոր /մարդիկ/ կապաշխարեն:
Դա կլինի, երբ Սուրբ Հոգու զորությունը, որը կմտնի Աստծո զավակների մեծամասնության սրտերի մեջ, կդառնա անտանելի բեռ հակաքրիատոսի համար:

Նրա համար դժվար կլինի ներթափանցել Աստծո բանակի սպառազինության միջով:
Ահա թե ինչու դուք երբեք չպետք է հուսահատվեք: Հոգիների համար պայքարը կարող է կարճացվել և մեղմացվել, եթե բավարար չափով հոգիներ ապաշխարեն և անեն այնպես, ինչպես Ես եմ իրենց հրահանգում:
Ես սիրում եմ ձեզ բոլորիդ և հույս ունեմ որ միշտ կվստահեք Ինձ:
Ձեր Հիսուս

Դուք կհաղթեք հոգիների համար այս պատերազմը, և երկար ժամանակ չի տևի նախքան Նոր Աշխարհը՝ առանց վերջի, կհայտնվի

Կիրակի, 22 հուլիսի, 2012թ, երեկոյան ժ 07:00

Իմ սիրելի աղջիկ, շատ ընտրյալ հոգիներ մեծ տառապանք են կրում այս ժամանակ, մինչ նրանց սրտերը միահյուսվում են Իմին մեղքի խարազանի պատճառով:
Տառապանքի այս միասնականացումը, որը հիմա զգում են շատ տեսանողներ և զոհաբերվող հոգիներ, փրկելու համար է նրանց հոգիները, ովքեր Նախազգուշացման ընթացքում կմեռնեն մահացու մեղքի մեջ:
Դա մի տառապանք է, որ նմանը չունի, և կօգնի պարտության մատնել թշնամուն Նախազգուշացման ընթացքում:
Աղջիկս, դու պետք է շարունակես հրապարակել Իմ պատգամները, չնայած քեզ համար դա դժվար է հիմա անել:
Անհանգստությունն աշխարհում արագորեն կաճի, և ոչ միայն պատերազմներ կառաջանան, այլև գլոբալ բանկը կփորձի վերահսկողություն հաստատել աշխարհի արժույթների մեծ մասի վրա:
Քաոսը կիշխի, և էկոլոգիական աղետները կաճեն, մինչ Իմ Հոր Ձեռքը իջնում է՝ պատժելու համար մարդկությանը իրենց թուլության և մեղքի գերի լինելու համա ր:
Իմ հետևորդներ, ձեր աղոթքները նվազեցրել են շատ աղետներ, որոնք /այլապես/ կոչնչացնեին քաղաքներ և ազգեր:
Դուք երբեք չպետք է թողնեք աղոթելը: Տոկունությունը և Իմ հանդեպ՝ ձեր Հիսուսի հանդեպ հավատարմությունը կթեթևացնի իրավիճակը:
Դուք պետք է ուժեղ մնաք այս պայքարի ընթացքում, քանի որ շատ շուտով ամեն ինչ կփոխվի:
Չնայած սատանայի բանակի չարությանը, Իմ Բանակի աճող հավատքը կկանգնի նրանց առջև և կկասեցնի նրանց Իմ Եկեղեցին ոչնչացնելու իրենց փորձերի մեջ:
Երբեք հիասթափություն չզգաք այս աշխատանքի համար, նույնիսկ եթե երբեմն թվա թե այն անօգուտ է: Իմ Գթասրտությունը մեծ է: Իմ սերը ծածկում է Աստծո բոլոր զավակներին:
Դուք կհաղթեք հոգիների համար այս մարտը, և երկար ժամանակ չի տևի մինչև Նոր Աշխարհը՝ առանց վերջի, կհայտնվի:
Սա ձեր ապագան է, աշխարհի ապագան, որին դուք պետք է ձգտեք: Սատանայի օրերը արդեն համարյա վերջացել են:
Ուրախացեք, որովհետև շուտով տառապանքը կմոռացվի:
Ձեր Հիսուս

Կույս Մարիամ. Որպես Փրկության Մայր՝ Իմ վերջին տիտղոսը Երկնքից, թույլ տվեք Ինձ օգնել ձեզ

Երկուշաբթի, 23 հուլիսի, 2012թ, ցերեկվա ժ 04:36

Զավակս, արցունքների դաշտավայրը, որը հեղեղում է յուրաքանչյուր ազգի այնքան տարբեր ձևերով, կանխասացվել է շատ անգամ:
Չնայած դրան, նրանք չլսեցին այն նախազգուշացումները, որոնք Ես տվել եմ տեսանողներին դարերի ընթացքում:
Նրանցից ոմանք, ովքեր գիտեն Տիրոջ խոստումների մասին, ովքեր ասում են, թե Նա նորից գալու է, թագավորելու համար մի աշխարհում, որը վերջ չունի, կարող են ճանաչել նշանները:
Շատերը չեն ճանաչի, քանի որ ծանոթ չեն Ավետարանին:
Զավակներս, այս ժամանակները չափազանց դժվարին են և շփոթեցնող: Ես՝ ձեր սիրող Մայրը, ձեզ առաջարկում եմ պաշտպանություն Սատանայի դեմ, եթե միայն խնդրեք Ինձ:
Ինձ տրվել է նրան ճզմելու զորությունը: Եթե դուք կանչեք Ինձ օգնության, Ես կարող եմ թեթևացնել ձեր տառապանքը:
Զավակս, նրա ազդեցությունը պարզ է դառնում ձեզնից շատերը համար, ովքեր բացում են իրենց աչքերը:
Նրա չարությունը ցուցադրվում է Աստծո զավակներից շատերի մեջ:
Մարդասպանությունները, անիմաստ սպանությունները, պատերազմները, ագահությունը, հալածանքը, անբարոյականությունն և ավելացող մեղքերը, որոնք խախտում են Աստծո կողմից Մովսեսին տրված յուրաքանչյուր Պատվիրանը, բոլորդ եք տեսնում:
Նրանք, ովքեր քիչ հավատ ունեն և ասում են, թե դա նշանակություն չունի, պետք է իմանան այն վնասը, որը Սատանան հասցնում է իրենց հոգուն:
Նա /սատանան/ նման է մի հիվանդության, որը դժվար է բուժել: Հենց որ այն բռնում է ձեզ, այն տանում է դեպի ուրիշ, նույնիսկ ավելի վատ հիվանդություններ, քան առաջինը, այնպես, որ մեկ անգամ բուժվելը բավական չէ:
Նա այնքան արագորեն է թունաավորում հոգին, միտքը և մարմինը, որ շատ դժվար է դրանից ազատվելը:
Զավակներս, դուք չեք հասկանում, թե որքան ուժեղ և քինոտ է նա: Երբ նա վարակում է հոգուն, հանգիստ չի թողնում այդ հոգուն, այնպես որ այդ հոգին համարյա կորցնում է միտքը:
Որոշ դեպքերում այդ հոգիներն այլևս չեն ղեկավարում իրենց ազդակները /իմպուլսները/:
Որպես Աստծո բոլոր զավակների Մայր, Ես զորություն ունեմ օգնելու փրկել ձեր հոգիները:
Որպես Փրկության Մայր՝ Իմ վերջին տիտղոսը տրված Երկնքից, թույլ տվեք Ինձ օգնել ձեզ:
Դուք պետք է աղոթեք Իմ Սուրբ Վարդարանն ամեն օր պաշտպանության համար, և Սատանան հանգիստ կթողնի ձեզ ու ձեր սիրելիներին:

Երբեք մի թերագնահատեք այդ աղոթքը, քանի որ Սատանայի զորությունը նվազում է, հենց որ ասում եք այն:
Զավակներս, Աստծո զորությունը տրվում է նրանց, ովքեր կանչում են Իմ Որդուն՝ Հիսուսին, որ իրենց ուժ տա այս ժամանակներում ապրել կարողանալու համար: Այն չի կարող տրվել ձեզ, մինչև դուք չխնդրեք դա:
Ահա Խաչակրաց արշավանքի հաջորդ աղոթքը, որը պետք է ասեք Սատանայից պաշտպանվելու համար:
Խաչակրաց աղոթք (68) Պաշտպանիր ինձ Սատանայի ազդեցությունից
Մայր Աստծո, Մայր Փրկության,
Ծածկիր ինձ Քո Ամենասուրբ Թիկնոցով և պաշտպանիր
Իմ ընտանիքը Սատանայի ու նրա ընկած հրեշտակների ազդեցությունից;
Օգնիր ինձ միշտ վստահելու Քո սիրելի Որդի Հիսուս Քրիստոսի Աստվածային Գթասրտությանը,
Պահիր ինձ Նրա հանդեպ ունեցած սիրո մեջ և երբեք թույլ մի տուր հեռանալ Նրա ուսուցումների ճշմարտությունից, անկախ նրանից, թե որքան փորձություններ կդրվեն իմ առջև:
Ամեն:
Աղոթեք, աղոթեք, աղոթեք միշտ, չարից պաշտպանության համար, քանի որ նա հասցնում է սարսափելի վիրավորանքներ, վնաս և թշվառություն ձեր կյանքում:
Եթե չխնդրեք, չեք կարողանա ստանալ այս շնորհները:
Վստահեք Ինձ՝ ձեր Մորը, միշտ, քանի որ Իմ դերը Իմ Որդուն օգնելն է փրկելու համար Աստծո բոլոր զավակների հոգիները:
Ձեր սիրող Մայր
Երկրի Թագուհի,
Մայր Փրկության

Հովհաննեսին տրված և մինչ այժմ չբացահայտված մարգարեությունները ներկայացվում են այս ժամանակ, արթնացնելու համար աշխարհը

Երեքշաբթի, 24 հուլիսի, 2012թ., երեկոյան ժ 05:39

Իմ սիրելի աղջիկ, ժամանակը մոտ է, որպեսզի Ամենաբարձրյալ Աստծո վերջնական առեղծվածները բացահայտվեն ողջ աշխարհին:
Քո ձայնը, աղջիկս, վերջնականապես կավարտի Աստծո պլանը երկրի վրա՝ բացահայտելու Իմ Երկրորդ Գալուսի ճշմարտությունը:
Դու, աղջիկս, 7-րդ հրեշտակն ես, ուղարկված նախապատրաստելու Աստծո զավակներին նորոգելու իրենց հավատը, որպեսզի կարողանան փրկվել:
Մինչ դու բացահայտում ես յոթերորդ կնիքի ներսում եղած գաղտնիքները, որոնք Ես՝ Հիսուսը՝ Աստծո Գառը, հիմա բացո ւմ եմ, դու կզայրացնես շատերին:
Քո ձայնից ի ցույց կդրվեն նրանց չար ստերը, ովքեր ձևացնում են, թե Իմ Եկեղեցու ծառաներն են:

Սատանայի հետևորդների կողմից կատարված յուրաքանչյուր պիղծ գործողություն, ովքեր համարձակվում են իրենք իրենց համարել Իմ հետևորդներ, ի ցույց կդրվի:
Յուրաքանչյուր սուտ՝ մերկացված, որպեսզի բոլորը տեսնեն:
Հակաքրիստոսի կողմից ստեղծված նոր կեղծ Եկեղեցին ցույց կտրվի այպիսին ինչպիսին կա:
Աստծո զավակներին խաբելու յուրաքանչյուր փորձ գլիխվայր կշրջվի մինչ մարդկությանը փրկելու մարտը սաստկանում է:
Բոլորն ականատես կլինեն նրանց հայհոյանքներին, ովքեր չեն խոսում Իմ Սուրբ Անվամբ, **չնայած շատերը չեն ընդունի Աստծո Ճշմարտությունը մինչ այն տրվում է աշխարհին հիմա:**
Խոսքը՝ այնքան երկար թաքնված և փակված մինչև վերջը, հիմա դուրս են հեղվում Իմ շուրթերից:
Ոչ մի մարդ չի բացառվի Ճշմարտությունից: Բոլորին ցույց կտրվի Ճշմարիտ Խոսքը, մինչ Ես մեկ անգամ ևս նախապատրաստում եմ փրկել մարդկությանը հավիտենական դատապարտումից:
Հովհաննեսին տրված և մինչև այժմ չբացահայտված մարգարեությունները ներկայացվում են այս ժամանակ, արթնացնելու համար աշխարհը:
Աստվածաշունչը, այսքան երկար ժամանակից հետո, մեկ անգամ ևս կտարածվի աշխարհով մեկ:
Կույրերը նորից կտեսնեն:
Համրերը կխոսեն Ճշմարտությունը շուրթերց հոսող մեղրի պես:
Խուլերը կլսեն , և Ճշմարտությունը նրանց կբերի այն հանգստությունը, որն այնքան երկար բացակայում էր նրանց կյանքում:
Հավատի ուրացությունը կկոտրվի կբացվի և անմշակ հոգիները՝ Ճշմարտությանը քաղցած, վերջապես կընդունեն այն բաց բազուկներով:
Աստծո զորությունը հիմա ի ցույց կերևա ամեն անկյունում:
Վստահ եղեք, որ Սատանայի և նրա հետևորդների թույնը ամեն ինչ կանի, որպեսզի արգելի Աստծո սիրո միջոցով աշխարհին տրվող Ճշմարտության Գիրքը:
Նրանք անզոր կլինեն դրա դեմ, չնայած այդպես չի թվա:
Երկինքը հիմա սպասում է ժամանակին, երբ կհամախմբի ողջ մարդկությանն Իմ Փառահեղ Վերադարձի համար:
Երբեք չլեքեք Ինձ: Ողջունեք Ինձ, մինչ Ես նախապատրաստում եմ ձեզ Իմ Փառահեղ Երկրորդ Գալուստի համար:
Բերեք ձեր ընտանիքը ձեզ հետ և եկեք Իմ բազուկների մեջ, մինչ Ես նախապատրաստում եմ պարուրել ձեզ Իմ հատուկ Երկնային շնորհների պաշտպանության մեջ:
Ես կոչ եմ անում ձեզ բոլորիդ ճանաչել վերջին կանչը Իմ 7-րդ պատգամատարի միջոցով, որին իրավասություն է տրված բացահայտել յոթը փողերը, յոթերորդ կնիքի բովանդակությունը, մինչ հրեշտակների երգչախումբը նախապատրաստվում է մարգարեությունների ծավալվելուն:

Ձեր Հիսուս

Սերը նշան է Աստծուց: Անկախ նրանից, թե ինչ կրոնի կամ դավանանքի եք պատկանում, սերը կարող է գալ միայն Աստծուց

Չորեքշաբթի, 25 հուլիսի, 2012թ, երեկոյան ժ 11:30

Իմ սիրելի աղջիկ, Ես ցանկանում եմ քննարկել սիրո կարևորությունը և, թե ինչպես, առանց սիրո աշխարհը չէր կարող գոյատևել:
Աստված սեր է: Սերը գալիս է Աստծուց:
Այնտեղ, ուր սեր եք գտնում, անմիջապես զգում եք Աստծո ներկայությունը:
Գրեթե յուրաքանչյուր ոք աշխարհում սեր է զգում ինչ-որ էտապում: Սերն ազատում է հոգին և նրա մաքրությունը տալիս է ձեզ մի հայացք այն սիրո մասին, որն Աստված ունի Իր զավակներից յուրաքանչյուրի հանդեպ:
Սերը պարտության է մատնում մահին:
Սերը պարտության է մատնում չարին:
Սերը հարատև է: Այն երբեք չի կարող մահանալ, քանի որ գալիս է Աստծուց և կտևի հավիտյան:
Երբ սիրո վրա այս կյանքում հարձակում է կատարվում չարի կողմից, ով գործում է հոգիների միջոցով, այն տառապում է, թորշոմում և կարող է փոխարինվել անտարբերությամբ կամ, որոշ դեպքերում, ատելությամբ:
Միայն սիրո միջոցով է, հատկապես միմյանց հանդեպ, որ աշխարհում է կարող է գոյատևել խաղաղությունը:
Առանց սիրո մարդիկ կմեռնեին և կլինեին անպտուղ:
Երբ սիրում եք երեխային, զգում եք այն նույն տեսակի սերը, որն Իմ Հայրը պահում է Իր Սրտում աշխարհում Իր արարչության միջոցով ծնված յուրաքանչյուր երեխայի հանդեպ:
Պատկերացրեք ծնողի տառապանքը, երբ երեխան կորած է:
Այն վիշտը, անհանգստությունը և հուզմունքը նույնն են, ինչ զգում է Իմ Հայրը, երբ Նրա զավակները հեռանում են և դառնում կորած Նրա գոյության Ճշմարտության հանդեպ:
Այնուհետև պատկերացրեք այն սարսափը, որն ստիպված է կրել ծնողը, երբ նրա զավակին հնարավոր չէ գտնել:
Իսկ եթե նրանք ընդմիշտ կորա՞ծ են: Սա սրտի այն կսկիծն է, որն զգում է Իմ Հայրը, երբ Նա կորցնում է Իր զավակներին:
Ոչինչ չի մխիթարում Նրան մինչև նորից չի գտնում նրանց կամ մինչև նրանք չեն շրջվում և վազելով տուն գալիս նորից Նրա մոտ:
Ողջ արարչությունը հիմնվել է Իմ Հոր սիրո միջոցով:
Նրա Սերը հեղեղում է Երկինքը և երկիրը և ուժգնորեն զորեղ է:
Ամեն ինչ ստեղծվել է Նրա Աստվածային Սիրով և Նրա սրտի առատաձեռնությամբ, որպեսզի Նա կիսի իր արաչության բոլոր հրաշքները Իր զավակների հետ:
Նրա սերն Իր զավակների հանդեպ երբեք չի մեռնի:
Լյուցիֆերի կողմից Նրան դավաճանելը, ում Նա տվել էր ամեն ինչ, նշանակում էր, որ մարդկության հանդեպ Նրա ունեցած սերը չի փախադարձվի մարդկության մեծ մասի կողմից:

Բայց ինչպես մի մշտապես սիրող Հայր, Նրա սերն այնքան զորեղ է, որ ոչ մի բան երբեք չի կարող սպանել Նրա սերն Իր զավակների հանդեպ:
Նրա սերը նշանակում է, որ յուրաքանչյուր անձի տրվում է մի երկրորդ հնարավորություն:
Նախազգուշացումը, Իմ Հոր կողմից թույլատրված մի մեծ Ընծա, մի հատուկ կանչ է Երկնքից:
Այդ կանչը, մի մեծ գերբնական հրաշք, ձեզանից յուրաքանչյուրին կտա փրկվելու հնարավորությունը, կանչված լինելու և տրված լինելու բանալին՝ բացելու համար երկրի վրա Նոր Դրախտի դուռը:
Ձեզանից նրանք, ովքեր կընդունեն Դրախտի Բանալին, փաստորեն, պարտության կմատնեն գազանին:
Աշխարհն ի վերջո կազատվի չարից, մեղքից, տառապանքից և ամեն ցավից:
Խաղաղությունը կթագավորի:
Սերն Իմ Հոր հանդեպ կծաղկի վերջապես, և դուք բոլորդ կապրեք ըստ Նրա Աստվածային Կամքի:
Սերը մի նշան է Աստծուց: Անկախ նրանից, թե ինչ կրոնի կամ դավանանքի եք պատկանում, սերը կարող է գալ միայն Աստծուց:
Այն յուրաքանչյուր հոգում առկա լույսն է, նույնիսկ նրանց, ովքեր կարծրացած մեղավորներ են, քանի որ Աստված չի մարում Իր լույսն ընդմիշտ:
Հասկացեք այն: Գրկեք այն: Փարվեք սիրուն, քանի որ այն կառաջնորդի ձեզ դեպի Նա:
Սերը կփրկի ձեզ խավարից:
Ձեր Հիսուս

Սատանայի հետ պայմանագիրը գրեթե ավարտված է, և շուտով երկու իրադարձություն պետք է տեղի ունենան

Հինգշաբթի, 26 հուլիսի, 2012թ., երեկոյան ժ 11:55

Իմ սիրելի աղջիկ, շատ մարդիկ իսկապես չեն հասկանում Իմ Երկրորդ Գալուստի առեղծվածը:
Իմ Երկրորդ Գալուստը մի Նոր Ուխտի իրականացումն է:
Այն լինելու է կատարյալ Դրախտի ստեղծումը, որը սիրով իրականացվել էր Ադամի և Եվայի համար Իմ Սիրելի Հոր կողմից: Այն ժամանակ երկրի վրա ամեն ինչ կատարյալ ներդաշնակության մեջ էր և Աստծո Կամքին համապատասխան:
Իմ Խաչելությունից ի վեր ժամանակը ցավոտ է եղել մարդկության համար Սատանայի թագավորության պատճառով, ով ղեկավարել է երկիրն այդ ընթացքում:
Սատանայի հետ պայմանագիրը գրեթե ավարտված է, և երկու իրադարձություն պետք է շուտով տեղի ունենան:
Մարդկային ռասայի ազատագրումը տեղի կունենա Նախազգուշացման ընթացքում:
Դրանից հետո մարդիկ, ներառյալ նրանք ովքեր անտեղյակ են Աստծո գոյությանը, կգրկեն Ճշմարտությունը:
Մյուսները, ովքեր դանդաղորեն կարձագանքեն այդ մեծ հրաշքին, երբ իրենց կներկայացվի ապացույցը, դարձի կգան ժամանակի ընթացքում: Նրանք նույնպես թողություն կփնտրեն իրենց մեղավոր կյանքի համար:

Հետո գալիս է վերջնական էտապը, սրբագործումը՝ վերջնական մաքրագործումը, որպեսզի ողջ մարդկությունը հարմար լինի մտնելու կատարյալ Դրախտը:
Սա այն Դրախտն է, ուր սկզբում բնակվել են Ադամն ու Եվան: Միայն այդ ժամանակ վերջապես կկատարվի Իմ Հոր Աստվածային Կամքը, երբ բոլոր մարդիկ կսիրեն և կհարգեն Իմ Հոր Կամքը:
Նախքան այս ամենը տեղի կունենա, շատ դիմադրություն կլինի Իմ Հոր Կամքի վերջնական կատարմանը:
Աստծո զավակներին կքաշեն ամեն ուղղությամբ: Չնայած Նախազգուշացման ընթացքում Սուրբ Հոգին կհեղվի ողջ աշխարհի վրա, Սատանայի կողմից ամեն ջանք գործ կդրվի կանխելու այդ գլոբալ խոստովանությունը:
Նա և նրա չար հետևորդները նույնպես նախապատրաստվում են Նախազգուշացմանը: Նրանց վերջնական նպատակն է համոզել բոլորին, որ այն տեղի չի ունեցել:
Այնքան շատերի համար դժվար կլինի բացահայտորեն ընդունել Աստծո սերն ու Նոր Դրախտի գոյությունը քանի դեռ Սատանան քայլում է երկրի վրա:
Ազատությունը կգա միայն այն ժամանակ, երբ նա աքսորվի:
Ցավոք, նրանք, ովքեր չեն կարողանա տեսնել Ճշմարտությունը, և ովքեր բացարձակ կերպով կմերժեն ընդունել Աստծուն, երբեք չեն տեսնի Դրախտը:
Խնդրում եմ ասեք այս Խաչակրաց աղոթքը Իմ Հոր Աստվածային Կամքն ընդունելու համար:
Խաչակրաց աղոթք (69) Աղոթք Հայր Աստծուն՝ Նրա Աստվածային Կամքն ընդունելու համար
Աստված՝ Ամենակարող Հայր, ես ընդունում եմ Քո Աստվածային Կամքը,
Օգնիր Քո զավակներին ընդունել այն,
Թույլ մի տուր Սատանային ժխտել Քո զավակների իրավունքներն իրենց Հոր ժառանգության հանդեպ,
Երբեք թույլ մի տուր, որ հրաժարվենք պայքարել Դրախտում մեր ժառանգության համար,
Լսիր մեր աղերսները՝ աքսորելու համար Սատանային և նրա ընկած հրեշտակներին,
Ես խնդրում եմ Քեզ, սիրելի Հայր, մաքրագործել երկիրը Քո Սուրբ Գթասրտությամբ և ծածկել մեզ Քո Սուրբ Հոգով,
Առաջնորդիր մեզ՝ կազմելու համար Քո ամենասուրբ բանակը, որին տրված է գազանին ընդմիշտ աքսորելու զորությունը:
Ամեն:
Գնացեք խաղաղությամ:
Ձեր Հիսուս

Երբ Իմ բանակը հասնի 20 միլիոնի, Ես կբազմապատկեմ այդ թիվը՝ միլիարդների

Ուրբաթ, 27 հուլիսի, 2013թ., երեկոյան ժ 06:30

Իմ սիրելի աղջիկ, Իմ ցանկությունը՝ միավորել Իմ հետևորդներին որպես մեկ բանակ, արդեն պտուղ է տալիս այս պատգամների միջոցով:

Իմ բանակն արդեն կազմավորվել է և միավորված է Սուրբ Հոգու զորությամբ, որը տարածվում է հրդեհի նման աշխարհով մեկ:
Ձեզնից նրանք, ովքեր հիմա ընդունում են Իմ հրահանգները, չնայած կարող են մտածել, թե աշխատում են փոքր խմբերով, դուք պետք է իմանաք, որ Իմ բանակը հիմա կազմված է ավելի քան 25,000 նվիրյալ զինվորներից, ովքեր ստանում են Իմ Խաչակրաց աղոթքներն ամեն օր:
Ձեր նվիրվածությունն Իմ՝ ձեր Հիսուսի հանդեպ Ինձ այնքան շատ սփոփանք և ուրախություն է բերում, քանի որ ձեր աղոթքները ամեն օրվա յուրաքանչյուր վայրկան փրկում են միլիոնավոր հոգիների:
Եթե ականատես լինեիք նրանց երախտագիտությանը, երբեք չէիք դադարի աղոթելուց, այդպիսին է աղոթքի զորությունը:
Սատանան տառապում է այս առաքելության պատճառով և ամեն հնարավոր բան կանի այն սաբոտաժի ենթարկելու համար:
Ահա թե ինչու դուք չպետք է թույլ տաք, որ դրսից ձեզ ահաբեկեն նրանք, ովքեր ձեզ մեղադրում են հերետիկոսության մեջ, որպեսզի հետաձգեն ձեր կողմից Իմ պատգամների տարածումը:
Եթե թույլ տաք, որ ուրիշները շփոթեցնեն ձեզ, նրանք, ովքեր փորձում են ստորացնել ձեզ կամ ծաղրում են ձեր հավատը, ապա ավելի քիչ թվով հոգիներ կարող են փրկվել:
Մտածեք այս առաքելության մասին այնպես, ասես աշխաելիս լինեիք արտերկրյա բարեգործական գործակալությունում, մարդկանց այն խմբերի մեջ, ովքեր գնում են ավերված երկրներ՝ օգնելու համար սովից տառապող մարդկանց կյանքը:
Որպեսզի հաղթահարեք բոլոր դժվարությունները կենսական օգնությունը զոհերին հասցնելու համար: Մեկ ժամ ուշացումը կարող է նշանակել տարբերություն կյանքի և մահվան միջև: Նույն բանը ճշմարիտ է այս առաքելության համար:
Նայեք ձեր առջև, անտեսեք այն միջամտությունը, թե ով կփորձի ձեզ ետ քաշել, և հետո առաջ քայլեք:
Հավաքեք ուրիշներին ձեր ճանապարհին և առաջնորդեք նրանց դեպի հաղթանակ: Դեպի փրկության հաղթանակը:
Ձեր բանակը մեծանում է ամեն օր: Բռնեք Իմ ձեռքը մինչև կհասնենք Իմ ցանկացած 20 միլիոնանոց բանակին, որը տեգով կհարվածի հակաքրիստոսի դեմ մարտում:
Երբ Իմ բանակի թիվը հասնի 20 միլիոնի, Ես կբազմապատկեմ այդ թիվը միլիարդների: Եվ երբ դա տեղի ունենա, գազանը վերջնականապես կոչնչացվի:
Սա է Իմ խոստումը: Քանի որ մեծ թվերով, Աստվածային Սիրով լցված Աստծո զավակները կոչնչացնեն չարին:
Սերը, հիշեք, ավելի ուժեղ է, քան ատելությունը: Միայն սերը, առատ չափով, կարող է սրբել չարին:

Ձեր Հիսուս

Աբորտի մեղքն է, որ շատ ազգերի համար անկման պատճառ կլինի, և դրա համար նրանք կպատժվեն

Կիրակի, 29 հուլիսի, 2012թ., երեկոյան ժ 08:10

Իմ սիրելի աղջիկ, աշխարհում հավատի ուրացությունը շփոթության է մատնել Աստծո զավակներին մեղքի գոյության վերաբերյալ:
Շատ հոգիներ, երբ մտածում են Մեղքի մասին, անմիջապես մտածում են մեղքերից այնպիսի ծանրի մասին, ինչպիսին մարդասպանությունն է:
Մեղքը տարբեր ձևեր է ընդունում: Ցավոք, քանի որ մեղքը հիմա համարվում է թերություն կամ բնավորության գիծ, այն հիմա ընդունվում է որպես բնական թուլություն: Շատերն այլևս չեն հավատում մեղքին:
Աբորտը, եղբայրասպանությունից հետո, աշխարհում գենոցիդի ամենամեծ ձևն է: Չնայած դրան, այն ոչ միայն թույլատրվում է, այլև օրենքներ են ներմուծվում ձեր ազգերի կողմից, որոնք համարում են այն անհրաժեշտ:
Աբորտի մեղքն է, որ կլինի շատ ազգերի անկման պատճառը, և դրա համար նրանք խստորեն կպատժվեն:
Աբորտը արգահատելի մեղք է, և այն սրբում է Աստծո զավակների սերունդները, ովքեր չեն կարող իրենք իրենց պաշտպանել:
Ոչ մեկը չի խուսափի խիստ պատժից, եթե Աստծո զավակին սպանի:
Երկնային պատժի ընթացքում Իմ Հոր զայրույթին ականատես կլինենն այն ազգերը, որոնք օրինականացրել են աբորտը:
Նրանք կսրբվեն և նրանց հանդեպ կարեկցանք ցույց չի տրվի ճիշտ այնպես, ինչպես նրանք խղճի խայթ չէին զգում այդ մահացու մեղքի համար երբ թողություն էին տալիս արգանդի մեջ Աստծո զավակների սպանությանը:
Ես կոչ եմ անում նրանց, ովքեր խորամանկորեն փորձում են ներկայացնել աբորտը որպես մի բան, որն անհրաժեշտ է մոր իրավունքները պաշտպանելու համար:
Աստծո Օրենքը պղծող այդ ոճրագործությունը քողարկելու համար ստեր են օգտագործվում:
Ցանկացած օրենսդիր, բժիշկ կամ այլ անձ, ով ինչ-որ ձևով նպաստում է այդ պիղծ գործողությանը, մեղավոր է Աստծո աչքում և կտառապի այն պատժից, որն առջևում է:
Նրանց, ովքեր թողություն են տալիս դրա կատարմանը, Ես ասում եմ հետևյալը:
Դուք, որ թողություն եք տալիս մարդուն սպանության համար, մեղավոր եք այն նույն մեղքի համար, որի համար նա է մեղավոր:
Դուք մեղադրվում եք մարդասպանության մեջ այդ պարագայում, և դա մահացու մեղք է: Ձեզ իրավունք չի տրվել կյանք խլել: Կամ դատել: Միայն Ես՝ Հիսուս Քրիստոսը, իրավունք ունեմ դատելու:
Յուրաքանչյուր ոք, ով նպաստում է մարդասպանի մահվանը դատավճիռ ի կատար ածելու գործողության միջոցով, կտառապի հավիտենությունը դժոխքի կրակների մեջ, եթե չապաշխարի:
Ձեզնից այնքան շատերն են հավատում ակն ընդ ական օրենքին: Որքան սխալ եք դուք: Դուք չե՞ք ընդունում Իմ Հոր Պատվիրանները: Մի սպանիր:
Մի սպանիր-ը վերաբերում է նաև այն ագրեսիվ բանակներին, որոնք ներս են մտնում իրենց չպատկանող հողեր՝ վերահսկելու նպատակով:
Դա վերաբերում է այն բանակներին, ովքեր կրակում և սպանում են անմեղ հոգիների: Այս ամենը մարդասպանություն է: Այն Իմ Հոր օրենքին դեմ է:
Մյուս մեղքերը, ինչպես ագահությունը, ընչաքաղցությունը, ուրիշների մասին վատ խոսելը, խաբեությունը՝ մարդկանց զրկելու ամենից, ինչն արդարացիորեն իրենց է պատկանում, վրեժխնդրությունն ու զրպարտանքը, ամենը տանում են դեպի մյուս բոլոր մեղքերը:

Դրանք դառնում են ընդունելի ձեր աշխարհում այսօր, որովհետև ձեր ամենամեծ սերը՝ ձեր անձի հանդեպ սերն է:
Ինքնագոհացումը՝ այն սուտը, որը ձեզ ստիպել են կուլ տալ կեղծ ուսուցիչները, դեպի մեղք տանող ձեր ճանապարհն է:
Ձեզ ասվել է, որ դուք պետք է ծախսեք ձեր ժամանակը՝ հարստության հանդեպ ունեցած ձեր ծարավը հագեցնելով:
Ձեզ ասվել է, որ դուք պետք է հոգ տանեք ինքներդ ձեր մասին. Որ դուք ձեր կյանքում ամենակարևոր անձնավորությունն եք: Դուք պետք է ամեն ինչ փնտրեք՝ բավարարելու համար ձեր բոլոր զգայարանները: Մյուս բոլորը գալիս են դրանից հետո:
Դա հանգեցնում է ագահության, եսասիրության, ընչաքաղցության, իսկ հետո դուք կգայթակղվեք՝ մահացու մեղք գործելու:
Մեղքը հիմա կընդունվի ձեր ազգերի կողմից ինչպես երբեք նախկինում:
Օրենքներ կներմուծվեն, որոնք կօրինականացնեն մահացու մեղքը, և վայ նրանց, ովքեր կառարկեն:
Նրանք, ովքեր կպաշտպանեն այդպիսի չարություններ, կասեն ձեզ որ այդ օրենքները խոցելիներին պաշտպանելու համար են, այն դեպքում, երբ փաստորեն նրանց ողջ արածը կլինի մերդասպանության, աբորտի, միասեռ ամուսնության և կեղծ աստվածների կռապաշտության օրինականացումը:
Նրանք թողություն կտան խեղճերի հալածանքին և նրանց դուրս կշպրտեն փողոց՝ մուրացկան դարձնելու համար:
Նրանք կներմուծեն օրենքներ, որ հասցնեն ձեզ այն բանին, որ դադարեք ձեր կրոնը կիրառել: Կորնը կիրառելով դուք խախտած կլինեք օրենքը, որը մեղք է նրանց աչքում:
Ինչպես Ես նախկինում ասել եմ ձեզ, ձեր աշխարհն այնքան է լի ստերով /ոչ ճշմարտությամբ/, որ լավը ներկայացվում է որպես վատ, իսկ վատը՝ որպես լավ:
Ձեր աշխարհը շրջված է հակառակ, և որպես արդյունք, մեղքը ծաղկում է:
Ես կոչ եմ անում ձեզ ետ գնալ և սովորել Տասը Պատվիրանները: Ենթարկվեք դրանց և ապրեք Իմ Հոր աչքին այնպես, ինչպես ձեզնից ակնկալվում է:
Խախտեք Պատվիրանները, և դուք մեղք եք գործում: Պատճառաբանեք, որ որոշ մեղքեր լավ են, և դուք արհամարհում եք Իմ Հորը:
Հնազանդությունն Աստծո Օրենքներին թույլ է և փխրուն աշխարհում հիմա: Աստծո զավակների մեծ մասին Իմ սրբազան սպասավորների կողմից հաստատուն ձևով չի ասվել մեղքի հետևանքների մասին:
Մեղքի հանդեպ հանդուրժողականությունը մեղքերից ամենամեծն է:
Հանդուրժողականությունը մեկ այլ միջոց է՝ արդարացնելու համար մեղքը, որպեսզի այն հարմարեցնեն Սատանայի գայթակղություններին տեղի տալու մարդու թուլությանը:
Արթնացեք և ընդունեք մեղքը որպես այն, ինչ իրականում է:
Որքան էլ վիճաբանեք և ինչ ձևով էլ պաշտպանեք մեղքը, այն երբեք ընդունելի չի լինի Իմ Հոր աչքում:
Դրախտ մտնելու համար դուք պետք է ազատ լինեք մեղքից:
Մեղքից ազատվելու համար դուք պետք է ապաշխարեք:
Ապաշխարելու համար դուք պետք է առաջին հերթին ընդունեք Տասը Պատվիրանները:
Հետո պետք է ճշմարիտ զղջում ցույց տաք:

Ճշմարիտ զոջում կարող են զգալ միայն նրանք, ովքեր խոնարհեցնում են իրենց Իմ առջև:
Միայն այդ դեպքում կարող է մեղքը ներվել:
Միայն այդ դեպքում են հոգիները հարմար մտնել Իմ Հոր Թագավորություն:

Ձեր Փրկիչ
Հիսուս Քրիստոս

Իմ Կաթոլիկ Եկեղեցին պատառոտվել է, չնայած դրան, Սատանան երբեք չի վերցնի, ոչ էլ կկլանի Իմ Եկեղեցու հոգին

Երկուշաբթի, 30 հուլիսի, 2012թ., առավոտյան ժ 01:00

Իմ սիրելի աղջիկ, երբ Ես պարտեզում կրում էի տառապանքը, Սատանայի կողմից Ինձ ցույց տրված ամենամեծ պղծությունը վերջին ժամանակներում կաթոլիկ և առաքելական եկեղեցու կողմից Ինձ ցույց տրված անհավատարմությունն էր:
Այստեղ էր, որ Սատանան, ով տանջում էր Ինձ ապագայի տեսիլքներով, Ինձ ցույց տվեց ձեր այս վերջին ժամանակների եկեղեցու սպասավորների գաղջությունը:
Մեղքի հանդեպ իրենց հանդուրժողականությամբ նրանք թույլ էին տվել որ հպարտությունն ու կեղծ ճշմարտությունները կուրացնեն իրենց Աստծո ճշմարտության հանդեպ:
Նրանց նվիրվածությունը աշխարհիկ հետապնդումներին նշանակում է, որ Իմ սրբազան սպասավորներից շատերն իրենց սրտերում չունեն այն կարեկցանքն ու խոնարհությունը՝ առաջնորդելու համար Իմ հետևորդներին դեպի այն սրբագործումը, որն անհրաժեշտ է նրանց հոգիների փրկության համար:
Այնքան շատերն են շրջվել Իմ դեմ, չնայած ասում են, թե սիրում են Աստծո զավակներին:
Աստծո անունից հանդուրժողականություն քարոզելով, նրանք ներկայացնում են մի կեղծ ուսմունք, որը ծածկում է Ճշմարտության դեմքը:
Երկրի վրա Իմ Եկեղեցու այդ դասալիքները, ովքեր հռչակում են թե մի նոր տեսակ են ստեղծում հետևելու կաթոլիկ եկեղեցու անունով, բայց մերժում են Իմ ուսուցումները, գայթակղված են Սատանայի կողմից, ով ցանկանում է ոչնչացնել Իմ Եկեղեցին:
Նա՝ Չարը, արդեն սարսափելի մեղք է պատճառել՝ քայքայելու համար Իմ Եկեղեցին և հիմա ցանկանում է մեխել վերջին մեխերը, երբ կխաչի Իմ Եկեղեցին և հերթով դժոխք կգցի Իմ այն սրբազան սպասավորներին, ովքեր պղծում են խոսքը՝ ուժեղացնելով մեղքի ընդունումը Աստծո զավակների մեջ:
Նրանց մեղքը ապտակում է Իմ դեմքը՝ Իմ առջև լկտիություններ ցուցադրելով, որոնք, իրենց հայտարարությամբ, ընդունելի են և թույլատրելի Աստծո կողմից, նրանք դաժանորեն կպատժվեն:
Նրանք համարձակվում են հպարտության և խաբեության մեղքի միջոցով սխալ առաջնորդել հոգիներին և տանել նրանց դեպի խավարի անդունդ առանց հասկանալու, թե ինչպես են հոգիներին մատնում կրակի լճին:

Իմ սրբազան սպասավորներից շատերն են սխալ առաջնորդված և չգիտեն այդ մասին: Սակայն նրանցից շատերը, եթե իրենք իրենց հետ անկեցծ են, շփոթված են:
Կան նաև այնպիսիք, ովքեր ցույց են տալիս, թե Իմ սրբազան սպասավորներն են, բայց գալիս են մյուս կողմից: Գազանի ստրուկները, նրանք միտումնավոր կերպով ներկայանում են որպես Իմ օծյալ քահանաներ:
Նրանք Ինձ այնպիսի սարսափելի տանջանք են պատճառում: Նրանք ոչ միայն քայքայլում են հոգիներին, այլև գիտակցաբար դաշինք են կնքել Սատանայի հետ, ով կկլանի նրանց:
Նրանք պիղծ գործողություններ են կատարում Իմ զոհասեղանների վրա՝ Սուրբ Հաղորդության առաջ, բայց քչերը գիտեն, որ նրանք այդպիսի գործողություններ են կատարում: Չնայած դրան, Ես բաղձում են նրանց հոգիներին:
Իմ Կաթոլիկ Եկեղեցին ծվենների է մասնատվել, սակայն Սատանան երբեք չի վերցնի, ոչ էլ կկլանի Իմ Եկեղեցու հոգին: Բայց գազանը կարող է հմայել և ոչնչացնել Իմ Եկեղեցու սպասավորներին:
Սա է հիմա Իմ ժամանակը՝ միջամտելու համար, որպեսզի օգնեմ նրանց բարձրանալ այդ սարսափելի տառապանքներից:
Ես ձեր կարիքն ունեմ, Իմ հետևորդներ, և ձեր միջից այն սրբազան սպասավորները, ովքեր հասկանում են, թե ինչ է տեղի ունենում ձեր մեջ, որ ասեք Խաչակրաց այս **աղոթքը (70) աղթոք հոգևորականների համար, որ հաստատուն և հավատարիմ մնան Աստծո Սուրբ Խոսքին.**
Ոհ սիրելի Հիսուս, օգնիր Քո սրբազան սպասավորներին ճանաչել Հերձվածությունը Քո Եկեղեցու ներսում մինչ այն ծավալվում է:
Օգնիր Քո սրբազան սպասավորներին, որ հաստատումն և հավատարիմ մնան Քո Սուրբ Խոսքին:
Երբեք թույլ մի տուր որ աշխարհիկ նկրտումները մշուշեն Քո հանդեպ ունեցած նրանց մաքուր սերը:
Տուր նրանց շնորհները, որ մաքուր և խոնարհ մնան Քո առջև և պատվեն Քո Ամենասուրբ Ներկայությունը Սուրբ Հաղորդության մեջ:
Օգնիր և առաջնորդիր այն բոլոր սրբազան սպասավորներին, ովքեր գաղջ են Քո հանդեպ իրենց սիրո մեջ, և վերավառիր Սուրբ Հոգու կրակը նրանց սրտերի մեջ միշտ:
Օգնիր նրանց՝ հասկանալու իրենց առջև դրված գայթակղությունը, որը նպատակ ունի շեղել և րանց:
Բաց նրանց աչքերը, որպեսզի կարողանան միշտ տեսնել Ճշմարտությունը:
Օրհնիր նրանց, սիրելի Հիսուս, հիմա և ծածկիր նրանց Քո Թանկագին Արյամբ, որ փրկես նրանց վնասվելուց:
Տուր նրանց զորությունը՝ դիմադրելու Սատանայի գայթակղությանը, եթե հանկարծ ընկնեն մեղքի գոյությունը ժխտելու հմայիչ մոլորության մեջ:
Ամեն:
Իմ սրբազան սպասավորներն Իմ Եկեղեցու ողնաշարն են:
Նրանք առաջին շարքում են՝ դիմագրավելու համար Սատանայի կատաղի հարձակմանն այս ժամանակ:
Օգնեք Ինձ՝ ուղղորդել նրանց Իմ Եկեղեցու մնացորդը փրկելու ճանապարհի վրա մինչ այն գնում է դեպի հերձվածություն, որը քիչ ժամանակից կստեղծի Կեղծ Մարգարեն:

Հավաքվեք միասին և աղոթեք Իմ սրբազան սպասավորների միավորման համար, ովքեր անհրաժեշտ են, որպեսզի Իմ Եկեղեցին ուժող պահեն առջևում սպասվող օրերում:
Ձեր Հիսուս

Կույս Մարիամ. Իմ Որդու Ուսուցումները հռչակել չկարողանալը նշանակում է, որ Աստված մոռացվում է

Երեքշաբթի, 31 հուլիսի, 2012թ, երեկոյան ժ 06:10

Զավակս, հալածանքը, որին դիմանում ես, Ճշմարտության Գրքի հրատարակման պատճառով է:
Չարը խոչընդոտներ է դնում քո ճանապարհին և ոչնչի առաջ կանգ չի առնի քեզ թուլացնելու համար:
Կարևոր է արհամարհել այն մշտական չար ստերը, որով քեզ ներկայացնում են նրանք, ովքեր հայտարարում են թե ծանոթ են Աստծո Խոսքին:
Նրանց կողմից այս պատգամների վանումը կարևոր չէ: Դու պետք է պատասխանես միայն Իմ Որդու Խոսքին և ուրիշ ոչ մի բանի:
Դու պետք է վստահես Իմ Որդուն և մնաս լուռ երբ նրանք ստերից կուրացած փորձում են քեզ ծուղակը գցել: Մի լսիր: Մի պատասխանիր: Դրա փոխարեն պարզապես հայտարարիր Աստծո Խոսքը:
Զավակս, Քրիստոսի այնքան շատ հետևորդներ են տառապում այս ժամանակ: Նրանց ձայները սոսկ շշուկներ են մի աշխարհում, որը բղավում է աշխարհիկ հրաշքների փառքը:
Աստծո ճշմարտիտ Խոսքն արդեն բացահայտ չի հայտարարվում նույնիսկ Եկեղեցու մ Աստծո սպասավորների կողմից:
Ամաչելով այն բանից, որ իրենց կարող է տեսնեն Ճշմարտությունը բացահայտ քարոզելիս, նրանք անհույս դեգերում են՝ փնտրելով ճանապարհը աշխարհիկ /մտածողության/ կողմից պատճառված խառնաշփոթի մեջ:
Վիրավորանքը, որ հասցվում է, երբ Աստծո կամ Իմ սիրելի Որդի Հիսուս Քրիստոսի մասին են խոսում, համատարած է: Շատ քիչ հոգիներ են բավականին քաջ կանգնելու և իրենց Քրիստոսի զինվորներ հայտարարելու համար:
Նույնիսկ սուրբ հոգիներն են վախենում դա անել՝ վախենալով հեթանոսների մեջ զայրույթ առաջացնել:
Իմ Որդու Ուսուցումների Ճշմարտությունը հռչակել չկարողանալը նշանակում է, որ Աստծուն մոռանում են:
Ինչպես եմ Ես ողբում, երբ տեսնում եմ խեղճ փոքրիկ երեխաներին արհամարհված իրենց խնամակալների կողմից՝ այդ երեխաների հոգիների զարգացման գործում:
Նրանք չունեն Սուրբ Հոգու սնունդը, որովհետև նրանց չեն սովորեցրել, թե ինչպես սիրեն Աստծուն: Շաատերը չեն հավատում Հայր Աստծուն. Սա տխրեցնում է Նրան:
Քեզ, զավակս, դժվար առաջադրանք է տրվել: Երբ դու հայտնում ես աշխարհին Երկնքից տրված այս պատգամների բովանդկաությունը, դու հարձակման ես ենթարկվում երեք աղբյուրներից:

Նրանց կողմից, ովքեր հավատում են Աստծուն, բայց մերժում են լսել հիմա աշխարհին տրվող Աստծո Խոսքը:
Նրանց կողմից, ովքեր իրենց առաջնորդներ են համարում երկրի վրա Իմ Որդու Եկեղեցում, ովքեր մերժում են լսել, որովհետև չեն ընդունում մարգարեությունը:
Նաև նրանք, ովքեև ընդհանրապես չեն հավատում Աստծուն:
Քո ձայնը կշարունակի ընկնել խուլ ականջների վրա, բայց դու չպետք է թույլ տաս, որ դա քեզ հուսալքի:
Այն, ինչ պետք է անես, Իմ Որդուն ենթարկվելն է ամեն բանում, և ամեն ինչ թողնես Նրա Սուրբ Ձեռքերի մեջ:
Ժամանակի հետ նրանք կլսեն: Երբ լսեն, շատ հոգիներ սիրով և ուրախությամբ իրենց սրտում կշրջվեն դեպի Իմ Որդին:
Դու երբեք չպետք է վարանես կամ հետաձգես Իմ որդու խնդրանքին պատասխանելը, ապահովելու համար, որ աշխարհում յուրաքանչյուր մարդու տրվի Աստծո Խոսքը այս ժամանակ:
Ես խնդրում եմ Աստծո բոլոր զավակներին՝ պատասխանել Իմ կանչին՝ նվիրվածություն ցուցաբերել Իմ Որդու Սուրբ Խոսքին հիմա: Նա սիրում է Աստծո բոլոր զավակներին և ցանկանում է նախապատրաստել յուրաքանչյուր հոգու Իր երկար սպասված Երկրորդ Գալուստին:
Մի մերժեք Նրան: Ընդունեք Նրա Գթասրտության ձեռքը քանի ուշ չէ:
Ձեր սիրող Մայր
Երկրի Թագուհի
Մայր Փրկության

Թույլ տվեք Ինձ վեր բարձրացնել ձեզ, ամեն վնասից, դեպի ապահովություն Հակաքրիստոսից

Երեքշաբթի, 31 հուլիսի, 2012թ., երեկոյան ժ 08:00

Իմ սիրելի աղջիկ, լսիր Ինձ հիմա, մինչ ես տեղեկացնում եմ ձեզ, որ Իմ Ժամանական արդեն համարյա երկրի վրա է:
Ձեր ժամանակը կարճ է, մինչ խավարի օրերը խամրում են, և մի նոր արշալույս, մի նոր սկիզբ է ներս մտնում:
Վախի և անհանգստության ձեր բոլոր արցունքները համարյա ավարտվել են այն մնացած քիչ ժամանակի հետ, երբ Խաղաղության Փառահեղ Դարաշրջանը կմտնի:
Երկրի Թագավորության նորացումը շուտով տեղի կունենա, և Աստծո բոլոր զավակների վրա Իմ Իշխանությունը կգրավի Սատանայի տեղը:
Ձեզ շփոթվածությունը, Իմ հետևորդներ, հիմա Իմ կողմից ձեզ կանչելու ճշմարտացիության վերաբերյալ, կանհետանա:
Ամեն ինչ պարզ կդառնա, ինչպես Իմ Երկնային Մարմինց /բխող/ աղբյուրի բյուրեղի պես զուլալ ջրերը, որը հիմա դուրս է հորդում կլանելու համար Աստծո բոլոր զավակների սրտերը:
Ճշմարատության Լույսը կբոցավառի աշխարհը չնայած այն մշտապես աճող խավարին, որը նստել է աշխարհի յուրաքանչյուոր անկյունում ինչպես թարախակալված հիվանդություն:

Շուտով Ճշմարտությունը ձեզ ազատ կարձակի, կմաքրի ձեր բոլոր կասկածները, վախը և ձեր ներսում կարձակկի մտքի և հոգու հստակություն: Հետո, լցված Իմ Սուրբ Հոգով, մի գլոբալ դարձ տեղի կունենա:
Նրանք, ում հավատը թույլ է, կնորոգվեն, և մի նոր Քրիստոնեական Բանակի Ճշմարտությունն ի գոյություն կգա:
Հույսը, սերը և աղոթքը կպահեն ձեզ մինչ Ես առաջնորդում եմ աշխարհը դեպի վաղուց խոստացված Նոր Ժառանգություն:
Ձեզնից նրանք, ովքեր վախենում են Իմ պատգամներից, պարզապես հիշեք հետևյալը:
Աշխարհը, որը սպասում է ձեզ, մի մեծ Ընծա է ձեր և ձեր ընտանիքների համար: Դա մի Դրախտ է, որին դուք պետք է ցանկաք, քանի որ ինչպես գիտեք երկրի վրա դրա հետ ոչինչ չի կարող համեմատվել:
Եթե սիրում եք Ինձ, ապա վստահեք Իմ Բարությանը, Իմ Սիրուն, Իմ խոստումին՝ բերելու ձեզ այն Փառահեղ ժառանգության մեջ, որի համար ծնվել եք:
Թողեք ձեր բոլոր անհանգստություններն ու վախը հիմա:
Թույլ տվեք Ինձ վեր բարձրացնել ձեզ, ամեն վնասից, դեպի ապահովություն՝ Հակաքրիստոսից հեռու:

Ասեք այս Խաչակրաց աղոթքը (71) Աղոթք՝ մեզ հետապնդումից պաշտպանելու համար
Ով Հիսուս, փրկիր Աստծո զավակներին Հակաքրիստոսից:
Պաշտպանիր մեզ երկիրը վերահսկելու պլաններից:
Տեր, փրկիր մեզ հալածանքից:
Պաշտպանիր խավար հոգիներին հակաքրիստոսից, որպեսզի նրանք կարողանան ազատագրվել Քո Աչքում:
Օգնիր մեզ մեր թուլության մեջ:
Ուժեղացրու մեզ հոգով՝ բարձրանալու և առաջնորդելու մեկս մյուսին մինչ առաջ ենք քայլում Քո բանակում դեպի Դրախտի Դարպասները:
Ես Քո կարիքն ունեմ սիրելի Հիսուս:
Ես սիրում եմ Քեզ սիրելի Հիսուս:
Ես Փառաբանում եմ Քո Ներկայությունը երկրի վրա:
Ես խուսափում եմ խավարից:
Ես պաշտում են Քեզ և հանձնվում մարմնով և հոգով, որպեսզի կարողանաս բացահայտել ինձ Քո Ներկայության Ճշմարտությունը, որպեսզի ես միշտ վստահեմ Քո Գթասրտությանն ամեն անգամ:
Ամեն:
Գնացեք հիմա և նախապատրաստեք ձեր հոգիները, որպեսզի ուժեղ և հավատարիմ մնաք Ինձ, մինչ Ես տանում եմ ձեզ դեպի Հավիտենական Կյանք:
Ձեր Հիսուս

Ես խնդրում եմ Աստծո բոլոր զավակներին մեկ անգամ ևս նվիրաբերել օգոստոս ամիսը հոգիներ փրկելու համար

Չորեքշաբթի, 1 օգոստոսի, 2012թ., ցերեկվա ժ 04:45

Զավակս, հիմա աշխարհում շատ փոփոխության ականատես կլինեն, որի մասին քեզ անցյալում շատ բան է բացահայտվել:
Կլինեն շատ ավերումներ, շատ անհանգստություն և երկնային պատիժներ, և այդ բոլորը տեղի կունենան մարդկության մեղքի պատճառով:
Ես աստծո բոլոր զավակներին խնդրում եմ մեկ անգամ ևս նվիր աբերել օգոստոս ամիսը հոգիների փրկությանը:
Ահա թե ինչ պետք է անեք: Գնացեք պատարագի ամեն օր և ստացեք Սուրբ Հաղորդություն:
Հետո ամեն օր ցերեկվա ժ ամը 3-ն ասեք Աստվա ծային Գթասրտության աղոթքը:
Ձեզնից նրանք, ովքեր կարող են, պետք է պահեցողություն անեն /ծոմ պահեն/ շաբաթական մեկ օր:
Իմ զավակները շոկի մեջ կլինեն, երբ այդ փոփոխությունները գան, բայց դուք երբեք չպետք է վախենաք Իմ Հոր Ձեռքից եթե հավատարիմ եք Նրա սիրելի Որդի Հիսուս Քրիստոսի ուսուցումներին:
Խնդրում եմ ձեզ մոտիկ պահեք Կենդանի Աստծո Կնիքը ձեր տների մեջ գալիք ամիսների ընթացքում, քանի որ շատ բան տեղի կունենա:
Իմ Որդի Հիսուս Քրիստոսի Մարմինը՝ ներկա երկրի վրա Նրա Եկեղեցու մեջ, ոտնահարվում է և սարսափելի ձևով կտառոի:
Արդեն շատ պլաններ են գործում՝ տապալելու համար Իմ Որդու Եկեղեցին, և շատ շուտով այն կփլուզվի:
Կանխասացված այլ իրադարձություններ հիմա կտեսնցեն էկոլոգիական աղետների տեսքով մինր Իմ Հոր Ձեռքը կիջնի պատժելու այն ազդերի վրա որոնվ մեղսալից օրենքներին այլևս հանդուրժողականություն ցույց չի տրվի:
Աղոթեք, աղոթեք, աղոթեք այն հոգիների համար այս ժամանակ, ովքեր կտառապեն այդ իրադարձությունների ընթացքում:
Օգտագործեք այս ամիսը աղոթելու այն հոգիների համար, ովքեր կոչնչանան պատերազմների, երկրաշարժների կամ գալիք Խոստովանության՝ Նախազգուշացման ընթացքում:
Իմ սիրտը միահյուսված է ձեզ հետ, զավակներս, և միասին մենք պետք է շատ աշխատենք հոգիներ փրկելու համար:
Հոգիների փրկության համար աղոթելով մենք կատարում ենք իմ Հոր Կամքը:
Ձեր սիրոց Մայր
Մայր Փրկության

Հայր Աստված. Ճիշտ այնպես, ինչպես Իմ Որդին խաչվեց, նույն կերպ կխաչվի նաև երկրի վրա Նրա Եկեղեցին

Հինգշաբթի, 2 օգոստոսի, 2012թ., երեկոյան ժ 10:06

Իմ սիրելի աղջիկ, երկրի վրա Իմ Որդու Եկեղեցու փորձությունն արդեն սկսվել է: Խարազանումը, հալածանքը արդեն սկսվելու վրա է:
Ճիշտ այնպես, ինչպես Իմ Որդին խաչվեց, նույն կերպ կխաչվի նաև երիկրի վրա Նրա Եկեղեցին:

Փորձությունը տեղի է ունենում հիմա:
Իմ Որդին ուղարկվեց՝ մարդկությանը դժոխքի կրակներից փրկելու համար:
Նրա Մահը Խաչի վրա՝ մի սարսափելի վայրագություն, թույլ տրվեց Իմ կողմից որպես մի միջոց՝ Իմ զավակներին ապագա առաջարկելու համար:
Իմ Որդու Մարմինը դարձավ Նրա Եկեղեցին երկրի վրա: Նրա քահանաներն ու սրբազան սպասավորները գրավեցին Նրա առաքյալների տեղը:
Հիմա, մինչ Նա նորից վերադառնում է՝ մարդկությանն ազատագրելու և Իմ թանկագին զավակներին պահանջելու համար, որպեսզի նրանք կարողանան ներս մտնել Իմ Դրախտը, **պատմությունը կկրկնվի:**
Իմ Որդին քարոզեց Ճշմարտությունը և շատ մարդիկ հավաքեց, ովքեր հետևեցին Նրա ուսուցումներին ու չկասկածեցին Նրա Խոսքին:
Հետո Նրան մատնեցին նրանք, ովքեր մոտիկ էին Նրան և Նրա շարքերում էին:
Նրա Եկեղեցին՝ Կաթոլիկ Եկեղեցին, նույնպես մատնվեց հենց իր սեփական միջանցքների միջից:
Սատանայի գայթակղությունը հանգեցրեց դրան, և մի մեծ չարիք էր պատասխանատու Իմ Որդու մահվան համար:
Նրա Եկեղեցում այսօր նրա /եկեղեցու/ մահը սկսվել է որոշ ժամանակ առաջ: Ինչպես Իմ Որդու հետ եղավ, Իմ կողմից դրված Սուրբ Խոսքին հավատարիմ շատ հետևորդներ լքեցին Նրան:
Հետո սկսվեց փորձությունը, երբ Իմ Որդին մեղադրվեց հերձվածության մեջ: Նույն կերպ Իմ Որդու Եկեղեցին երկրի վրա արժանացավ նույն տառապանքին:
Իմ հավատարիմ ծառաներից շատերը լքեցին Եկեղեցին իրենց միջի չարերի միջոցով, ովքեր ծանր մեղքեր գործեցին մարդկության դեմ:
Իրենց հերթին, նրանք լքեցին Իմ Որդուն և անտեսեցին Նրա ուսուցումները:
Երկրի վրա Իմ Որդու Եկեղեցու փորձությունը լուռ է թողել նրա սպասավորներին, երբ խոսքը Նրա ուսուցումները պաշտպանելու մասին է:
Նրանք վախենում են վիրավորել նրանց, ովքեր մերժում են Իմ Որդուն, իրենց /սպասավորների/ մեջ գտնվողների մեքերի պատճառով:
Հիմա Իմ Որդու Եկեղեցին կանգնած է ամենամեծ փորձության առջև, որի նմանը չի եղել Իմ Սիրելի Որդու Խաչվելուց ի վեր:
Իմ Եկեղեցուն ծաղրում են անխղճորեն, ոչ միայն նրա թշնամիները դրսից, այլև նրա թշնամիները՝ ներսից:
Հիմա Իմ Որդու Եկեղեցու Գլխին կդրվի Փշե Պսակը, և Նրա հետևորդներից քչերը կկանգնենՆրա կողքին:
Ճիշտ ինչպես Իմ Որդու առաքյալները, բացառությամբ Հովհաննեսի, լքեցին Նրան Նրա փորձության և մահապատժի ընթացքում, նույն կերպ Վատիկանում գտնվող բարձր աստիճանավորները կլքեն Իմ Սուրբ Երեցին:
Նա, որպես Կաթոլիկ Եկեղեցու գլխավոր, ստիպված կլինի քայլել անպատվության սարսափելի ճանապարհով առանց սեփական մեղքի:
Մինչ նրան կխարազանեն, կծաղրեն և հիմարի տեղ կդնեն, այդ նրա վրա չէ, որ կթափեն չարությունը: Այդ Եկեղեցու՝ Իմ Որդու զոհաբերության պատճառով կազմված Քրիստոնեական Եկեղեցու Ճշմարտության դեմ է, որ նրանք կթափեն իրենց ատելությունը:
Քրիստոնեությունը կխարազանվի յուրաքանչյուր ծերպում, յուրաքանչյուր ազգի մեջ, յուրաքանչյուր պաշտամունքի վայրում, մինչև այն թուլանա ուժասպառությունից:

Մինչ նրան կտանեն Գողգոթայի ճանապարհով, ինչպես Իմ Որդուն տարան, նրան պարաններով կկապեն որպեսզի անհնարին դարձնեն տառապանքից խուսափելը: Հետո, մինչ նա կմագլցի բլուրը, նրան քարերով կհարվածեն, կթքեն վրան և կծաղրեն գագաթ տանող ողջ ճանապահին:

Հետո նրան կմեխեն Խաչին:

Նրան քիչ կարեկցանք ցույց կտրվի նրանց կողմից, ովքեր մեղադրում են Եկեղեցուն անմեղների դեմ գործած իր մեղքերի համար, երբ կարհամարհեն Եկեղեցու Գլխավորին՝ Իմ Որդուն:

Նրանք կմեղադրեն Նրան ուրիշների մեղքերի համար, ովքեր կատարել են դրանք Սատանայի կողմից գայթակղության ենթարկվելով:

Երբ նրանք Խաչին մեխեն Իմ Որդու Եկեղեցին, , նրանք կուղարկեն հարյուրավոր պահակներ, ճիշտ ինչպես այն վեց հարյուր զինվորները, ովքեր կանգնեցին Գողգոթայում, վստահանալու համար, որ մարմնի ոչ մի պատառ անպատիժ չմնա:

Եկեղեցուն հավատարիմ ոչ մի սպասավոր, ով կհայտարարի իր հավատարմությունը, չի խուսափի /դրանից/:

Երբ Եկեղեցին խաչվի, կապահովեն, որպեսզի այն զրկված լինի սննդից ու ջրից մինչև մահվան շունչը:

Նրա բոլոր աշակերտները, ճիշտ ինչպես Իմ Որդու առաքյալները, ոչ մի տեղ չեն երևա:

Նրանք կթաքնվեն ռեպրեսիայի վախից:

Նրա /եկեղեցու/ թվացող մահվան շնչում բոլորը կլռեն մինչև որ նրան խաչողների ողջույնները խլացնեն ողջ երկրն իրենց կեղծ ուսմունքով:

Եկեղեցու նոր գլխավորի՝ ինքնակոչի, Կեղծ Մարգարեի ձայնը կզրնգա:

Բոլորը շնորհակալությամբ կընկնեն Իմ՝ Ամենաբարձրյալ Աստծո առջև՝ թեթևացած: Քանի որ դա կթվա նոր սկիզբ:

Այդ ժամանակ է, որ Իմ Որդու Ներկայությունն արդեն շնորհ չի անի եկեղեցու զոհասեղաններին, քանի որ դա չի կարող լինել:

Այդ ժամանակ է, որ Իմ Ձեռքը կիջնի պատժելու երկնային պատժով:

Այդ ժամանակ է, որ Արմագեդդոնը կսկվի:

Այդ ժամանակ է, որ Ես կգամ Իմ Որդու միջոցով, հոգիներ փրկելու:

Մի մերժեք այս մարգարեությունը:

Մի թաքնվեք կեղծ անվտանգությունների ետևում, քանի որ այդ օրը պետք է գա:

Իմ Որդու Եկեղեցու Խաչելությունը պետք է տեղի ունենա Վերջնական Ուխտի պատճառով:

Բայց հետո Եկեղեցու՝ Նոր Երուսաղեմի Փառահեղ Հարությունը կսրբի բոլոր արցունքները, բոլոր տառապանքը, իսկ հետո Նոր Դարաշրջանը կգա:

Վստահեք Իմ Որդուն միշտ:

Երբեք մի վախեցեք, քանի որ Ես ձեր Հայրն եմ, և Ես կգամ նորոգելու երկիրը և հավաքելու Իմ բոլոր զավակներին **Դանիելի Գրքում կանխասացված այս վերջին հրաշքի ժամանակ:**

Ճշմարտության Գիրքը հիմա բացահայատվում է ձեզ, զավակներս, ինչպես խոստացվել է:

Մի մերժեք Իմ Աստվածային միջամտությունը, քանի որ Ես խոսում եմ Ճշմարտությունը:

Աստված Ամենաբարձրյալ

Կաթոլիկ Եկեղեցու դասալիքներին. պղծեք Իմ եկեղեցու օրենքները, և դուք կպատժվեք

Ուրբաթ, 3 օգոստոսի, 2012թ., ցերեկվա ժ. 04:45

Իմ սիրելի աղջիկ, երկիրը շուտով կցնցվի մինչ Իմ Հոր զայրույթը կթափվի այն ազգերի վրա, ովքեր պղծում են Իմ Հոր Օրենքները:
Գթասրտություն ցույց չի տրվի, քանի որ որ Նրա համբերությունը չափից դուրս է փորձության ենթարկվել:
Նրանց մեղքերի մեջ են աբորտը, մարդասպանությունը, օրենքները, որոնք փորձում են քայքայել քրիստոնեությունը, համասեռ ամուսնությունը և կեղծ աստվածների պաշտամունքը:
Կան նաև դասալիքներ Իմ Եկեղեցու ներսում, ովքեր սպառնում են ժխտել Ինձ:
Երբ նրանք փորձում են հեռացնել իրենց Իմ Եկեղեցուց և փորձում են ստեղծել նոր օրենքներ՝ հակառակվելով Իմ Սուրբ Կամքին, նրանք ուրանում են Ինձ:
Ես նրանց դուրս եմ նետում հիմա իրենց անհավատարմության համար: Նրանց փորձերը, ներմուծել օրենքներ հիմնված հպարտության, ընչաքաղցության և աշխարհիկ նկրտումների մեղքի վրա, չեն հանդուրժվելու:
Մի՞թե նրանք կարծում են, թե իրենց թույլ կտրվի հեռացնել Աստծո զավակներին Իմ Եկեղեցուց և խուսափել Իմ Հոր Զեռքից:
Մի՞թե նրանք կարծում են, թե իրենք Աստծո Օրենքներից բարձր են:
Նրանք չեն սիրում Աստծուն, նրանք իրենք իրենց են սիրում:
Խոնարհություն չունեցող, Կաթոլիկ Եկեղեցու Օրենքների նրանց հրապարակային մերժումը գարշելի է Ինձ:
Նրանց անամոթ պահանջները, ուր նրանք փորձում են ստիպել Իմ Եկեղեցուն ընդունել օրենքներ, որոնք վիրավորում են Ինձ, նշանակում է, որ նրանք իրենք իրենց նետել են խավարի մեջ:
Նրանց կրոնական երդումներն անիմաստ են:
Նրանց երդումը՝ պատվել և ենթարկվել Իմ եկեղեցուն, խախտվել է:
Մինչև նրանք չապաշխարեն և ետ չգան դեպի Իմ Մարմինը՝ երկրի վրա Իմ Եկեղեցին, նրանք իրավունք չեն ունենա իրենց կոչել Իմ Եկեղեցու սպասավորներ:
Ձեզ նախազգուշացվել է: Ես կնետեմ ձեզ անապատ:
Պղծեք Իմ Եկեղեցու Օրենքները, և դուք կպատժվեք:
Ձեր Հիսուս

Երբ փարիսեցիները դիտավորյալ կերպով վարձեցին ստախոսներ՝ ժխտելու համար Իմ Հարությունը, նրանք հրեաների սերունդներին զրկեցին Ճշմարտության իրավունքից

Շաբաթ, 4 օգոստոսի, 2012թ., առավոտյան ժ 10:35

Իմ սիրելի աղջիկ, մարդկությունը պետք է հասկանա մարդկային բնության թուլությունը, նախքան կկարողանա ճշմարիտ ինքն իրեն վստահել Աստծո բազուկներին:
Ձեր միջի հավատարիմներին. Իմ՝ ձեր Փրկչի հանդեպ ունեցած ձեր հավատն ու սերը Ինձ մեծ ուրախություն է բերում:
Բայց երբ ասում եք, որ սիրում եք Ինձ, դա իր հետ բերում է մեծ պատասխանատվություն:
Երբեք մի մոռացեք ձեր բնության թուլությունը, չնայած դա ձեր սեփական մեղքը չէ, քանի որ դուք ծնվել եք նախնական մեղքով, այն կարող է պատճառ դառնալ ձեր մեղանչելուն այն ժամանակ, երբ ամենաքիչն եք դա ակնկալում:
Երբ նրանց հոգիները, ովքեր ասում են, թե իրենք սիրում են Ինձ, հասնում են մի աստիճանի ուր կլանվում են Իմ հանդեպ իրենց ունեցած սիրով, այդ ժամանակ է, որ նրանք պետք է զգույշ լինեն: Երբեմն դա ստիպում է իրենց բարձրացած զգալ Իմ Աչքում, որը ճիշտ է, որովհետև դա այդպես է:
Բայց այդ ժամանակ գալիս է գայթակղությունը՝ տեսնելու մյուսներին ավելի նվազ լույսի ներքո:
Նրանք կարող են գայթակղվել ոչ միայն կարեկցանք զգալով խավարում գտնվող այդ խեղճ հոգիների հանդեպ, այլև վերևից նայել նրանց:
Երբեմն գրվածքների հանդեպ նրանց ունեցած ուժեղ հավատն ու գիտելիքը նրանց տալիս է անվտանգության կեղծ զգացողություն:
Նրանք հավատացած են, թե ամեն ինչ գիտեն Իմ Եկեղեցու ուսուցումների մասին, երկրի վրա Իմ Մարմնի՝ Իմ Եկեղեցու մասին:
Սա էր, որ տեղի ունեցավ փարիսեցիների հետ:
Նրանք կարծում էին, թե իրենք ամեն ինչ գիտեն Աստծո Օրենքների մասին: Աստծո Միրո մասին:
Նրանք չէին կարողանում հասկանալ Մեսիայի գալու մասին այնքան պարզ կերպով արված մարգարեությունները: Դա նշանակում էր, որ մերժում էին Քրիստոսին՝ Կենդանի Աստծո Որդուն, երբ Նա եկավ ինչպես խոստացված էր:
Իմ՝ Հիսուս Քրիստոսի՝ Մարդու Որդու հանդեպ նրանց ցուցաբերած դաժանությունն ամբողջապես հակասում էր այն սիրուն, որ նրանք հայտարարում էին Աստծո հանդեպ:
Եթե նրանք ճշմարիտ սիրեին Աստծուն, նրանք երբեք չեին վարվի Աստծո որևէ զավակի հետ այնպես, ինչպես արեցին:
Նրանց մտքերը փակ էին մարգարեների միջոցով աշխարհին տրված մարգարեությունների հանդեպ, որոնք հայտարարում էին Ճշմարտությունը:
Ճշմարտությունն այն է, որ բոլոր մարգարեությունները կկատարվեն, ինչպես Աստված խոստացել է:
Նրանք մերժեցին Մեսիային՝ որոշված ողջ մարդկության համար խոստացված ապագա փրկությունն ապահովելու:
Իրենց հերթին, ստերի միջոցով, երբ նրանք դիտավորությամբ ստախոսներ վարձեցին Իմ Հարությունը ժխտելու համար, փարիսեցիները զրկեցին հրեաների սերունդներին Ճշմարտության իրավունքից:
Խաչի վրա Իմ Մահը բավական չէր նրանց համար: Նրանք ցանկանում էին վստահանալ, որ դրանից հետո Ինձնից՝ աշխարհի Ազատարարից հետո, ոչ մի հետք գյություն չունենա:

Հետո նրանք ետ գնացին և առաջնորդեցին Աստծո զավակներին դեպի մի կեղծ հավատ, ուր Ճշմարտությունը դարձավ սուտ:
Հիշեք, Աստծո կողմից տրված մարգարեությունները միշտ իրականանում են:
Իմ Երկրորդ Գալուստը հիմա իրականանալու վրա է: Այս անգամ քրիստոնեական եկեղեցիների առաջնորդները կմերժեն Ինձ ճիշտ այնպես, ինչպես փարիսեցիները մերժեցին:
Նրանք կտանջեն Ինձ, Իմ մարգարեներին, Իմ ժողովրդին, և բոլոր նրանց, ովքեր կհամարձակվեն տարածել Իմ Գալուստի Ճշմարտությունը:
Մի մերժեք Ինձ այս անգամ:
Բացեք ձեր սրտերը:
Ուշադիր լսեք Ինձ, մինչ Ես նախապատրաստում եմ ձեզ աշխարհի փրկության վերջին գլխի համար:
Ձեր Հիսուս

Եթե հավատում եք Սատանայի գոյությամը, ապա իմացեք, որ աշխարհում ամեն բան, որն անարդար է ու չար, նրանից է գալիս

Կիրակի, 5 օգոստոսի, 2012թ., երեկոյան ժամը 05:45

Իմ սիրելի աղջիկ, Ես կոչ եմ անում յուրաքանչյուրին՝երիտասարդներին ու տարեցներին, ովքեր անվստահ են Աստծո հանդեպ իրենց հավատի մեջ:
Ես դիմում եմ ձեր միջից նրանց, ովքեր հավատում են Ինձ, բայց չեն խոսում Ինձ հետ, չեն օգտվում Խորհուրդներից, չեն հաճախում իրենց եկեղեցիներ՝ Ինձ պատվելու համար:
Ես սիրում եմ ձեզ: Ես երբեք չեմ լքի ձեզ, և շուտով ձեզ մի յուրահատուկ Ընծա կտրվի:
Դուք կզգաք թե ինչի նման կլինի երբ գաք Իմ առջև Դատաստանի Օրը: Այդ ժամանակ դուք կմոռանաք ձեր կասկածները:
Ձեզնից շատերը, չնայած ձեր հավատի պակասին, պատվում են Ինձ այնքան շատ ձևերով, բայց դա չեն հասկանում:
Դուք, ձեր ամենօրյա կյանքում սեր, հոգատարություն և համակրանք եք զգում այլոց հանդեպ:
Դուք մղում եք զգում պայքարել անարդարության դեմ և հակառակվում եք, երբ տեսնում եք ուրիշների կողմից իրենցից ավելի կարիքավորների հանդեպ կատարվող չար գործողություններ:
Դուք սեր եք ցուցաբերում ուրիշների նկատմամբ և խնամում նրանց, ովքեր ձեր օգնության կարիքն ունեն:
Դուք ատում եք օգտվել ուրիշների թուլությունից և զգայուն եք նրանց կարիքների հանդեպ, ովքեր տառապում են այս կյանքում:
Դուք սեր եք զգում ձեր ընտանիքի հանդեպ:
Դուք ծիծաղում և ուրախանում եք, երբ ընկերների հետ եք, և ահռելի սեր ու ընկերություն եք զգում նրանց հանդեպ, ովքեր մոտ են ձեր սրտին:

Երբ դուք ամուսնանում եք, անհաղթահարելի սեր եք զգում ձեր ամուսնու հանդեպ: Հետո, երբ դուք երեխաներ եք ունենում, ձեր զգացած սերն անցնում է երևակայության սահմաններից այն կողմ:
Դուք զղջման արցունքներ եք թափում, եթե և երբ վիրավորում եք ինչ-որ մեկին: Դուք ներում եք ուրիշներին, երբ նրանք վիրավորում են ձեզ, վիրավորանք կամ վնաս են պատճառում ձեզ:
Ձեր կարծիքով որտեղի՞ց են գալիս այդ սերն ու զգացմունքները: Մի՞թե չգիտեք, որ դրանք կարող են գալ միայն Աստծուց:
Սերը դժվար է բացատրել: Դժվար է վերլուծել, և գիտությունն այն երբեք չի կարող ապացուցել, քանի որ դա Ընծա է Աստծուց:
Ատելությունը, մյուս կողմից, գալիս է խավարից կողմից:
Սատանան Իմ ժողովրդին կարող է իրական չթվալ, բայց նա գոյություն ունի:
Ձեզնից շատերը չեն հավատում չարին կամ չար ոգիների գոյությանը, քանի որ նրանք զգուշանում են որ չբացահայտվեն:
Եթե հավատում եք Սատանայի գոյությամը, ապա իմացեք, որ աշխարհում ամեն բան, որն անարդար է ու չար, գալիս է նրանից:
Նա ստերի թագավորն է, և նա զորություն ունի կուրացնել ձեզ ձեր գոյության մասին ճշմարտությա նհանդեպ:
Ձեր կուրության պատճառով հիմա Իմ Գթասրտությունը ծածկելու է աշխարհը՝ ապացուցելու համար ձեզ, որ Ես գոյություն ունեմ:
Պատրաստ եղեք այդ օրվա համար, քանի որ դա շուտով տեղի կունենա:
Երբ ձեզ ցույց տրվեն նշանները երկնքում և տեսնեք բախումը, աղմուկը և գետնի ցնցումը, իմացեք, որ Ես եկել եմ ձեզ արթնացնելու:
Երբ դա տեղի ունենա, Ես աղերսում եմ ձեզ, որ շրջվեք դեպի Ինձ այդ ժամանակ, քանի որ Ես ցանկանում եմ լցնել ձեզ Իմ Սիրով, որպեսզի կարողանամ բերել սեր և ուրախություն ձեր սրտերի մեջ:
Երբ Իմ Գթասրտությունը գա ձեզ վրա, դուք վերջապես խաղաղություն կզգաք:
Ես սիրում եմ ձեզ և Ես երբեք չեմ լքի ձեզ:
Ես սպասում եմ ձեր պատասխանին, երբ այդ մեծ օրը գա:
Ձեր Հիսուս

Երբ այդպիսի հոգիները հարձակվում են Իմ Սուրբ Խոսքի վրա այդպիսի թույնով, դա Սատանայի հաստատելու նշանն է, որ այս պատգամները վավերական են

Երկուշաբթի, 6 օգոստոսի, 2012թ., երեկոյան ժ 06:06

Իմ սիրելի աղջիկ, շատերը կան Իմ նվիրյալ հետևորդներից, որ արշավ են դավաղրում այս առաքելությունը ոչնչացնելու համար:
Ձեզնից նրանք, ովքեր հավատացած են, թե աթեիստներն ու ոչ քրիստոնյաներն են, որ կմերժեն Իմ Խոսքն այս պատգամներում, իմացեք հետևյալը:

Ամենաշատը Ինձ կվիրավորեն նրանք, ովքեր բացահայտորեն հայտարարում են իրենց հավատն Իմ՝ իրենց Հիսուսի հանդեպ:
Այդպիսի հոգիները պատվում են մշուշով՝ ստերի թագավորի խաբեության միջոցով, ով շատ ընկած հրեշտակներ է ուղարկում նրանց մոտ: Չբավարարվելով Իմ Սուրբ Պատգամները մերժելուց, , նրանք կսկսեն հավաքել որքան հնարավոր է շատ աջակցություն Իմ քահանաների կողմից, որպեսզի փորձեն սաբոտաժի ենթարկել այս առաքելությունը:
Այդպիսի հոգիները երբեք կանգ չեն առնում իրենք իրենց հարցնելու համար թե ինչու են դա անում: Ինչու՞ են նրանք այդպիս ատելություն զգում քո հանդեպ, աղջիկս: Ինչու՞ է Իմ Սուրբ Խոսքն այդքան անհանգստացնում նրանց:
Երբ այդպիսի հոգիները հարձակվում են այդպես թույնով Իմ Սուրբ Խոսքի վրա, դա Սատանայի հաստատելու նշանն է, որ այս պատգամները վավերական են: Քանի որ երբ այդպիսի ուժեղ դիմադրություն է ցույց տրվում և երբ սուրբ մարդկանց հրահրում են հարձակվել Աստվածային պատգամների վրա ինչպիսին սրանք են, ապա կարող եք վստահ լինել, որ դրանք գալիս են Աստծուց:
Երբ նրանք մերժում են Իմ Խոսքը, դա կտրում է Ինձ, ուստի Ես տխրությամբ լալիս եմ, երբ նրանք Ինձ չեն ճանաչում:
Բայց ոչինչ: Ժամանակի ընթացքում նրանք կճանաչեն Ճշմարտությունը:
Նրանք Ինձ այն ժամանակ են մեծապես վիրավորում, երբ դիտավորյալ ձևով սկսում են հոգիներին հեռու տանել Իմ Գթաստրությունից:
Եթե նրանք պատասխանատու են հոգիների համար, որոնց մերժվել է փրկությունը, նրանք կպատժվեն:
Թեկուզ մեկ կորած հոգու համար նրանց պատիժը կլինի թշվառությունը, երբ նրանք փորձեն պաշտպանել իրենց գործողությունները:
Նրանց գործողությունները կարող են նշանակել, որ հոգին, ով այլ կերպ դարձի կգար, կտառապի վերջնական հալածանքը դժոխքի կրակներում:
Երբ նրանք փորձում են սաբոտաժի ենթարկել Աստծո Խոսքը, այդ ժամանակ է որ նրանց նախկին գործերն անօգուտ են դառնում: Քանի որ ինչ օգուտ ունեն դրանք, երբ նրանք հակազդում են այդպիսի արժանի արարքները Աստծո հանդեպ ատելության արարքներով:
Ես ասում եմ նրանց: Այն օրը, երբ կգաք Իմ առջև պատասխան տալու այդպիսի ցածրոգի գործողությունների համար, շատ դժվարին կլինի ձեզ համար: Դուք ստիպված կլինեք պատասխան տալ ոչ միայն նրանց համար, այլև այն ստերի համար, որոնք նրանք տարածում էին Իմ, Իմ Սուրբ Խոսքի մասին:
Մի՞թե Իմ Սուրբ Խոսքի վախն է, որ ձեզ տանում է այդպիսի չարության: Վախը գալիս է Սատանայից: Հպարտությունը նույնպես գալիս է Սատանայից: Մի՞թե չգիտեք, որ դա այն պատճառով է, որ համոզված եք թե այնքան լավ եք սերտել Իմ Սուրբ Գրվածքները, որ դա ձեզ ստիպում է մտածել, թե ավելին գիտեք քան այն ինչ գիտեք: Դուք սխալներ եք փնտրում Իմ Սուրբ Խոսքի մեջ ճիշտ այնպես ինչպես փարիսեցիները: Այդպես անելով դուք ասում եք, որ ավելի շատ գիտեք Ճշմարտության մասին, քան Աստված:
Հիշեք, որ որքան ավելի շատ եք ստեր տարածում Իմ Սուրբ Խոսքի մասին, դուք մեղք եք գործում Աստծո Խոսքի դեմ: Աստծո մարգարեի դեմ այդ մեղքը նրանցից մեկն է, որոնց վրա Իմ Հայրն ամենաշատն է խոժոռվում:

Նաև նրանք, ովքեր մեղանչել են Աստծո մարգարեների դեմ, պատժվել են: Քանի որ երբ նրանք փորձում են հոգիների փրկության համար աշխարհին տրվող Աստծո Խոսքը կանգնեցնել, նրանք խանգարում են հոգիների փրկությանը:
Դրա համար նրանք ցած կգլորվեն, քանի որ ոչինչ չի կանգնեցնի Աստծո Խոսքը, որ տրվում է Նրա թանկգին զավակներին:
Ձեր Հիսուս

Սա Իմ վերջին առաքելությունն է երկրի վրա, երբ Սուրբ Երրորդությունից Սուրբ Պատգամներ են տրվում աշխարհին

Երեքշաբթի, 7 օգոստոսի, 2012թ, վերեկվա ժ 03:50

Իմ սիրելի աղջիկ, քո հանդեպ Իմ սենը այնքան ուժեղ է, որքան այն մտերմիկ է, չնայած այն հիմա քեզ այդպես չի թվում:
Դու պետք է ավելի շատ ժամանակ անցկացնես Իմ Ընկերակցության մեջ, քանի որ միայն այդպես դու խաղաղություն կգտնես այս առաքելության մեջ:
Իմ Շնորհները լցնում են քո հոգին հիմա, որպեսզի կարողանաս հաղորդել աշխարհին Իմ պատգամները հնարավորինս ամենաարագ ժամանակում:
Որքան հոգնած եմ Ես և միայնակ Իմ Սրտում հիմա, աղջիկս:
Ես անհանգստանում են այն անմեղ հոգիների համար, որոնք անտեղյակ են Իմ գոյությանը: Բարի սրտով և քրիստոնյա այն իմաստով թե ինչպես են վերաբերվում ուրիշների հետ, սակայն չեն հավատում Իմ գոյությանը:
Ես ամեն օր դիտում եմ թե ինչպես են նրանք ապրում իրենց ամենօրյա կյանքը առանց Աստծո գոյության ու Նոր Դրախտում իրենց ապագա կյանքի նկատմամբ հավատի:
Խնդրում եմ օգնիր Ինձ ասել նրանց, որ Ես սիրում եմ իրենց:
Տարածիր Իմ Խոսքը, և Ես ճանաչողության զգացողություն կբոցավառեմ նրանց հոգիներում:
Նշանակություն չունի, եթե նրանք մերժեն քեզ, աղջիկս, կամ Իմ սիրելի հետևորդներին, կարևորն այն է, որ նրանց ասվի կարդալ Իմ պատգամները:
Ես կուղարկեմ Սուրբ Հոգին, որպեսզի մի կայծ, ինչքան էլ փոքր, վառի նրանց հոգիներում Իմ Սիրո բոցը:
Սա Իմ վերջին առաքելությունն է երկրի վրա, երբ Սուրբ Երրորդությունից Սուրբ Պատգամներ են տրվում աշխարհին:
Սուրբ Հոգին ներկա է աստվածային ծագում ունեցող այս Խոսքերում: Սրանք ձեր սնունդն են՝ սնելու համար ձեր հոգիները, որրպեսզի օգնեն ձեզ նախապատրաստվելու մարտին:
Լսեք Աստծո Սուրբ Խոսքը: Վերցրեք այն, բաժանեք այն և միավորեք Աստծո բոլոր զավակներին պատրաստ լինելու մարտի համար:
Բերեք ձեր բոլոր եղբայրներին ու քույրերին դեպի Իմ Մեծ Գթասրտությունը, հատկապես նրանց, ովքեր պայքարում են հավատալու Աստծուն:
Իմ Սիրտը հևում է նրանց հանդեպ սիրուց: Նրանք, նրանցից յուրաքանչյուը, Աստծո զավակ է:

Ես նրանց հոգիների կարիքն ունեմ, որպեսզի կարողանամ հոգ տանել նրանց ապագայի համար, որպեսզի նրանք հավիտենական կյանք և երջանկություն ունենան:
Ես չեմ տանում այն միտքը, թե ինչ կպատահի նրանց հետ եթե Ես չկարողանամ փրկել նրանց:
Աղջիկս, չնայած Իմ Աստվածային Գթասրտությունը կփրկի մարդկության մեծ մասին, Ես քո և Իմ հետևորդների կարիքն ունեմ, Իմ սրբազան սպասավորների և սովորական մարդկանց կարիքը, որ տարածեն ցանցը և գտնեն այն բոլոր խեղճ, դժբախտ և շփոթված մարդկանց, ովքեր Աստծո Սիրու կարքն ունեն:
Տարածեք Իմ Սիրո ցանցը, ինչպես ձկնորսները, հեռու և խոր այն վայրերում, ուր Աստված ամբողջապես մերժված է, արհամարհված և հատկապես՝ ատված:
Հետո գնացեք և գտեք Աստծո այն թանկագին երիտասարդ զավակներին, ովքեր ոչինչ չգիտեն քրիստոնեության մասին, չնայած ապրում են այսպես կոչված քրիստոնյա երկրներում:
Գնացեք այնքան հեռու, որքան Ռուսաստանը, Չինաստանը և այն երկրները ուր Աստված չեն պատվում և գրավեք հոգիներ:
Գերեք նրանց Իմ պատգամներով: Նշանակություն չունի, թե ինչպես եք հաղորդակցվում, բայց արեք դա այնպիսի ձևով, որ չթվա թե քարոզում եք:
Գրավեք նրանց այն բանի միջոցով, ինչը կարող է հետաքրքրել նրանց: Օգտագործեք ժամանակակից հաղորդակցության բոլոր միջոցները սա անելու համար: Ես ապավինում եմ Իմ բոլոր հետևորդների կողմից Իմ Խոսքի տարածմանը:
Ես ուղղություն կտամ ձեզ:
Դուք կիմանաք ձեր սրտերի մեջ, թե ինչ անեք: Խնդրեք Ինձ օգնել ձեզ այս հատուկ խաչակրաց աղոթքի միջոցով, որ ուժեղացնեմ ձեզ:
Խաչակրաց աղոթք (72) Աշակերտի աղոթքը.
Սիրելի Հիսուս, ես պատրաստ եմ տարածել Քո Սուրբ Խոսքը,
Տուր ինձ քաջությունը, ուժը և գիտելիքը՝ հայտնելու
Ճշմարտությունը, որպեսզի որքան հնարավոր է շատ հոգիներ բերվեն Քեզ մոտ:
Վերցրու ինձ Քո Սուրբ Սրտի մեջ և ծածկիր ինձ քո Թանկագին Արյամբ,
Որպեսզի լցվեմ շնորհներով՝ տարածելու համար դարձ Աստծո բոլոր զավակների փրկության համար աշխարհի ամեն մասում անկախ նրանց ունեցած հավատամքից:
Ես վստահում եմ Քեզ միշտ:
Քո սիրող աշակերտ:

Սուրբ Հոգու Ձայնը չար հայտարարելով, դուք մեղավոր եք մեծ հայհոյություն անելու մեջ

Չորեքշաբթի, 8 օգոստոսի, 2012թ., երեկոյան ժ 11:20

Իմ սիրելի աղջիկ, երբ մարդիկ հարցնում են, թե Ես ինչ ի նկատի ունեմ Աստծո Խոսքով, թույլ տուր Ինձ բացատրել:
Աստծո Խսոքը՝ ինչպես այն պարունակվում է Սուրբ Աստվածաշնչում, թե՛ Հին, և թե՛ Նոր Կտակարաններում, Ճշմարտությունն է, որը տրվում է աշխարհին այս պատգամներով Սուրբ Հոգու Ընծայի միջոցով:

Այս պատգամները ներկայացվում են Սուրբ Երրորդության կողմից, և իրենց տեսակի մեջ միակն են մարդկությանը երբևէ որևէ մարգարեի տրված պատգամներից:
Պատճառն այն է, որ սա վերջին առաքելությունն է, Աստվածային հաղորդակցության և միջամտության վերջնական ձևը, որը ներկայացվում է աշխարհին Իմ Երկրորդ Գալուստի պատճառով:
Երբեք չմիջապտեք/չխանգարեք Սուրբ Հոգու զորությանը, քանի որ սա շատ լուրջ մեղք է:
Այս պատգամներում Սուրբ Հոգու Ձայնը դուրս է հեղվում՝ մարդկությանը հավիտենական դատապարտությունից փրկելու համար:
Դուք կարող եք մերժել Ինձ՝ ձեր Հիսուսին, կամ Իմ Օրհնյալ Մոր կողմից ձեզ տրված Աստվածային պատգամները, բայց ներում ստանալ:
Քանի որ դուք բոլորդ ձեր ազատ կամքի պատճառով իրավունք ունեք տարբերել այս Սուրբ Պատգամները:
Այնուամենայնիվ, երբ մերժում եք Սուրբ Հոգին և հրապարակայնորեն հայհոյում նրա դեմ, դա հավիտենական մեղք է, և միայն Հայր Աստծո կողմից շնորհված հրաշքը կարող է փրկել ձեր հոգին:
Դուք պետք է լուռ մնաք եթե կասկածանքի մեջ եք աշխարհին տրված որևէ աստվածային պատգամի վերաբերյալ և աղոթեք տեսանողի համար: Աղոթեք և հետևեք ձեր հավատքին և շարունակեք պատվել Աստծուն ձեր ձևով: Շատ կարևոր է, որ դա անեք:
Սուրբ Հոգու Ձայնը չար հայտարարելով դուք մեղավոր եք այնպիսի մեծ հայհոյություն անելու մեջ, որն աններելի մեղք է համարվում:
Դուք կարիք ունեք խնդրել Աստծուն, որ Նա ների ձեզ հիմա, որովհետև եթե շարունակեք բարձրացնել միտումնավոր քարոզարշավներ՝ փակելու համար Սուրբ Հոգու Ձայնը, Սուրբ Երրորդության Ձայնը և այն հայտարարել որպես չար ոգի, դուք ներում չեք ստանա, ոչ էլ կկարողանաք ներում ստանալ, քանի որ դա ծանր մեղք է:
Շատ լավ քրիստոնյաներ են պատառոտում այս աշխատանքը: Նրանք ասում են, թե պատգամները չեն համապատասխանում Սուրբ Գրքերին:
Երբ նրանք ասում են դա, նրանք չգիտեն Ճշմարտությունը, որը պարունակվում է Սուրբ Աստվածաշնչում:
Նրանք կամ հարձակվում են այս պատգամների վրա՝ հիմնվելով նրանց զրույցների վրա, ովքեր հայտարարում են թե գիտեն Ճշմարտությունը, կամ էլ հայտարարում են պատգամները ոչ ճշմարիտ՝ հիմնվելով Ճշմարտության մասին իրենց ունեցած խեղաթյուրված մեկնաբանության վրա:
Նույնիսկ ավելի վատ. Նրանք շրջում են ճշմարտությունը և համեմատում այս պատգամները Սուրբ Աստվածաշնչի նոր և անհեթեթ մեկնաբանությունների հետ:
Լսեք հիմա Ինձ՝ ձեր Հիսուսին, մինչ Ես ասում եմ ձեզ սա:
Երկրի վրա Իմ եղած ժամանակ բարձրագույն քահանաները փորձում էին շրջել Աստծո Օրենքների Ճշմարտությունը, որպեսզի արդարացնեն իրենց կողմից Ինձ մերժելը:
Նրանք օգտագործում էին ստեր, որ մարդկանց ետ կանգնեցնեն Իմ Ձայնը լսելուց:
Նրանք Ինձ ստախոս, կողծ մարգարե էին հայտարարում և մեղադրում էին Ինձ հերձվածության մեջ:
Նրանք ասում էին, որ Ես հայհոյում եմ Եկեղեցու Օրենքների դեմ, և խախտում եմ Շաբաթը և Ձատկի կերակուրը պատրաստում մեկ այլ օր, քան այն, որն իրենց կարծիքով ճիշտ էր:

Նրանք ոչ միայն չէին հասկանում Ինձ, այլև բացահայտորեն մերժում էին Ինձ, որովհետև **նախապատրաստված չէին այդ ժամանակ ողջունել Ճշմարիտ Մեսիային:**
Նրանք պատրաստ չէին:
Նրանք երբեք չէին մտածում, որ ականատես կլինեն Ճշմարիտ Մեսիայի գալուն իրենց կյանքի ընթացքում:
Նրանք այնպես էին փաթաթված իրենց արարողությունների, իրենց հիերարխիկ օրենսդրությունների մեջ, որոնք այն ժամանակ բարձրացնում էին այդ առաջնորդներին և դնում իրենց եկեղեցու իսկական թագավորների պատվանդանների վրա, որ նրանք իրենց սրտերում տեղ չունեին Ինձ համար՝ մարդկության Ազատարարի համար:
Նույնը տեղի կունենա նորից, մինչ Ես նախապատրաստում եմ աշխարհն Իմ Երկրորդ Գալուստի համար:
Փարիսեցիները չէին կարողանում հասկանալ խոնարհության կարևորությունը:
Նրանք չէին կարողանում ընդունել, թե Աստված ինչպես է աշխատում այն առումով, որ չի բարձրացնում Իր Եկեղեցու հզորներին կամ ամենափորձառու կրոնական առաջնորդներին կամ չի նախազգուշացնում Իր զավակներին:
Աստված ընտրեց անգրագետներին, խոնարհներին և նրանց, որ սրտով առատաձեռն էին, որ Իր նախազգուշացումները հայտնեն մարդկությանը:
Նա բարձրացնում է թույլերին և վերև հանում նրանց տառապանքի միջոցով, որ դառնան սրտով մաքուր, որպեսզի Ինքը կարողանա ղեկավարել թե ինչպես հաղորդակցվի նրանց հետ: Այս կերպ, մարդկային հպարտությունը մարգարեի կողմից , անհավանական է որ խանգարի Ճշմարտությանը:
Նրանք մերժեցին Հովհաննես Մկրտչին և սպանեցին նրան: Նրանք սպանեցին հին ժամանակների մարգարեներին:Նրանք տանջեցին ընտրյալ հոգիներին, որոնց միջոցով Աստված խոսում էր:
Այսօր ձեր աշխարհում կարծում եք ա՞յլ կերպ է լինելու:
Դուք, Իմ նվիրյալ հետևորդներ և նրանք ովքեր հայտարարում են թե Իմ քրիստոնյա կամ այլ եկեղեցիների փորձագեներ եք, որ հավատում եք Իմ Հավիտենական Հորը, կընդունե՞ք այսօր Աստծո Խոսքը:
Ոչ, դուք կվարվեք մարգարեների հետ, ճշմարիտ մարգարեների հետ, ճիշտ այն նույն ձևով, ինչպես վարվել են սկզբից ի վեր: Դուք կանարգեք նրանց Իմ Հոր Անունով:
Բայց հիշեք սա: Երբ Ճշմարտությունը վերջնականապես բացահայտվի ձեզ, ետ դառնալ չի լինի, եթե դուք մեղավոր գտնվեք միակ հաավիտենական մեղքի մեջ: Դա այն է, եթե դուք հայհոյեք Սուրբ Հոգու դեմ:
Եթե հայհոյեք Իմ՝ Հիսուս Քրիստոսի դեմ, ներում կունենաք:
Բայց եթե դուք փակեք փրկության վերջնական պլանը՝ բացահայտորեն ծաղրելով և Իմ Եկեղեցու հավատացյալներին հավաքելով որ համառորեն **հայտարարեք, թե Սուրբ Հոգու Ձայնը կեղծ է և չար,** դուք կտառապեք հավիտենական դատապարությամբ:
Ձեր Հիսուս

Մի՞թե չգիտեք, ոչ ոչինչ եք առանձ Ինձ: Մի դատարկ անոթ, որին ոչինչ չի կարող բավարարել

Ուրբաթ, 10 օգոստոսի, 2012թ., ցերեկցա ժ 12:45

Իմ սիրելի աղջիկ, իմացիր, որ երբ հետաձգում ես Ինձ՝ քո Աստվածային Հիսուսին աղոթելը, այդ ժամանակ դու դառնում ես թույլ և Ինձնից հեռացած:
Դու երբեք չպետք է հետաձգես աղոթելը, ոչ էլ ուշացնես այն ժամանակը, որը պետք է նվիրես Ինձ ամեն օր:
Երբ դու ուշացնում ես, չարը շեղում է քեզ և լցնում միտքդ աշխարհիկ հարցերով, որոնք դատարկ են իրենց էությամբ:
Այդ ժամանակ դու դատարկություն ես զգում, և պայքարն ակնհայտ է դառնում քո հոգու ներսում:
Մի՞թե չգիտես, որ ոչինչ ես առանց Ինձ: Մի դատարկ անոթ, որին ոչինչ չի կարող բավարարել անկախ ն րանից թե որքան ուժեղ կթվա նյութական հրաշքների հրապուրանքը:
Երբ Ես վեր եմ բարձրացնում հոգուն, այլ միահյուսվում է Իմ Սուրբ Սրտին:
ԲԱյց Իմ մեջ հաստատուն մնալու համար հոգին պետք է հաղորդակցվի Ինձ հետ և մշտապես հայտարարի Իմ հանդեպ իր սերը և շնորհակալություն հայտնի: Այլապես նա կհեռացվի, ճիշտ ինչպես մանկանն են առանձնացնում իր մորից, շնվելու հետո, երբ կտրում են նրա պորտալարը:
Մի հեռացրու աչքերդ Ինձնից ոչ մի րոպե, քանի որ չարը սպասում է:
Հետո, ամենաանսպասելի պահին նա ներս է մտնում սպանելու համար և քեզ հեռու է պախցնում:
Նա օգտագործում է գայթակղության զգացումը և ուրիշ հոգիների՝ իր զոհերին տանջելու համար: Նա հատկապես թիրախ է դարձնում Իմ զինվորներին որոնք ամենաշատն են տառապում:
Սղջիկս, երբ զբաղված ես աշխատանքով դու աչքերդ հեռացնում ես Ինձնից և դա քեզ տառապանք է պատճառում: Դու դառնում ես կորած և շփոթված: Քո անհանգստությունն ավելանում է, քանի որ չարի կողմից առաջ բերված յուրաքանչյուր ընդհատում նշանակում է, որ դու հետաձգում ես Ինձ՝ քո Հիսուսի հետ նշանակված ժամը:
Երբ դա տեղի է ունենում, դու պետք է գնաս Խոստովանության, ստանաս Իմ Մարմինը և ժամանակ անցկացնես աղոթքի մեջ:
Դու երբեք չպետք է մոռանաս աղոթել Իմ Սիրելի Մոր Վարդարանը, քանի որ այն պաշտպանության օղակ է առաջարկում Սատանայի դեմ:
Գնա հիմա: Արի Ինձ մոտ այսօր աղոթքի միջոցով: Հետո, օրվա ընթացքում խոսիր Ինձ հետ ինչպես ընկերոջ հետ և կիսիր քո բոլոր մտահոգությունները: Հետո դրանք հանձնիր Ինձ և թող քո բոլոր անհանգստություններն Ինձ:
Քո Հիսուս

Գալիք անձրևները, ջրհեղեղները և բերքի ավերումները կլինեն Երկնքից եկող պատժի արդյունք

Շաբաթ, 11 օգոստոսի, 2012թ, երեկոյան ժ 08:10

Իմ սիրելի աղջիկ, անձրևները, որոնք կթափվեն ողջ աշխարհի վրա, ներկայացնում են արցունքների այն հեղեղը, որը թափվում է Իմ Աչքերից, մինչ Ես դիտում եմ, թե ինչպես են Աստծո զավակները հեռանում հավիտենական փրկության ուղուց: Գալիք անձրևները, ջրհեղեղները և բերքի ավերումները կլինեն Երկնքից եկող պատժի արդյունք:

Արցունքի հարթավայրեր դուրս կգան ամենուր, և դրա համար կմեղադրեն կլիմայի փոփոխությանը և գլոբալ տաքացմանը: Բայց դա այդպես չէ:

Այնքան շատերն աշխարհում չեն հավատում Աստծուն: Նրանք չեն պատվում Ինձ՝ Նրա սիրելի Որդուն: Դրա փոխարեն նրանք կլանված են կեղծ աստվածների հանդեպ ունեցած գրավիչ կրքով:

Ի՞նչ ի նկատի ունեմ Ես սրանով:

Այդ մարդիկ ստեղծում են հեռուստատեսության, նորաձևության, երաժշտության և սպորտի աշխարհի հերոսներ և կուռքեր:

Հետո նրանք բարձրացնում են նրանց դարձնում մարդկային կուռքեր և պատվում նրանց:

Հետո նրանք կռապաշտում են նրանց այնպիսի ձևերով, որը փչացնում է ոչ միայն հենց իրենց, այլև այն անձնավորությանը, որին վեր են հանել:

Նրանք հավատացած են, որ այդ կուռքերը սուրբ են, և անում են կարողացածը՝ կրկնօրինակելու համար նրանց կենսաոճը, հագնվելու ձևը, անհատականությունը, և նույնիսկ նրանց ֆիզիկական արտաքինը:

Դա հասնում է հեթանոսության:

Այս ամենը կանխասացվել է, աղջիկս:

Աշխարհը կպաշտի կեղծ աստվածների:

Այդ մարդիկ լի են սիրով իրենց մարմինների հանդեպ, իրենք իրենց հանդեպ և շատ քիչ բարիք կամ սեր են ցույց տալիս իրենց հարևանի հանդեպ իրենց կարծրացած սրտերում:

Նրանց սրտերը դարձել են քար:

Ննաք չեն սիրում Աստծուն: Դրա փոխարեն նրանք ընկել են Սատանայի դյութանքի տակ, ով տեղադրել է այդ հավատալիքներն ու մտքերն իրենց ուղեղներում:

Հարգանք չկա մարդկային մարմնի հանդեպ:

Մարմինը ստեղծվել է Աստծո կողմից և, որպես այդպիսին, մի տաճար է կառուցված, որի մեջ պետք է բնակվի Աստծո ներկայությունը:

Երբ Սատանան գայթակղեցնում է մարդկությանը, նա ուշադրությունը կենտրոնացնում է մարմնի վրա և այն հաճույքների վրա, որը մարմինը փնտրում է զգայարանների միջոցով:

Սիա թե ինչու հիմա մարդկությունը սիրում է իր մարմինն այդ աստիճան և դնում այն պատվանդանի վրա:

Երբեք չզոհանալով այն ձևից, ինչպիսին ստեղծել է այն Աստված, նա /մարդկությունը/ շարունակաբար փնտրում է բարելավել, փոխել ու ձևափոխել մարդկային մարմինը՝ հարմարեցնելու համար այն կատարելության իր պատկերացումներին:

Այն կերպը, որով հատկապես կանայք, փոխում են իրենց մարմիններն ու ներկայացնում այն աշխարհին անբարո կերպերով, նողկալի է Ինձ համար:

Այդ կանայք, ովքեր ամոթ չունեն իրենց մարմինը ցուցադրելիս, մեղք են գործում, սակայն հնարավոր է նույնիսկ չեն հասկանում դա: Նրանք կարծում են, թե ընդունելի է չարաշահել այն մարմինը որով ծնվել են և ցուցադրել իրենց այնպիսի ձևով, որը կարող է լինել մեղքի պատճառ:

Սեփական անձի հանդեպ նրանց սերը հպարտության ամենամեծ մեղքերից մեկն է:
Հետո նրանք համոզում են երիտասարդ աղջիկներին, որ ընդունելի է ներկայացնել իրենց մարմինները հանրության մեջ այդ ձևով:
Այնքան շատ մարմնի մեղքեր են ցուցամոլաբար ի ցույց դրվում աշխարհում և համարվում ընդունելի:
Սակայն դրանք բոլորն էլ պատժելի են մահից հետո: Ոչ միայն մեղք է գործվում, այլև այն /մեղքը/ ներկայացվում է որպես լավ բան:
Ամուսնական հավատարմության խախտումն ընդունելի է այսօր և ծափահարության է արժանանում:
Մարդասպանությունն այլևս շոկի չի մատնում, և այլևս հարգանք չկա մարդկային կյանքի հանդեպ:
Սեռական անբարոյականությունը տարածված է և արդարացված:
Այսպիսի մեղսալի վարքագծի օրերը հասնում են իրենց վերջին:
Մինչև մարդկությունը չընդունի, որ մեղքը միշտ կլինի մեղք, նրանք գրավի են դնում Դրախտի Դռներից ներս մտնելու իրավունքը:
Քանի որ յուրաքանչյուր մեղքի համար, որի մեջ մեղավոր եք, մարմնի այն մասը, որն օգտագործվել է մեղքը գործելիս, կայրվի և կմաքրագործվի քավարանում:
Եթե մահացու մեղքի մեջ եք, ապա հավիտյան կզգաք կրակի ցավը, որն անցնում է ձեր մարմնի այդ մասի միջով, որն օգտագործվել է այդ մեղքը գործելու համար: Վերջ չի լինի այդ տառապանքին:
Ինչու՞, ինչու՞ նրանք չեն լսում իրենց սրտերին: Այնքան շատերը գիտեն, որ այն, ինչ իրենք անում են սխալ է, բայց չնայած դրան շարունակում են մեղանչել, որովհետև դա ընդունելի է աշխարհի աչքում:
Ժամանցի և լրատվամիջոցների արդյունաբերությունը ստեղծել է այդպիսի կեղծ ընդունում, որ շատ անմեղ հոգիներ քայքայվել են ստերից:
Հիմա նրանց միայն Ճշմարտությունը կարող է փրկել: Նրանց տրվում է Ճշմարտության Գիրքը, բայց նրանք կլսե՞ն արդյոք: Սատանան և նրա ընկած հրեշտակները կանեն ամեն ինչ, ապահովելու համար, որ չլսեն:
Միայն այն ժամանակ, երբ երկնային պատիժները ներքև կհեղվեն երկնքից, միայն այդ ժամանակ նրանք ստիպված կլինեն հրաժարվել իրենց դատարկ անօգուտ և նողկալի սովորություններից: Քանի որ չափազանց զբաղված կլինեն՝ փորձելով գոյատևել և հաց դնել իրենց բերանների մեջ:
Ցավալի է, բայց միայն այդպիսի երկնային պատիժների միջոցով է, որ մարդկությունը կարող է մաքրագործվել երկրի վրա:
Նրանց տալով մաքրագործման ընծան, քանի դեռ կենդանի են, նրանց հնարավորություն կտրվի խուսափել կրակի լճերից:
Ձեր սիրող Փրկիչ
Հիսուս Քրիստոս

Հակաքրիստոսը կհայտարարի թե նա Ես եմ՝ Հիսուս Քրիստոսը

Կիրակի, 12 օգոստոսի, 2012թ., երեկոյան ժ 06:00

Իմ սիրելի աղջիկ, իմացիր, որ ճիշտ ինչպես Ես քեզ հրահանգում եմ նախապատրաստելու համար մարդկությանը այն փրկության համար, որն իրավամբ իրենցն է, նույն կերպով չարը նախապատրաստում է հոգիներին:
Նա նախապատրաստում է կեղծ մարգարեների խաբելու համար Աստծո զավակներին այնպես, որ նրանք ընդունեն հակաքրիստոսին որպես իրենց Հիսուսին:
Այս չարություն դժվար է քեզ համար հասկանալ, բայց Իմ հոգիներ կարդալու Ընծայի միջոցով, որը Ես տվել եմ քեզ, դու անմիջապես կիմանաս, թե ովքեր են այդ կեղծ մարգարեները:
Աղջիկս, նրանք միշտ թիրախ կդարձնեն քեզ ամենախորամանկ ձևերով, քանի որ դու կլինես նրանց թիվ մեկ հակառակորդը: Իսկ նրանց ստերը՝ քողարկված թվացող Աստծո Սուրբ Խոսքի մեջ, կծածկեն են ամենամեծ սուտը:
Նրանք կհայտարարարեն, որ կեղծ մարգարեն լինելու է ճշմարիտ Հռոմի Պապը: Նրանք սկզբում նրբորեն կհայտարարեն թե հակաքրիստոսը լինելու է Քրիստոս Թագավորը:
Երբ նրանք հմայեն խեղճ հոգիներին թե իրենց պատգամներն Աստծուց են գալիս, այդ հոգիներն ավելի խելացի չեն լինի:
Ես պետք է նախազգուշացնեմ Աստծո բոլոր զավակներին: Ես երբեք մարմնով չեմ գա երկրորդ անդամ:
Ես չեմ հայտնվի աշխարհում որպես առաջատար: Ոչ էլ այս անգամ հրաշքներ կգործեմ ապացուցելու համար թե ով եմ Ես, բացի Նախազգուշացման հրաշքից և հրաշքից երնկքում, որը տեղի կունենա Նախազգուշացման տեղի ունենալուց որոշ ժամանակ հետո:
Հակաքրիստոսը կհայտարարի, թե նա Ես եմ՝ Հիսուս Քրիստոսը: Այս պղծությունը կանխասացվել է:
Ու՞մ հավատալ, զավակներս, հեշտ առաջադրանք չէ, քանի որ շատերը կգան Իմ Անունով: Բայց իմացեք սա:
Չարը, իր կեղծ մարգարեների միջոցով, երբեք ձեզ չի ասի որ աղոթեք Սուրբ Հոգուն կամ ստանաք Սուրբ Հաղորդության Խորհուրդը:
Նա երբեք չի ընդունի, որ Ես՝ Հիսուսը, Մարդու Որդին, եկա մարմնով որպես Մեսիան՝ մարդկությանը մեղքից ազատագրելու համար:
Նա երբեք ձեզ չի խնդրի, ոչ էլ կխրախուսի ասել Սուրբ Վարդարանի աղոթքը կամ հավատարմություն ցույց տալ Իմ Սուրբ Մոր հանդեպ:
Զգոն եղեք: Արթուն մնացեք և հետևեք միայն Իմ հրահանգներին:
Չարը փորձում է բանակ կազմել Իմ հետևորդների մեջ: Չնայած նրա մյուս բանակը լավ հաստատված է երկրի վրա, նա հիմա թիրախ է դարձրել նրանց, ովքեր հավատում են Ինձ՝ ձեր Հիսուսին, որովհետև նա ցանկանում է թաքցնել իր չար արարքները սուրբ մարդկանց ետևում:
Նա կօգտագործի Իմ հանդեպ այդ մարդկանց ունեցած սերը որպես վահան՝ թաքցնելու համար այն ստերը, որը մտադիր է պարտադրել աշխարհին:
Վստահեք Իմ Խոսքերին և մի շեղվեք Ճշմարտությունից մինչ այն տրվում է ձեզ Իմ այս Սուրբ Պատգամների միջոցով հիմա աշխարհին:
Ձեր Հիսուս

Կույս Մարիամ. Զավակս, շուտով աշխարհում շատ մարգարեներ, տեսանողներ այլևս պատգամներ չեն ստանա

Երկուշաբթի, 13 օգոստոսի, 2012թ., երեկոյան ժ 07:45

Զավակս, շուտով աշխարհում շատ մարգարեներ, տեսանողներ այլևս պատգամներ չեն ստանա, որպեսզի ճանապարհ պատրաստեն այս ամենակարևոր պատգամների համար:
Տեսանողների հետ Իմ աշխատանքի մեծ մասը շուտով կդադարի՝ տեղ թողնելու համար Սուրբ Հոգու Զայնին, որը տրվում է քեզ՝ վերջին ժամանակների մարգարեին:
Շատ կեղծ մարգարեներ, ովքեր առաջ են եկել, դեռևս կշարունակեն բղավել իրենց կոկորդով մեկ, և դրանք կլիեն այն միակ ձայները, որոնք կփորձեն մրցել Երկնքից եկող այս վերջին ճշմարիտ պատգամների հետ:
Մի վախեցիր, զավակս, քանի որ դու և այս առաքելությունը պաշտպանված եք:
Միայն դու չէ որ աշխատում ես այս առաքելության համար: Ողջ Երկինքը ու բոլոր հրեշտակներն ու սրբերն են աշխատում քեզ հետ: Ահա թե ինչու դու երբեք չպետք է միայնակ զգաս, նույնիսկ երբ տառապում ես:
Աստծո թշնամիներն ամեն օր փակում են քո ճանապարհը:
Պլաններ են նախապատրաստվում գաղտնի կերպով խոչընդոտելու Ճշմարտության Գրքի հրատարակումը, բայց այդ հալածանքը համարյա ավարտվել է:
Մոտ մնա Ինձ՝ քո Մորը միշտ, որպեսզի Ես կարողանամ Իմ Սուրբ Թիկնոցը գցել քեզ վրա՝ պաշտպանելու համար քեզ չարից:
Դու ավելի ուժեղ և քաջ ես դառնում, սակայն հոգնած ես զգում: Դա կանցնի, և աշխարհը կողջունի վաղուց իրեն խոստացված Ճշմարտության Գիրքը:
Գնա հիմա և շնարհակալություն հայտնիր Աստծուն այս մեծ առաքելության համար:
Ողջ Երկինքն է օրհնում քեզ:
Մենք բռնում ենք քո ձեռքն ամեն օր, և բոլոր սրբերը պաշտպանում են քեզ:
Մարտը կսկսվի այն պահից, երբ առաջին գիրքը կվաճառվի: Այն կտարածվի աշխարհով մեկ, այնպես որ պետք է նախապատրաստվեք համապատասխան ձևով:
Կանչեք օգնության համար և կստանաք այն:
Գնա խաղաղությամբ և սիրով:
Քեր սիրող Մայր
Մայր Փրկության

Սա Իմ Գիրքն է, Իմ Խոսքը, Իմ Խոստումը

Չորեքշաբթի, 15 օգոստոսի, 2012թ., առավոտյան ժ 01:00

Իմ սիրելի աղջիկ, ես քեզ հետ խոսում եմ այս ամենակարևոր օվա մասին, որը Ես ընտրեցի իջեցնելու համար Իմ Գիրքն աշխարհին:
Սա Իմ Սիրելի Մոր Վերափոխման օրն է՝ Երկնքի Թագուհու, Երկրի Թագուհու. Փրկության Մոր:

Զուգադիպություն չէ, որ Ճշմարտության Գիրքը մատչելի է դառնում այս օրը, քանի որ Մայրը Փրկության Մայրն է: Գիրքը ողջ մարդկության հոգիները փրկել օգնելու համար է:
Իմ Մայրը կարևոր դեր է խաղում հոգիների փրկության գործում:
Նա ՀամաԱզատարարն է, Շնորհի Միջնորդուհին և Խորհրդատուն: **Սա նշանակառում է, որ Իմ Օրհնյալ Մայրն ընտրվել է Աստծո կողմից՝ օգնելու Ինձ՝ Իր Որդուն փրկության վերջնական պլանում:**
Նրա դերն այս նշանակալի ժամանակահատվածում չի հասկացվում:
Նա ծնունդ տվեց մարդկության Ազատարարին և աշխարհ բերեց Փրկության Ընծան այն պատճառով, որ ընդունեց դառնալ Իմ Մայրը:
Հիմա Նա Աստծո բոլոր զավակների Մայրն է, և նրան տրվել է զորությունը ճզմելու Սատանային, մինչ Ես նախապատրաստում եմ փրկել մարդկային ռասան Աստծո զավակներին խաբելու նրա չար պլանից:
Ճշմարտաության Գիրքը սոսկ գիրք չէ: Այն Իմ Սուրբ Խոսքն է, առաջին մասը բազմաթիվ հայտնությունների՝ դարձի բերելու համար աշխարհը:
Աղջիկս, չնայած կարող է թվալ, թե շատ դժվար է այն հրատարակելը այն բազմաթիվ խոչընդոտների պատճառով որ դրված են քո առջև, Ես վստահեցնում եմ քեզ որ այս աշխատանքը պաշտպանվում է Երկնքից:
Սա Իմ Գիրքն է: Իմ Խոսքը: Իմ Խոստումը:
Երբ Ես ասացի, որ նորից կգամ, Ես ի նկատի ունեի որ նորից կգամ:
Ճիշտ ինչպես Ես եկա աշխարհ առաջին անգամ, Աստված՝ Իմ Հավիտենական Հայրը նախապատրաստեց Իր զավակներին նախօրոք, մարգարեների միջոցով:
Շատերը լսեցին, շատերը՝ ոչ:
Երկու դեպքում էլ աշխարհը կարողացավ դրանից հետո հասկանալ Ճշմարտությունը:
Նրանք իմացան և հասկացան Խաչի վրա Իմ Տառապանքի իմաստը և այն ազատությունը որը նա տվեց աշխարհին՝ հավինտենական փրկության Ընծան ստանալու համար:Նույնը տեղի է ունենում հիմա: Աշխարհը նախապատրաստվում է Իմ Երկրորդ Գալուստին: Հիմա:
Այս պատգամների միջոոցով Աստծո Սուրբ Խոսքը տրվում է մարդկությանը որպես մի մեծ Ընծա:
Շատերը կլսեն: Շատերը չեն լսի:
Մի բան պարզ է: Շատ քչերը չեն իմանա դրա մասին:
Նրանք կամ կընդունեն կամ չեն ընդունի Իմ Խոսքը, մինչ այն տրվում է իրենց հիմա:
Ես կատարել եմ Իմ Հոր խոստումը:
Իմ Հայրը խոստացել է աշխարհին, որ նրանց կտրվի Ճշմարտության Գիրքն այս ժամանակ:
Շատերը կմարսեն Ճշմարտությունը և կընդունեն այն: Մյուսների համար Ճշմարտությունը չափազանց դառը կլինի ճաշակել և կդատապարտեն այն որպես սուտ:
Թող նրանք իմանան, որ Ուխտը կկատարվի ինչպես այս մարգարեությունները:
Ոչ մի մարդ, անկախ նրանից թե ինչպես կվիճի Իմ Սուրբ Խոսքի դեմ, չի կանխի Ճշմաարտությունը աշխարհին բացահայտելուց:
Հայտնության Գրքում պարունակվող մարգարեությունները բացահայտվում են ձեր աչքերի առաջ:

Ոչ մի մարդ չի հասկանում Հայտնության Գրքի ամբողջ իմաստը, քանի որ նրա բովանդակությունը պարզորեն չի բացահայտվել աշխարհին, որովհետև այն միայն ուղեցույց էր:
Հիմա, քանի որ Ես՝ Աստծո Գառը, գալիս եմ ինչպես խոստացված է, բացելու համար Կնիքները, քչերը կընդունեն սա:
Ինչու՞:
Եթե հավատում եք Ինձ այս պատգամներում, ինչու՞ եք մերժում Ճշմարտությունը, երբ այն տրվում է ձեզ:
Կեղծ Մարգարեի, Հակաքրիստոսի և այլ մարգարեությունների մասին ձեզ տրվող Ճշմարտությունը ընդունել չկարողանալը կնշանակի, որ դուք թույլ չեք տա Ինձ հրահանգներ տալ ձեզ հոգիների փրկության գործում:
Միայն Ճշմարտությանը հետևելով կարող եք ապահով լինել:
Հիշեք, որ միայն Ճշմարտությունը կազատի ձեզ այն ստերից, որոնք թափանցել են մարդկության մեջ Սատանայի միջոցով:
Դուք պետք է շարունակաբար կանչեք Իմ Մորը, որ օգնի ձեզ բերել Ինձ մոտ, որպեսզի պաշտպանված լինեք այն ստերից, որոնք Սատանան կօգտագործի փակել ձեր ճանապարհը Իմ Երկրորդ Գալուստից առաջ աշխարհին տրվող Իմ Սուրբ Խոսքի Ճշմարտությունից:
Գնացեք խաղաղությամբ և սիրով: Ես միավորում եմ ձեզ բոլորիդ Իմ Թանկագին Արյան պաշտպանությա մեջ այս ժամանակ:
Ես ուրախանում եմ ձեր արձագանքով, Իմ սիրելի աշակերտներ, և Ես ապավինում եմ ձեր հավատին՝ օգնելու համար Ինձ այս յուրահատուկ առաքելության մեջ:
Ձեր Հիսուս

Հեթանոսությունը ծաղկում է, իսկ խորհրդավորի /օկուլտ/ հանդեպ հիացմունքը՝ խրախուսվում

Երեքշաբթի, 16 օգոստոսի, 2012թ., առավոտյան ժ 03:15

Իմ սիրելի աղջիկ, Ես սիրում եմ Աստծո բոլոր զավակներին, բայց այս ժամանակ աշխարհը սրբող խավարի աստիճանը նշանակում է, որ Ես անհանգստությունից լաց եմ լինում նրանց հոգիների վիճակի պատճառով:
Այնքան քչերն են հասկանում իրենց ապագա կյանքի մասին ճշմարտությունը, որն սպասում է իրենց գալիք աշխարհում Խաղաղության Նոր Դարաշրջանում. Աշխարհ առանց վերջի:
Եթե նրանք միայն կարողանային տեսնել այն, զգալ այն, ճաշակել այն և ականատես լինել այն սիրուն ու խաղաղությանը, որն առջևում է, նրանք կաղոթեին Ինձ օրվա յուրաքանչյուր վայրկյան՝ խնդրելով իրավունք՝ ներս մտնել այդ Նոր Աշխարհը՝ Նոր Դարաշրջանը, Նոր Սկիզբը:
Այն իրենց ընտանիքների և բոլոր եղբայրների ու քույրերի միասնության կատարյալ վիճակն է: Այն դատարկ խոստում չէ: Այն Դրախտն է՝ ստեղծված Աստծո բոլոր զավակների համար:
Ընկած հրեշտակները որ սրբում են աշխարհը հոգիներ են փնտրում ամենուր, որպեսզի գայթակղեցնեն նրանց:

Նրանք օգագործում են բռնությունը, ատելությունը և այլ գայթակղություններ՝ խրախուսելու համար մեղքի համատարած սփռմանը, որն ակնհայտ է ամենուրեք:
Պոռնոգրաֆիան հիմա տարածվում է ամենաաննկատ ձևերով՝ գայթակղեցնելու և մեղքքը խրախուսելու համար:
Օրենքներ են ընդունվում՝ վստահանալու համար, որ մեղքն ընդունվի ամեն տեղ:
Նույնիսկ Իմ Եկեղեցին է ընդունում օրենքներ, որոնք վիրավորում են Աստծուն:
Այսպես կշարունակվի մինչև մարդկությունն իրեն պահի կենդանիների պես՝ առանց աստվածայնության գաղտղության:
Հեթանոսությունը ծաղկում է, իսկ օկուլտի հանդեպ հիացմունքը՝ խրախուսվում, այնպես որ ժամանցի աշխարհի միջոցով այն դիմի երիտասարդ հոգիներին:
Արթնացեք հիմա քանի դեռ չափազանց ուշ չէ ձեր հոգիները փրկելու համար:
Ծնողները պետք է միասնության մեջ բարձրանան Իմ Սրտի ցանկությանը համապատասխան՝ պաշտպանելու համար երիտասարդներին, որոնց հոգիները չարի թիվ մեկ թիրախն են:
Նա գիտի, թե որքան թանկ են Ինձ համար երիտասարդ հոգիները և առանց դադարի փնտրում է նրանց:
Ես խնդրում եմ ձեզ ասել այս Խաչակրաց աղոթքը (73) երիտասարդ հոգիների համար, երիտասարդ երեխաների համար
Ո՜հ Հիսուս, օգնիր ինձ փրկելու երիտասարդների հոգիները ողջ աշխարհում,
Քո շնորհի միջոցով օգնիր նրանց տեսնել Քո գոյության ճշմարտությունը:
Բեր նրանց Քո Սուրբ Սրտի մեջ և բաց նրանց աչքերը Քո Սիրո և Գթասրտության հանդեպ:
Փրկիր նրանց դժոխքի կրակներից, և իմ աղոթքների միջոցով Գթասրտություն ցույց տուր նրանց հոգիների հանդեպ:
Ամեն:
Ձեր Հիսուս

Այս ժամանակը նմանեցվում է փոթորկից առաջ եղող հանդարտությանը: Օգտագործեք այն՝ նախապատրաստատելու համար որքան հնարավոր է շատ մարդկանց

Կիրակի, 19 օգոստոսի, 2012թ, երեկոյան ժ 10;56

Իմ սիրելի աղջիկ, երբ դու տառապում ես Իմ պատճառով և մեկուսացված ես զգում ու Ինձնից ետ մնացած, իմացիր որ այդ ժամանակ է որ դու ամենամոտիկն ես գտնվում Իմ Սուրբ Սրտին:
Չնայած Իմ այս Ճշմարտության Գիրքը մի ընծա է աշխարհին Իմ կողմից, և պաշտպանվում է Երկնքից, դա չի նշանակում որ այս ճամփորդությունը ցվոտ չի լինի քեզ համար:
Դու կզգաս քննադատություն և նոր տեակի հարձակում հիմա , երբ Իմ Սուրբ Խոսքը տպագրված է աշխարհի հետ կիսելու համար:

Դու երբեք չպետք է պատասխանես նրանց, ովքեր կպահանջեն քեզ բացատրել թե ինչու էր այս գիրքն անհրաժեշտ: Մնա լուռ և շարունակիր Իմ աշխատանքը:
Թույլ չտաս որ ինչ որ մեկը դադարեցնի կամ ուշացնի Իմ Գրքի տարածումը, քանի որ յուրաքնչյուր օրը նշանակություն ունի որովհետև սահմանափակ է այն ժամանակը, որը տրվել ու հոգիներին իրենք իրենց Իմ Աչքում ազատագրելու համար:
Թույլ տուր Ինձ վստահեցնել քեզ, աղջիկս, և Իմ բոլոր հետևորդներին, որ հիմա դուք սկսում եք մի ճամփորդություն, մի ուխտագնացություն, ինչպիսի չի եղել:
Այս ժամանակը համեմատվում է փոթորկից առաջ եղած հանդարտության հետ:
Օգտագործեք այն նախապատրաստելու համար որքան հնարվոր է շատ մարդկանց:
Տարածեք Իմ պատգամները, Իմ խաչակրաց աղոթքները և աղոթեք ձեր եղբայրների ու քույրերի համար որպեսզի Նախազգուշացմանը նրանք ընդունեն Իմ Գթասրտությունը:
Հավաքեք Իմ Եկեղեցին միասին և աղոթեք զորության համար, քանի որ Կեղծ Մարգարեն նախապատրաստվում է և արդեն ներկա է Վատիկանում: Բայց նա թաքցնում է իր ճշմարիտ ֆասադը շատ զգուշությամբ: Իմ սիրելի Երեցին մեկուսացնում են, և ժամանակը շատ կարճ է:
Ես ցանկանում եմ որ բոլորդ սկսեք աղոթքների մի նոր շարք (litany) Կեղծ Մարգարեից պաշտպանվելու համար, և ասեք այդ աղոթքները օրական մեկ անգամ այժմվանից սկսած:
Խաչակրաց աղոթքները պետք է ընտրվեն տարբեր չափերով և ասվեն որքան կարող եք:
Ահա առաջին Հիսուսը մարդկությանը (litany) աղոթքը. Պաշտպանություն Կեղծ Մարգարեից
Թանկագին Հիսուս, փրկիր մեզ Կեղծ Մարգարեի խաբեությունից:
Հիսուս գթա մեզ:
Հիսուս փրկիր մեզ հալածանքից:
Հիսուս պահպանիր մեզ Հակաքրիստոսից:
Տեր գթա:
Քրիստոս գթա:
Թանկագին Հիսուս ծածկիր մեզ Քո Թանկագին Արյամբ:
Թանկագին Հիսուս բաց մեր աչքերը Կեղծ Մարգարեի ստերի հանդեպ:
Թանկագին Հիսուս միավորիր Քո Եկեղեցին:
Հիսուս պաշտպանիր մեր սրբությունները:
Հիսուս թույլ մի տուր որ Կեղծ Մարգարեն բաժանի Քո Եկեղեցին:
Սիրելի Հիսուս օգնիր մեզ մերժել այն ստերը , որոնք կներկայացվեն մեզ որպես ճշմարտությունը:
Հիսուս Զորություն տուր մեզ:
Հիսուս Հույս տուր մեզ:
Հիսուս հեղեղիր մեր հոգիները Սուրբ Հոգով:
Հիսուս պաշտպանիր մեզ Գազանից:
Հիսուս տուր մեզ զանազանության ընծան, որպեսզի կարողանանք հետևել
Քո ճշմարիտ Եկեղեցու ուղուն միշտ, հավիտյանս հավիտենից: Ամեն:

Աղջիկս, խնդրում եմ քեզ ընկճված մի զգա այս առաքելությունից, քանի որ Ես շուտով քեզ օգնություն կուղարկեմ: Դու պետք է ընդունես ամենը, ինչ Ես խնդրում եմ քեզնից և ուժեղ մնաս այս վստահությամբ, որ ամեն ինչ լավ է:

Արդեն իսկ դարձ է սկսվել այս պատգամների միջոցով՝ հարյուր հազարավոր հոգիներ արդեն: Ուստի անօգնական մի զգա և մի անհանգստացիր: Ես գոհ եմ նրանց հավատարմությունից ու նվիրվածությունից, ովքեր առանց պայմանի սիրում են Ինձ:
Ես ուղարկում եմ քեզ մոտ Իմ այն սրտով մաքուրներին, որ քեզ պաշտպանություն առաջարկեն:
Նրանք քեզ վեր կբարձրացնեն և կօգնեն առաջնորդելու Իմ հետևորդներին ողջ ճամփորդության ընթացքում դեպի Նոր Դրախտի դարպասները:
Ես սիրում եմ ձեզ Իմ սիրելի հետևորդներ: Դիմացեք Ինձ հետ այս փշոտ ճանապարհին: Ընդունեք այն ծաղրը, որին ստիպված կլինեք դիմակայել, մինչ կշարունակեք տարածել Իմ Սուրբ Խոսքը:
Հիմա, երբ Ես միշտ ձեզանից յուրաքանչյուրի հետ եմ: Ես ճանաչում եմ Իմ յուրայիններին, և նրանք ճանաչում են Ինձ: Ոչինչ չի կարող բաժանել մեզ:
Ձեր Հիսուս

Ես նման եմ եփվող փոթորկի: Իմ Ձայնը նման է հեռվից /եկող/ որոտի

Երկուշաբթի, 20 օգոստոսի, 2012թ, առավոտյան ժ 03:30

Իմ սիրելի աղջիկ, դու երբեք չպետք է մոռանաս, այն տառապանքի միջոցով որը կրում ես հանուն Իմ Անվան, **որ Աստծո զորությանը հնարավոր չէ գերազանցել:**
Ես նման եմ եփվող փոթորկի: Իմ Ձայնը նկան է հեռվից /եկող/ որոտի:
Մինչ Իմ Սուր բ Խոսքը կծածկի երկիրը վերմակի պես, մի թնդացող ձայն կլսվի հեռվից:
Մինչ Իմ Խոսքը տարածվում է մարդուց մարդ, փոթրիկը կսկսի ավելի ուժգնանալ, և որոտի թնդյունը կբարձրանա:
Շուտով թնդյունը կմոնչա, և շատ քչերը չեն կարողանա լսել Աստծո Ձայնը:
Մինչ փոթորկի զորությունն ավելանում է, շատ հոգիներ, ովքեր փորձում են փակել ամբարտակները, չեն կարողանա արգելել Իմ Ձայնի փոթորկին կամ Իմ Գթասրտության զորությանը իրենց հոգիներին դիպչելուց:
Սկսվել է ժամանակը՝ Երկնքից միջամտության համար, խավարով լի հեթանոս աշխարհի վրա դուրս հեղվելու:
Իմ Լույսը վեր կբարձրացնի նույնիսկ ամենակարծրացած սրտերը, մինչ Ճշմարտությունը կսկի ներս սուզվել:
Աստծո բոլոր զավակներին, ովքեր կարդում են այս պատգամը, խնդրում եմ հիշեք Իմ խոստումը հիմա:
Ես Ինքս Ինձ հայտնում եմ ձեզ այս պատգամներում Իմ Սուրբ Խոսքի միջոցով:
Իմ Հոգին կնվաճի ձեր հոգիները Նախազգուշացման ընթացքում:
Հետո, Ես՝ ձեր Հիսուսը, կիջնեմ ամպերից Երկրորդ Գալուստի ժամանակ:
Հետո Ես կբարձրացնեմ Նոր Երուսաղեմը, որպեսզի վերջապես խաղաղություն հասնի Նոր Դարաշրջանում՝ առանց վերջին Նոր Աշխարհում:
Իմ Զորությունն ամենակարող է:
Սատանան որոշ ուժեր ունի, բայց դրանք ոչինչ են: Նրա ուժը կարող է վախեցնող լինել, բայց նա կծկվում է Իմ առջև սարսափից:

Դուք չպետք է նրան ավելի ուժեղացնեք, տեղի տալով նրա գայթակղություններին: Ոչ էլ պետք է թույլ տաք որ նրա հանդեպ վախը փակի Իմ հանդեպ ձեր ունեցած սերը: Երբ վախենում եք Սատանայից, դուք ավելացնում եք նրա ուժը, և նա կարող է վերահսկել ձեր զգայարանները:
Միայն աղոթքը, և շատ աղոթքը, կարող են թուլացնել նրա ուժը և նրա ճանկը ձեզ վրա:
Հիմա, երբ Իմ Խոսքը տպված է, Սատնան կբարձրացնի իր բանակը նախապատրաստվելու համար մի սարսափելի մարտի:
Դուք բոլորդ, Իմ հետևորդներ, պետք է ենթարկեք ձեր կամքը Ինձ և վստահեք Ինձ ամբողջապես, մինչ Ես առաջնորդում են ձեզ այս արյունոտ մարտի դաշտի միջով:
Չսխալվեք, Սատանան և նրա չարքերը կատաղած են այս պլանի պատճառով՝ Փրկության վերջնական Պլանի:
Նա իրարանցում կառաջացնի այս աշխատանքի հետ կապված:
Նա բանավեճ կսկսի, զրպարտություններ կհեղի այս աշխատանքի վրա և կանի իր կարողացած ամեն ինչ, որ կանգնեցնի Իմ Ճշմարտության Գիրքը՝ Իմ Սուրբ Պատգամները տարածվելուց:
Դու պետք է նաև սպասես մերժման երկրի վրա Իմ Եկեղեցու ներսի տարրերի կողմից և աճող վիճաբանությունների՝ քրիստոնյաների մեջ Իմ Սուրբ Խոսքի ճշմարտացիության վերաբերյալ:
Երբ առաջիկա փոթորիկը արագություն վերցնի, Իմ Խոսքը կբազմապատկվի յուրաքանչյուր ազգի մեջ ու յուրաքանչյուր լեզվով, Իմ Ձայնի հնչյունը խլացուցիչ կլինի:
Աստծո Զորությունը երբեք չպետք է թերագնահատվի, քանի որ Ես Մարդկության Թագավորն եմ:
Ես հիմա գալիս եմ, Իմ Հավիտենական Հոր անունից, հավաքելու համար Նրա բոլոր զավակներին վերջին մարտում, երբ Ես կնետեմ Սատանային կրակի լճի մեջ:
Դա կլինի մի սարսափելի մարտ, և շատ հոգիներ կմերժեն Ինձ:
Անկախ նրանից, թե Ես որքան շատ կփորձեմ, և հակառակ Իմ Զորությանը, նրանց ազատ կամքի միջոցով կլինի, որ նրանք կընտրեն չարին:
Վստահեք Ինձ և թույլ տվեք Ինձ հիմա մաքրագործել ձեր հոգիները, որպեսզի արժանի լինեք երկրի վրա Իմ Նոր Դրախտին:
Միացրեք բազուկներդ, Իմ հետևորդներ, միասնության մեջ՝ Իմ Սուրբ Խոսքը պաշտպանելու համար, որպեսզի նրանք, ովքեր չեն ճանաչում Ինձ, կարողանան գալ Ինձ մոտ:
Ես սիրում եմ ձեզ:
Ես օրհնում եմ ձեզ բոլորիդ:
Ձեր սիրող Փրկիչ
Հիսուս Քրիստոս

Կանխասացված Ճշմարտության Գիրքը պարունակում է բոլոր նրանց անունները, ովքեր փրկվելու են

Երկուշաբթի, 20 օգոստոսի, 2012թ, ցերեկվա ժ 03:45

Իմ սիրելի աղջիկ, կանխասացված Ճշմարտության Գիրքը պարունակում է բոլոր նրանց անունները, ովքեր փրկվելու են:
Այնուամենայնիվ, Իմ Մեծ Գթասրտության պատճառով, ավելի շատ հոգիներ կփրկվեն Նախազգուշացման պատճառով:
Նույնիսկ ավելի շատ հոգիներ կարող են փրկվել քո և այն բոլոր ընտրյալ հոգիների տառապանքների միջոցով, ովքեր կենդանի են այսօր աշխարհում:
Իմ հետևորդների աղոթքները, ներառյալ խաչակրաց արշավանքի աղոթքների ասելը հոգիների փրկության համար, մի հզոր միջոց կլինի փրկելու համար նույնիսկ ամենակարծրացած հոգիներին:
Հոգիները ,ովքեր մերժում են Իմ Գթասրտությունը, հիմա կարող են փրկվել ձեր միջից նրանց առատաձեռն միջամտության պատճառով, ովքեր առաջարկում են աղոթք, պահեցողություն և ընդունում են տառապանքը հանուն Իմ Սուրբ Անվան:
Սա է Իմ խոստումը՝ այսպիսին է Իմ Մեծ Գթասրտությունը:
Ես շատ ընծաներ եմ բերում այս ժամանակ, Իմ հանդեպ ձեր ունեցած սիրո պատճառով:
Ընդունեք դրանք սիրով և շնորհակալությամբ:
Ես օրհնում եմ ձեզ: Իմ սիրելի աշակերտներ, այս առաքելությանը ձեր կողմից պատասխանելու համար ավելի շատ Ընծաներ հեղելու Իմ խոստումը հիմա կարող է և կկատարվի Իմ հանդեպ ձեր ունեցած նվիրվածության պատճառով:
Ձեր սիրող Հիսուս

Հայր Աստված. Միայն այն ժամանակ, երբ Ես գոհ կլինեմ, Ես կշնորհեմ ամենատեսանելի հրաշքները ի տես աշխարհի

Երեքշաբթի, 21 օգոստոսի, 2012թ. , երեկոյան ժ 06:00

Իմ սիրելի աղջիկ, թող ոչ մի մարդ չթերագնահատի Իմ զայրույթի ուժը, մինչ մարդկությունն ավելի խորն է ընկղմվում մեղքի խորքերի մեջ:
Ես ուղարկել եմ ձեզ մարգարեներին: Հետո Ես ուղարկեցի Իմ սիրելի Որդուն, ում Ես զոհաբերեցի՝ փրկելու համար ձեզ, և Ես ուղարկեցի ավելի շատ պատգամատարների, բոլորը համարյա ապարդյուն:
Նույնիսկ ավելի քիչ հոգիներ նայեցին մարգարեների այդպիսի պատգամների վրա կամ ընդունեցին Իմ սիրելի Որդու Օրհնյալ Մոր աշխարհին տրված նշանները:
Որպես Հայր ձեր հանդեպ ունեցած Իմ մեծ սիրո պատճառով Ես նորից Իմ բոլոր զավակներին տալիս եմ փրկության ընծան: Դուք չպետք է անտեսեք Իմ մարգրաեներին, քանի որ դա կարող է նպաստել ձեր ժանգության մեջ ձեր տեղը կորցնելուն, որը Ես պլանավորել եմ ձեզ համար:
Զավակներս, ձեզնից շատեր,ը ովքեր հավատում են Ինձ՝ իրենց Հավիտենական Հորը, չեն կարողանում հասկանալ փրկության գաղտնիքը:
Դեպի հոգևոր կատարելություն տանող արահետը կախված է այն մաքրագործումն ընդունելու ձեր կարողությունից, որն անհրաժեշտ է վստահանալու համար, որ դուք հարմար եք Իմ առջև կանգնելու:

Շատ հոգիներ պետք է մերկացվեն աշխարհիկ բոլոր գրավչություններից, զվարճություններից և հոգու քայքայումից:
Ձեզանից նրանք, ովքեր այնքան բախտավոր կլինեն, որ կդիմանան այդպիսի մաքրագործման, կիմանաք, որ մինչև չդառնաք Իմ Աչքում մանուկների պես, չեք կարողանա ենթարկվել Իմ Սուրբ Կամքին:
Պայքարեք այդպիսի մաքրագործման դեմ, և ձեզ համար դժվար կլինի ազատագրվել Իմ Աչքում:
Երբ դուք ազատ եք այն ամենից, ինչ աշխարհն ունի առաջարկելու և ուշադրությունն Իմ Որդու վրա է, կհասկանաք, որ գոյություն ունեցող միակ իսկական սերն ու ուրախությունը գալիս է Աստծուց: Հենց որ դա զգաք, ուրիշ ոչ մի բան չի կարող գոհացնել ձեզ:
Ժամանակ առ ժամաակ դուք կսայթաքեք, բայց դա սպասելի է: Քանի որ չեք կարող ազատվել մեղքից մինչև Նոր Աշխարհը չսկսվի, և դուք ձեր կամքը համաձայնեցնեք Իմի հետ:
Փրկության Իմ Ծրագիրը, որին կարեի է հասնել միայն երկրի վրա Իմ Թանկագին Որդու հանդեպ ձեր հավատարմության միջոցով, արդեն սկսվել է: Շատ չի մնացել գլոբալ դարձին: Դա տեղի կունենա Իմ վերջին ժամանակների մարգարեի և Մեծ Նախազգուշացման միջոցով:
Զգացեք թե ինչպես է Իմ Սուրբ Հոգին նվաճում ձեր հոգիները, զավակներս, մինչ այն արագորեն տարածվում է երկրի վրա:
Ես դուրս եմ քաշում Իմ զավակներին իրենց հոգևոր խավարի միջից աշխարհի յուրաքնաչյուր մասում:
Ես ձեր զոհողությունների և աղոթքի կարիքն ունեմ, որ օգնեն հոգիների փրկության գործում:
Միայն այն ժամանակ, երբ Ես գոհ կլինեմ, Ես կշնորհեմ ամենատեսանելի հրաշքները ի տես աշխարհի:
Երբ այդ հրաշքները ներկայացվեն, նրանք կբազմապատկեն դարձը, որի կարիքը Ես ունեմ՝ Իմ զավակներին դեպի ապահովություն և Նոր Դրախտ տանելու համար: Միայն այդ ժամանակ մենք կարող ենք նորից դառնալ իրական ընտանիք:
Ես սիրում եմ ձեզ, զավակներս:
Ես գոհ եմ նրանցից, ովքեր առատաձեռն են սրտով և մաքուր՝ հոգով, որ ճանաչեցին Երկնքից եկող այս աստվածային կանչը:
Ես օրհնում եմ ձեզ բոլորիդ:
Աստված Ամենաբարձրյալ

Կույս Մարիամ. Երբ Ես առաքյալների հետ տան մեջ սպասում էի Սուրբ Հոգու իջնելուն, դրան նախապատրաստվելը տևեց տասը օր

Չորեքշաբթի, 22 օգոստոսի, 2012թ, երեկոյան ժ 09:18

Զավակս, անապատը, որի մեջ Իմ զավակներն իրենց գտնում են այսօր, այն պատճառով է, որ նրանք չգիտեն թե ինչպես պետք է ստանալ Սուրբ Հոգու Ընծան:
Ինչպես Ես քեզ սովորեցրել եմ, Ընծան ստանալու համար երկար ժամանակ է պետք:

Դա մի դժվարին ճանապարհ է, նախքան Աստծո ցանկացած զավակ արժանի կդառնա ստանալու այս յուրահատուկ Ընծան:
Երբ Ես տան մեջ առաքյալների հետ սպասում էի Սուրբ Հոգու իջնելուն, դրան նախապատրաստվելը տևեց տասը օր:
Չնայած Իմ սիրելի Որդու այդ սուրբ, նվիրված և հավատարիմ սպասավորներին խոստացվել էր այդ Ընծան, **նրանք հոգևորապես ամբողջովին նախապատրաստված չէին այդ Ընծան ստանալու համար:**
Ես՝ նրանց Սիրելի Մայրը, պետք է օգնեի նրանց նախապատրաստելու իրենց հոգիները:
Դա նշանակում էր, որ նրանք պետք է սովորեին իրենց ազատ կամքի ամբողջական հանձնման կարևորությունը: Արժանի դառնալու համար նրանք պետք է հասկանային խոնարհության խորությունը, որին պետք է տեղի տային, նախքան պատրաստ կլինեին:
Նրանցից ոմանք կարծում էին, թե իրենք ամեն ինչ սովորել են Իմ Որդուց:
Այնուամենայնիվ դա հպարտության նշան էր, և երբ ձեր մեջ հպարտություն գոյություն ունի, դուք չեք կարող ստանալ Սուրբ Հոգու Սուրբ Ընծան:
Սուրբ Հոգու Ընծան ստանալու համար դուք պետք է փոքր դառնաք Իմ Որդու առջև՝ ինչպես փոքր երեխա:
Չի կարող տեղ լինել հպարտության կամ մեծամտության համար: Սակայն այսօր այն մարդիկ, ովքեր ասում են թե իշխանություն ունեն խոսելու այն մասին թե ինչպես է Իմ Որդին խոսում, ընկնում են թակարդի մեջ:
Նրանք, երբ հայտարարում են թե գիտակ են հոգևոր հարցերում, խոսում են մեծամտությամբ, որը չի արտացոլում այն շնորհները, որոնք տրվում են նրանց, ովքեր իսկապես ունեն Երկնքից տրվող այդ մեծ Ընծան:
Նրանք, ում շնորհվել է Սուրբ Հոգու ԸՆծան, հնազանդ են Իմ Որդու ցանկություններին:
Նրանք պարծենկոտ չեն:
Նրանք ագրեսիվ չեն:
Նրանք չեն քննադատում մեկ ուրիշին՝ օգտագործելով Իմ Որդու անունը դա անելու համար:
Նրանք չեն ծաղրում ուրիշներին, երբ տալիս են Նրա Սուրբ Խոսքի իրենց մեկնաբանությունը:
Նրանք ատելություն չեն քարոզում:
Երբ Ես նախապատրաստում էի Իմ Որդու առաքյալներին, շատ վիճաբանություններ տեղի ունեցան:
Որոշ ժամանակ պահանջվեց մինչև նրանք վերջապես ընդունեցին այն, ինչ պետք է ընդունեին:
Միայն այդ ժամանակ, երբ նրանք հասկացան, թե ինչպես միայն հոգու խոնարհությունը կարող է թույլ տալ Սուրբ Հոգուն ներս մտնել, այդ ժամանակ նրանք վերջապես պատրաստ էին:
Ես կոչ եմ անում Աստծո բոլոր զավալներին, հատկապես նրանց, ովքեր հավատում են Իմ Որդուն, որ խնդրեն Ինձ՝ իրենց Մորը, որ թույլ տան Ինձ նախապատրաստել իրենց այդ մեծ Ընծայի համար:
Զավակս, Ինձ պետք եղավ մի ամբողջ տարի քեզ նախապատրաստելու համար, և դա հեշտ չէր: Հիշու՞մ ես, թե որքան դժվար էր քեզ համար աղոթել Իմ Սուրբ Վարդարանը: Որքան դժվար էր հանձնել կամքդ և ապացուցել քո խոնարհությունը:

ՀԻմա, երբ ստացել ես այդ Ընծան, դա չի նշանակում, որ կարող ես անհոգ լինել:
Դու պետք է շարունակես աղոթել, մնաս խոնարհ սրտով և ազատագրում փնտրել ամեն օր: Քանի որ ճիշտ այնպես, ինչպես այն տրվել է, նույն կերպ կարող է վերցվել:
Ես խնդրում եմ բոլոր նրանց, ովքեր հետևում են այս պատգամներին, որ աղոթեն Սուրբ Հոգու Ընծայի համար:
Բավական չէ աղոթել մեկ անգամ և ասել, որ ստացել եք զանազանությունը, որը խնդրում էինք, իսկ հետո զրպարտեք այս աստվածային պատգամները: Եթե այդպես անեք, նշանակում է Ընծան ձեզ չի տրվել:
Խնդրում եմ կանչեք Ինձ՝ ձեր Օրհնյալ Մորը, որ օգնեմ ձեզ նախապատրաստվելու այս խաչակրաց աղոթքի միջոցով:
Խաչակրաց աղոթք (74) Զանազանության Ընծայի համար
Ով Աստծո Մայր, օգնիր ինձ նախապատրաստելու հոգիս
Սուրբ Հոգու Ընծայի համար:
Բռնիր ձեռքս՝ ինչպես երեխայի, և Սուրբ Հոգու զորությամբ տար ինձ դեպի զանազանության ընծան տանող ճանապարհով, բաց արա իմ սիրտը և սովորեցրու ինձ հանձնվել մարմնով, մտքով և հոգով:
Ազատիր ինձ հպարտության մեղքից և աղոթիր, որ ինձ ներում լինի իմ բոլոր անցած մեղքերի համար, որպեսզի իմ հոգին մաքրագործվի և ես ամբոջական դառնամ, որպեսզի կարողանամ ստանալ Սուրբ Հոգու Ընծան:
Ես շնորհակալեմ քեզ, Մայր Փրկության, քո բարեխոսության համար, և սիրով իմ սրտում սպասում եմ այդ Ընծային, որին ձգտում եմ ուրախությամբ: Ամեն:
Հիշեք զավակներս, եկեք Ինձ մոտ՝ ձեր Մոր մոտ, որ օգնեմ ձեզ բացելու ձեր հոգին այս հրաշալի ընծան ստանալու համար:
Երբ ստանաք այս Ընծան, Ես կտանեմ ձեզ Իմ Որդու մոտ:
Քանի որ միայն այդ ժամանակ դուք իսկապես պատրաստ կլինեք դեպի հոգևոր կատարելություն տանող աստիճանի հաջորդ աստիճանը բարձրանալու համար:
Մայր Փրկության

Ճիշտ այնպես, ինչպես Իմ կողը խոցող զինվորը վայրկենապես դարձի եկավ, նույն կերպ դարձի կգան միլիոնավոր հոգիներ

Չորեքշաբթի, 22 օգոստոսի, 2012թ., երեկոյան ժ 08:10

Իմ սիրելի աղջիկ, դու չպետք է մեկուսացված զգաս Ինձնից այս աշխատանքի հսկա ծավալի պատճառով:
Քանի որ չնայած այն կարող է թվալ այդքան մեծ ուժգնության, որ զգաս թե ի վիճակի չես գլուխ հանել, իմացիր, որ Ես քեզնից խնդրում եմ միայն այն, ինչ ի վիճակի ես անել:
ՈԻրախացիր, որ Իմ Խոսքը փնտրում են ամենուր աշխարհում, քանի որ դա Իմ Սրտի ցանկությունն է:
Ես ցանկանում եմ, որ Իմ բոլոր աշակերտներն անմիջապես պատասխանեն Իմ Կանչին, քանի որ Ես նրանց կարիքն ունեմ որ օգնեն Ինձ մարդկությանը փրկելու Իմ Առաքելության մեջ:

Սա շտապ դարձի սկիզբն է միայն, երբ արյունն ու ջուրը դուրս կհորդեն յուրաքանչյուր մարդկային հոգու վրա:
Իմ արյունն ու ջուրը դարձի կբերեն նույնիսկ սևացած հոգիներին:
Ճիշտ այնպես, ինչպես Իմ կողը խոցող զինվորը վայրկենապես դարձի եկավ, նույն կերպ դարձի կգան միլիոնավոր հոգիներ, ովքեր հիմա չեն հավատում որ Ես գոյություն ունեմ:
Մի՞թե Ես ձեզ չեմ ասել, որ Իմ Գթասրտությունն անսահման է:
Մի՞թե Ես չեմ խոստացել որ տեղի կունենան Իմ Հոր կողմից արտոնված հրաշքներ՝ աշխարհը միավորելու և բոլոր հոգիներին իրավամբ իրենց պատկանող ժառանգությանը բերելու համար:
Այնքան շատ հոգիներ են հիմա պատասխանում Իմ կանչին: Միայն նրանց աղոթքները կբազմապատկվեն և ավելի միլիոնավորներ կփրկվեն: Բոլոր հոգիները պետք է ընդգրկվեն ողջ մարդկությանը փրկելու ձեր ջանքերի մեջ:
Իմ սիրելի աշակերտներ, ձեր նպատակը պետք է լինի այն, որ ոչ մի հոգի դուրս չսահի ցանցի միջից:
Այդ ցանցը դուրս կհանվի և կնետվի ջրերի մեջ՝ հոգիներ բռնելու և նրանց փրկելու համար:
Դուք, Իմ աշակերտներ, ձկնորսներ եք: Ես տալիս եմ ձեզ ցանցը այն շնորհների միջոցով, որոնք հեղում եմ ձեզ վրա հիմա:
Դուք կօգնեք Ինձ փրկել յուրաքանչյուր կենդանի հոգու, և ոչ մի ջանք չի թողնվի առանց կատարվելու, ոչ մի քար՝ առանց շրջվելու, մինչ Ես առաջ եմ ընթանում մեկ անգամ ևս մարդկությանը փրկելու համար:
Ուստի, վախից կծկվելու փոխարեն, Իմ կանչի հսկայական պատասխանատվությունից անհանգստանալու փոխարեն, դու պետք է ուրախանաս, աղջիկս: Քանի որ վերջապես Իմ Սուրբ Կամքը կատարվում է: Սակայն մենք դեռևս երկար ճանապարհ ունենք գնալու:
Ձեր Հիսուս

Կույս Մարիամ. Դարձը կարող է թուլացնել Հակաքրիստոսի ազդեցությունը

Հինգշաբթի, 23 օգոստոսի, 2012թ., ցերեկվա ժ 12:40

Ձավակս, թող Աստծո բոլոր զավակներն իմանան, որ որքան շատ դիմադրություն լինի հիմա Իմ Որդու Սուրբ Խոսքի հանդեպ, այնքան շատ կլինեն այն շնորհները, որոնք դուրս կհեղվեն Իմ Սիրելի Որդու աշակերտների վրա:
Կանխասացված բոլոր մարգարեությունները կարող են բազմաթիվ ձևերով մեղմացվել, եթե Աստծո բոլոր զավակներն ընդունեն դարձի շնորհը:
Դարձը կարող է թուլացնեն Հակաքրիստոսի ազդեցությունը: Ձեր ամենօրյա աղոթքները, ներառյալ խաչակրաց աղոթքերն ասելը, կօգնեն որ դա տեղի ունենա:
Նրանց, ովքեր ընդդիմանում են Իմ Որդու առաքելությանը երկրի վրա, Ես խնդրում եմ, որ աղոթեք նրանց հոգիների համար:
Հոգիների համար /մղվող/ այս մարտը լարված է, և դուք պետք է վեր բարձրանաք տառապանքից ու խարազանումից՝ խնդրելու Ինձ որ աղոթեմ խեղճ մոլորված

հոգիների համար, **ովքեր հավատում են թե խոսում են Իմ Որդու անունից, բայց դրա փոխարեն խաբված են չարի կողմից:**
Իմ Որդին երբեք չի թողնի հոգիների որոնումը, հատկապես նրանց, ովքեր մերժում են Նրան, ծաղրում Նրա Սուրբ Խոսքը , և որնց հոգիները սևացած են մեղքից:
Դուք պետք է ուժեղ մնաք, զավակներս, բոլորդ, և հաստատուն մնաք Իմ Որդու Սուրբ Կամքը կատարելու որոշման մեջ:
ԴԱ հեշտ չի լինի, բայց Նոր Դրախտ մուտք ստանալը հեշտ չէ:
Այն պահանջում է շատ համբերություն, շատ աղոթք, շատ սեր միմյանց հանդեպ և կարողություն՝ ներելու բոլոր նրանց, ովքեր ձեզ վիշտ են պատճառում և ովքեր պղծում են Իմ Որդու Խոսքը:
Շնորհակալ եմ որ պատասխանեցիր կանչիս:
Մայր Փրկության

Կարևոր պատգամ. Հայր Աստված. Ես իմունիտետ /պաշտպանվածություն / եմ շնորհում դժոխքի դարպասներից այն հոգիներին, որոնց համար դուք կաղոթեք

Հինգշաբթի, 23 օգոստոսի, 2012թ., ցերեկվա ժ 03:15

Իմ սիրելի աղջիկ, հազվադեպ է եղել որ Սուրբ Երրորդությունը հաղորդակցվի մարդկության հետ այս ձևով, և առաջին անգամ է, որ Ես՝ ձեր Հայրը, այս տեսակի առաքելություն եմ թույլատրել:
Շուտով Իմ զավակները, որոնցից շատերը չեն ընկալում Աստվածային Կամքի այս միջամտության կարևորությունը, կհասկանան թե ինչու է այն անհրաժեշտ:
Եթե Իմ Սիրելի Որդու Երկրորդ Գալուստը տեղի ունենար առանց նախազգուշացման, Իմ թանկագին զավակները երբեք ներս չէին մտնի Դրախտի Դարպասներից:
Նրանք երբեք ի վիճակի չէին լինի նախապատրաստելու իրենց հոգիները, և հարմար չէին լինի Խաղաղության Նոր Դարաշրջան ընդունվելու համար:
Սա մի հաղորդակցություն է, որին աշխարհի համար դժվար կլինի պատասխանել:
Այնքան խիտ է այն ամպը, որը ծածկում է մարդկանց սրտերը, որ շատ քիչ հոգիներ կկարողանան տեսնել Իմ Աստվածային Խոստման Լույսը:
Չարի ուժերը, որոնք միշտ ներկա են աշխարհում, խանգարում են Իմ զավակներին հասնել Ինձ:
Իմ մտադրությունը՝ Իմ ընտանիքը հավաքել և Իմ Կրծքի մոտ բերել՝ ուժեղ է:
Թող բոլոր մարդիկ հասկանան որ Ես կուժեղացնեմ մարդկության արագ դարձը անկախ նրանից թե այն ինչ գնով կլինի:
Թույլ տալով որ Իմ բոլոր զավակների ազատ կամքը մնա անձեռնմխելի, Իմ կողմից հրամայված հրաշքները դուրս կշրջեն նրանց սրտերը:
Սա է Իմ Խոստումը, մինչ Ես կանչում եմ ձեզանից յուրաքանչյուրին, Իմ փոքրիկ սիրելի զավակներ:
Ես՝ ձեր սիրող Հայրը, բաղձում եմ վերցնել ձեզ, հավաքել ձեզ և ձեզ մոտիկ պահել Իմ Սրտին և տանել ձեզ դեպի ապահովություն:

Ձեզնից այնքան քչերը գիտեն Իմ Սիրո խորությունը: Հենց որ սեր զգաք Իմ՝ ձեր Հավիտենական Հոր հանդեպ, այլևս երբեք չեք կարողանա անջատել Ինձնից ձեր կապը:
Ես ցանկանում եմ ձեզ հանգստություն տալ:
Ես ցանկանում եմ որ իմանաք, որ Իմ Սերը ձեր հանդեպ նշանակում է, որ Իմ Որդի Հիսուս Քրիստոսի միջոցով մեծ Գթասրտություն ցույց կտրվի նույնիսկ քարե սիրտ ունեցողներին և այնքան սևացած սիրտ ունեցողներին որոնց միայն հրաշքը կարող է փրկել:
Նրանց, ովքեր սիրում են Ինձ, Ես ասում եմ հետևյալը: Ձեր սերն Իմ հանդեպ՝ ձեր Հոր հանդեպ, ետ կվերադարձվի ձեզ առատորեն:
Իմ թանկագին Որդու հանդեպ ձեր ունեցած սերը կպարգևատրվի նրանով, որ Ես իմունիտետ կշնորհեմ դժոխքի դարպասներից այն հոգիներին, որոնց համար դուք աղոթում եք:
Ոչինչ անհնարին չէ:
Իմ Սերն անվերջ է:
Վստահեք Ինձ:
Վստահեք Իմ Որդուն:
Երբ վստահեք, Ես մեծ շնորհներ կտամ մարդկության Փրկության համար:
Ձեր սիրող Հայր
Աստված Ամենաբարձրյալ

Շնորհակալություն հայտնեք Իմ Հորը դժոխքի կրակների հանդեպ իմունիտետի Նրա Շնորհի Ընծայի համար

Ուրբաթ, 24 օգոստոսի, 2012.,թ ցերեկվա ժ 03:15

Իմ սիրելի աղջիկ, Ես ցանկանում եմ որ խնդրես Իմ աշակերտներին որ սկսեն ամեն օր ասել Իմ Հիսուսը Մարդկությանը (litany) աղոթքներն այժմվանից սկսած:
Այդ աղոթքները մեծ շնորհներ կբերեն և կփրկեն բոլոր նրանց, որոնց համար դուք կդնեք հատուկ նպատակներ՝ նրանց հոգիների փրկության համար:
Այս երկրորդը Իմ Հավիտենական Հոր պատվին է, ով սիրում է իր փայփայած զավակներից յուրաքանչյուրին:
Ես Գլուխս դնում եմ Նրա Ուսերին, Իմ Բազուկները փաթաթում Նրա շուրջն ամեն օր՝ սփոփելու համար Նրան, քանի որ Նա անհանգստանում է այն բոլոր խեղճ հոգիների համար, ովքեր կորած են Նրա համար:
Եկեք Նրա մոտ, Իմ սիրելի աշակերտներ, և շնորհակալություն հայտնեք Իմ Հորը դժոխքի կրակների հանդեպ Նրա **Իմունիտետի Շնորհի** Ընծայի համար նրանց, ովքեր պատասխանում են Նրա Կոչին:

Հիսուսը մարդկությանը (litany) աղոթք (2) Իմունիտետի Շնորհի համար
Ով Ամենաբարձրյալ Երկնավոր Հայր,
Ես սիրում եմ Քեզ:
Ես պատվում եմ Քեզ:
Տեր, գթա՛:

Տե՛ր, ներիր մեզ մեր հանցանքները:
Ես պաշտում եմ Քեզ:
Ես փառաբանում եմ Քեզ:
Ես Քեզ շնորհակալություն եմ հայտնում Քո բոլոր յուրահատուկ Շնորհների համար:
Ես Քեզնից աղերսում եմ իմունիտետի շնորհը իմ սիրելիների համար
(թվարկեք բոլոր նրանց անունները՝ հոգիների փրկության համար)

Ես առաջարկում եմ Քեզ իմ հավատարմությունը միշտ:
Դու, ով Ամենաբարձրյալ Երկնավոր Հայր,
Արարիչ ամեն բանի,
Արարիչ Տիեզերքի,
Արարիչ մարդկության,
Դու ամեն բանի աղբյուրն ես:
Դու Սիրո աղբյուրն եք:
Դու Սեր ես:

Ես սիրում եմ Քեզ:
Ես պատվում եմ Քեզ:
Ես դնում եմ ինձ Քո առջև:
Ես Գթասրտություն եմ խնդրում այն բոլոր հոգիների համար, ովքեր չեն ճանաչում Քեզ,
ովքեր չեն պատվում Քեզ,
ովքեր մերժում են Քո Գթասրտության Ձեռքը:
Ես տալիս եմ ինձ Քեզ մտքով, մարմնով և հոգով,
Որպեսզի Դու կարողանաս վերցնել նրանց Քո Բազուկների մեջ՝ ապահով չարից:
Ես խնդրում եմ Քեզ բացել Դրախտի Դարպասը, որպեսզի Քո բոլոր զավակները Կարողանան միավորվել վերջապես այն ժառանգության մեջ, որը Դու ստեղծել ես մեզ բոլորիս համար:
Ամեն:

Ես ցանկանում եմ որ բոլորդ իմանաք սա:
Իր զավակներից յուրաքանչյուրի հանդեպ Իմ Հավիտենական Հոր ունեցած սերը ձեր իմացության սահմաններից այն կողմ է:
Այնհարյուր կամ ավելի անգամ ուժգին է նրանից, որն ունի ծնողն իր զավակի հանդեպ երկրի վրա:
Այնքան ուժգին է Իր զավակների հանդեպ Իմ Հոր ունեցած սերը, որ Նա կատարել է մի քանի զոհողություններ, որոնց մասին տեղյակ չեք:
Նրա Ձեռքը ետ է քաշվել բազմաթիվ երկնային պատիժներ պարտադրելուց, որը Նա ծրագրել էր Իր զավակներին պատժելու համար:
Նրա համբերությունը փորձվել է տանելի սահմաններից այն կողմ:
Նրա վրա նետված վիրավորանքներն անտեսվել են Նրա կողմից:
Դրա փոխարեն Նա ցանկանում է ետ բերել Իր զավակներին Իր մոտ, ոչ վախի միջոցով, այլ Իր այն զավակների սիրո միջոցով, ովքեր ամենից շատ են սիրում Իրեն:
Նա ապավինում է ձեզնից նրանց, ովքեր խորը սեր ունեն Իր հանդեպ, և Ինձ՝ Իր Որդուն, օգնելու համար հավաքել Իր կորած զավակներին, որպեսզի Նա կարողանա վերցնել նրանց Իր մոտ:

Բերեք այդ բոլոր հոգիներին ձեր սրտին մոտիկ, և հիմա դրեք նրանց Իմ Հոր Գահի առջև, և Իր Գթասրտությամբ Նա կտա ձեզ ամենամեծ Պարգևը:
Նա կշնորհի նրանց փրկությունը:
Բերեք խավար հոգիների անունները, ներառյալ ձեզ ծանոթների ցուցակը, և գթասրտություն խնդրեք նրանց հոգիների համար:
Իմ Հայրը սպասում է սիրով Իր Սրտում ձեր առատաձեռն պատասխանին:
Եկեք: Մի տատանվեք, քանի որ սա ամենաարտասովոր Ընծան է իր տեսակի մեջ՝ Երկնքից:
Դուք, այս սերնդից, իսկապես օրհնյալ եք:
Ձեր Հիսուս

Կույս Մարիամ. Գրկեք իմունիտետի Շնորհի Ընծան, զավակներս: Փայփայեք այն, քանի որ այն մի հազվագյուտ պարգև է Երկնքից:

Շաբաթ, 25 օգոստոսի, 2012թ., ցերեկվա ժ. 12:00

Զավակս, Երկինքը հրճվում է: Հրեշտակների խմբերն իրենց ամբող ձայնով գովաբանություն են երգում Իմ Հորը:
Նրա Փառահեղ Գթասրտությունը՝ Իր կողմից հեղված, **Իմունիտետի** յուրահատուկ **Շնորհի** միջոցով, մեծ ուրախությամբ է ողջունվում Երկնքի բոլոր հրեշտակների և սրբերի կողմից:
Իմ զավակները դեռևս չեն հասկանում Իմ Հոր՝ Ամենաբարձրյալ Աստծո կողմից այս մեծ Գթասրտության Ընծայի կարևորությունը:
Դուք, զավակներս, հիմա ունեք զորությունը՝ փրկելու մյուսներին՝ կորած հոգիներին:
Դա նշանակում է, որի չարի զորությանը կարելի է հաղթել մի ձևով, որը մինչև հիմա հնարավոր չէր:
Ստերը, խաբեությունը և ատելությունը, որը չարը ցանում է Աստծո զավակների մտքերի մեջ, կարող են անօգնական դառնալ, եթե աղոթքները, տրված նրանց ովքեր սիրում են Իմ Որդուն, բերվեն Իմ Հոր Գահի առջև:
Գրկեք **Իմունիտետի Շնորհի** Ընծան, զավակներս:
Փայփայեք այն, քանի որ այն մի հազվագյուտ Ընծա է Երկնքից:
Այն ապացուցում է ձեզ ձեր Հոր Սերը Իր սիրելի զավակներից յուրաքանչյուրի հանդեպ:
Դա ամենամեծ հրաշքներից մեկն է՝ ներկայացված Աստծո բոլոր զավակներին վերջին ժամանակներում:
Շնորհակալ եմ, որ պատասխանեցիր կանչիս:
Մարիամ, Երկնքի Թագուհի,
Մայր Փրկության

Ատելությունը բոլոր չարիքի պատճառն է աշխարհում, և այն ընդունում է շատ ձևեր

Կիրակի, 26 օգոստոսի, 2012թ., երեկոյան ժ 06:30

Իմ սիրելի աղջիկ, ատելությունը բոլոր չարիքի պատճառն է աշխարհում, և այն ընդունում է շատ ձևեր:
Թշնամությունը մեկ այլ անձի հանդեպ ծագում է վախից՝ վախ, որ այդ մարդը կարող է ինչ-որ ձևով վիրավորել ձեզ:
Անհամաձայնություններն ուրիշների հետ կարող են գալ հպարտության մեղքի պատճառով: Սա այն է, երբ զգում եք, որ պետք է ապացուցեք ձեր արժեքը ամեն գնով, նույնիսկ եթե սխալ եք:
Նախանձը շատ շուտով փոխվում է ատելության, չնայած այն կարող է մեղմ լինել սկզբում:
Սեփական անձից դժգոհելը սկսվում է այն պատճառով, որ համեմատում եք ձեր կյանքը նրանց հետ, ովքեր ձեր համոզմամբ ավելի շատ ունեն, քան դուք:
Շատ շուտով այդ դժգոհությունը փոխվում է ատելության սեփական անձի և մարմնի նկատմամբ: Հետո դա տանում է դեպի մարմնական մեղքեր:
Ատելությունը կարող է առաջանալ նաև ուրիշի ունեցվածքը տենչալու մեղքի պատճառով:
Սա կարող է հանգեցնել պատերազմի, երբ մի երկիր տենչում է մյուսի հարստությունները:
Կամ դա կարող է նշանակել, որ թույլ եք տալիս ատելությունը կլանի ձեր հոգին, երբ ձգտում եք նույն աշխարհիկ հարստություններին, որոնք ձեր հարևանն ունի:
Նախանձը նույնպես փոխվում է ատելության մի տեսակի, հատկապես երբ որքան էլ փորձում եք մրցել մյուսի հետ, չեք կարողանում հասնել ձեր նպատակին:
Բոլոր մեղքերը, եթե թողնվեն թարախակալվի, կարող են տանել դեպի ատելություն:
Երբ ատելություն եք զգում, պետք է իմանաք, որ Սատանային հաջողվել է գրավել ձեր ոգին:
Երբ դա լինի, նա կբռնի ձեզ թունոտ ճանկով և բաց չի թողնի:
Անկախ նրանից, թե որքան կփորձեք ազատվել նրա ճանկից, նա կբռնի ձեզ սիրելի կյանքի համար: Ձեր միակ զենքն աղոթքն է:
Աղոթեք, աղոթեք, աղոթեք, երբ ատելությունը ներխուժում է ձեր մեջ: Քանի որ մինչև այն ձեզ չթողնի, դուք չեք կարողանա նորից խաղաղություն, սեր կամ ուրախություն զգալ:
Երբ ատելությունը բռնում է ձեր սիրտը և հոգին, դուք մեկ քայլով հեռանում եք Ինձնից՝ ձեր Հիսուսից:
Դուք սոսկալի տառապում եք և զայրույթ ու անօգնականություն եք զգում, որը չեք կարողանում վերահսկել:
Երբեք մի հավատացեք այն վերջնական ստին, որը Սատանան կցանի ձեր հոգու մեջ, երբ ձեզ վրա գցիր ատելության թիկնոցը:
Սուտը սա է: Ձեր ատելությունը կարող է փարատվել միայն /այն դեպքում/ երբ վերջապես վրեժ կլուծեք ձեր ատելության թիրախից:
Երբ աղոթեք և խնդրեք Ինձ օգնել ձեզ, Իմ պատասխանը կլինի սա:
Ներեք ձեր հակառակորդներին և նրանց, ովքեր ձեր համոզմամբ ձեր ատելության պատճառն են:
Բայց ներելու համար դուք պետք է խոնարհվեք Իմ առջև և սկզբում խնդրեք Ինձ ներել ձեզ:
Հենց որ ներեք նրանց, ում ատում եք, պետք է քավեք ձեր մեղքերը:

Սեր ցույց տվեք ձեր հակառակորդներին: Կռվեք ատելության դեմ՝ հոգու չար և վտանգավոր հիվանդության դեմ, սիրով:
Սերը բուժումն է՝ ապաքինելու համար ձեր հոգին այդ թունավորումից:
Երբ կարողանաք դա անել, պարտության կմատնեք Սատանային և նա ձեզ բաց կթողնի:
Երբեք մի վախեցեք կռվել ձեր հոգում /եղած/ ատելության դեմ, չնայած այն չափազանց ժվար կլինի:
Եթե ատելությունը հնարավոր լիներ նվազեցնել այս ձևով՝ մեղավորի խոնարհության միջոցով, աշխարհում խաղաղությունը կիշխեր:
Ձեր Հիսուս

Սա է այն պատասխանատվությունը, որը Ես տալիս եմ ձեզ, Իմ աշակերտներին. Դարձի բերել այն հոգիներին, որոնց Ես ամենաշատն եմ տենչում

Երկուշաբթի, 27 օգոստոսի, 2012թ., երեկոյան ժ 07:20

Իմ սիրելի աղջիկ, Իմ աշակերտների հանդեպ Իմ սերը, ովքեր պատասխանեցին Իմ պատգամներին, այնպես է մեծացրել Իմ Սուրբ Սիրտը, որ այն հիմա դուրս կհորդի շնորհների հեղեղ:
Իմ Շնորհները հեղվում են ձեզ վրա Իմ սիրելի հետևորդներ, այս ժամանակ:
Դրանք տրվում են ձեզ՝ ուժեղացնելու համար Իմ Սուրբ Խոսքը տարածելու ձեր վճռականությունը:
Երկնքից /եկող/ Իմ պատգամները կսնեն հոգիներ, ներառյալ ամենասևացած հոգիները, այն թթվածնով, որի կարիքը նրանք ունեն՝ դիմանալու համար Սատանայի կողմից աշխարհի վրա հեղվող խավարին:
Նրա անտեսանելի, բայց հզոր ազդեցությունը թուլացնում է նույնիսկ ամենաուժեղ հավատացողներին, ովքեր սկսում են կասկածել իրենց հավատին:
Երբ Ես տալիս եմ ձեզ այդ շնորհները, Ես անում եմ որոշակի պատճառով:
Դուք, Իմ աշակերտներ, խարիսխն եք, դեպի ուր կմոտենան այն հոգիները, ովքեր անիմաստ ձևով թափառում են շփոթության մեջ: Նույնիսկ եթե նրանք սկզբում չլսեն ձեզ, դուք պետք է տոկուն լինեք:
Տվեք նրանց Իմ պատգամների և խաչակրաց աղոթքների պատճեններն ու լուռ հեռացեք:
Նրանք ինչ-որ ձևով կազդվեն Սուրբ Հոգու կողմից: Եթե չընդունեն դրանք, նրաց համար դժվար կլինի պարզապես հեռանալ և մոռանալ դրանք: Ոչ, նրանք ետ կշրջվեն Ինձ համար:
Ոմանք ետ կգան ակամա: Հետաքրքրությունը կստիպի նրանց:
Ոմանք ետ կգան՝ փորձելով հեռացնել այս պատգամները և համոզել որ դուք էլ նույնն անեք:
Մյուսները ետ կգան՝ ձեր դեմ կոչ անելու, ծաղրելու և մարտահրավեր նետելու համար:
Ուրիշներն էլ կասեն, թե այդ Խոսքերն Ինձնից չեն և կկոտրեն ձեր սիրտը:

Բանց կլինեն դարձի եկողներ: Նրանք, ովքեր վազելով կգան ձեզ մոտ՝ մաքուր սիրով իրենց սրտերում, ավելին խնդրելու:
Այդ հոգիների համար է, որ արժե անել այդ ամենը:
Այնուամենայնիվ, խավար հոգիների համար է, որ պետք է ամենաշատը աղոթեք, և նրանց պատճառով է, որ Ես դուրս եմ հեղում ձեզ վրա Իմ Շնորհները, որպեսզի օգնեք փրկել նրանց հոգիները: **Քանի որ առանց ձեր օգնության, նրանց համար հույս չկա:**
Սա է այն պատասխանատվությունը, որը Ես տալիս եմ ձեզ, Իմ աշակերտներ, դարձի բերել նրանց հոգիները, որոնց Ես ամենից շատ եմ տենչում:
Ձեր Հիսուս

Եթե փառաբանում եք կեղծ աստվածների և խնդրում մեծ հարստություն, գանձեր և այլ ընծաներ, սոսկ ձեր ընչաքաղցությունը բավարարելու համար, դուք կգրավեք Խավարի Իշխանին

Երեքշաբթի, 28 օգոստոսի, 2012թ., երեկոյան ժ 07:30

Իմ սիրելի աղջիկ, աշխարհն ու նրա մեջ ապրող մարդիկ ժխտման մեջ են:
Նրանք չեն հավատում Ճշմարիտ Աստծուն՝ Իմ Հավիտենական Հորը:
Նրանք, միլիարդներով, խառնաշփոթ վազքի մեջ են և հետապնդում են փակուղիներ՝ փնտրելով մի աստված, որին կարող են հավատարմություն ցույց տալ:
Աստվածների՝ կեղծ աստվածների հետ կապված խնդիրը, որոնց նրանք դնում են պատվանդանի վրա, այն է, որ այդ կուռքերը իրենց իսկ պատրաստածն են: Նրանց սփական ստեղծածը՝ պատրաստված որպեսզի հարմարեցնեն իրենց մեկնաբանությանը թե ով է Աստված:
Այդ աստվածները, և աղջիկս, դրանք հարյուրներով են, ձևավորվել են նրանց երևակայությունից:
Այդ նույն աստվածները միայն մեկ նպատակի են ծառայում. Այն է՝ արտահայտել այն ակնկալիքները, որոնք ծնվել են սեփական անձի հանդեպ սիրուց, թե ինչպիսին պետք է լինի իրենց իդեալական աստվածը:
Նրանց ստեղծած աստվածները ճարտար են: Նրանք դիմում են նրանց հոգիների աստվածային իրավունքի զգացումին: Այդ հոգիները հավատում են, թե իրենց ստեղծած աստվածները քարոզում են իրենց իրավունքը զարմանահրաշ բաների հանդեպ:
Ձեզնից նրանք, ովքեր չեն ընդունում Ճշմարտությունը՝ միակ Ճշմարիտ Աստծո Գոյությունը, իմացեք սա:
Միայն մարդկության Ճշմարիտ Արարիչը կարող է ձեզ ազատ կամք տալ:
Իմ Հայրը երբեք չի ստիպի ձեզ, ոչ էլ կհրամայի որևէ բան անել, քանի որ դա անհնարին է:
Երբ դուք խնդրում եք կեղծ աստվծներին ձեզ գանձեր տալ, ձեզ հաջողակ դարձնել կամ երբ բարեհաճություն եք փնտրում, դուք եսասիրաբար եք վարվում:
Միայն այն ժամանակ, երբ Աստծուն խնդրեք ձեզ շնորհներ տալ ըստ Իր Սուրբ Կամքի, կարող եք իսկապես հաղորդակցվել միակ Ճշմարիտ Աստծո հետ:

Եթե փառաբանում եք կեղծ աստվածների և խնդրում մեծ հարստություն, գանձեր կամ այլ ընծաներ սոսկ ձեր ընչաքաղցությունը բավարարելու համար, դուք կգրավեք Խավարի Իշխանին:
Նա սպասում է այդ պահին, թե երբ է ձեզ այդպիսի շնորհներ տալու: Մի բացեք դուռը Ստերի Թագավորի առջև, քանի որ դա թանկ նստի ձեզ վրա:
Նա կփոխանակի այդ աշխարհիկ բաները ձեր հոգու հետ:
Ձեր Հիսուս

Բարին՝ Չարի դեմ պայքար է Աստծո՝ Իմ Հավիտեանկան Հոր և Սատանայի միջև: Դա այնքան պարզ է:

Չորեքշաբթի, 29 օգոստոսի, 2012թ., երեկոյան ժ 11:00

Իմ սիրելի աղջիկ, մարտը սկսվում է հիմա:
Ազգերի կողմից ընդունված ցանկացած ծանր օրենքի համար, որը հակառակ է Աստծո Օրենքներին, **Իմ Հայրը նրանց վրա կարձակի պատժի ուժերը:**
Յուրաքանչյուր չար վիրավորանք, կատարված Աստծո Օրենքների դեմ բացահայտ անհնազանդությամբ, հարված կստանա և ազգերը կտառապեն իրենց մեղքերի համար:
Ճիշտ ինչպես Աստծո Գթասրտությունը մեծ է և կծածկի ամեն հնարավոր լայնություն հոգիներ փրկելու համար, նույն կերպ Աստծո պատիժը կարձակվի՝ դադարեցնելու համար չարի տարածումը:
Բարին՝ չարի դեմ, պայքար է Աստծո՝ Իմ Հավիտենական Հոր և Սատանայի միջև: Դա այնքան պարզ է:
Նրանք, ովքեր հետևում են Աստծո օրենքներին, վեր կբարձրացվեն:
Ում համար որ նրանք աղոթում են և անձնական զոհողություններ առաջարկում նրանց մեղքերի քավության համար, նրանց հետ մեղմ կվարվեն:
Նրանք, ովքեր մերժում են հետևել Աստծուն, չնայած գիտեն Ճշմարտությունը և վարակում են այլ հոգիների այն չար օրենքների միջոցով, որոնք ընդունում են իրենց ազգեր համար, կպատժվեն:
Առջևում շատ **փոթորիկներ, ջրհեղեղներ և երկրաշարժեր** են սպասվում:
Քանի որ Աստծո դեմ յուրաքանչյուր վիրավորանք հզոր դիմադրության կհանդիպի, այնպես որ ժամանակի ընթացքում մաքրագործումը հնարավոր լինի իրականացնել և ավարտել:
Երբեք մի մոռացեք, որ Աստծո հանդեպ սերը պետք է գա սրտից:
Մերժեք Աստծո Խոսքը, և դուք կտառապեք դրա համար:
Աստծո հանդեպ սերը պետք է մաքուր լինի: Աստծո վախը ամեն բանի Արարչի մեծության հետ կապված բնական մասն է և այդ սիրո մի մասն է:
Հարգանք պետք է ցուցաբերվի Աստծո Օրենքների հանդեպ:
Երբ հարգանք չկա, և երբ մարդը խաթարում է Աստծո Օրենքները, որոնք քայքայում են մարդկությունը, Իմ Հոր զայրույթը կսանձազերծվի:
Ձեր Հիսուս

Կույս Մարիամ. Արթնացումը շուտով կգա:

Հինգշաբթի, 30 օգոստոսի, 2012թ., երեկոյան ժ 06:15

Զավակս, հոգիների նորոգումն արդեն սկսվել է, և Խաղաղության Դարաշրջանը շատ հեռու չէ:
Մինչ Աստծո բոլոր զավակներին օրհնություն է տրվում Իմ սիրելի և թանկագին Որդու Խոսքի Ընծայով, Սուրբ Հոգու տարածումը շարունակում է տարածվել բոլոր ազգերի վրա:
Իմ Որդու Խոսքը չի կանգնեցվի, քանի որ դա Իմ Հոր հրամանով է:
Դարձը կբոցավառի մարդկության սրտերը, և շատերը կզգան թե ինչպես է Աստծո՝ իրենց բնական Հոր Սերը բռնում իրենց, որ դա կզարմացնի և կցնցի նրանց:
Հենց որ այդ Աստվածային Սերը ներխուժի նրանց մեջ, նրանք մղում կզգան բացականչել ուրախությունից, քանի որ դա մարդուն հայտնի ոչ մի սիրո նման չէ:
Արթնացումը շուտով կգա:
Մինչ Աստծո Հոգին շարունակում է ուժեղացնել փչելով Փառքի Կայծերը, չարը կթուլանա և Սատանայի բանակը ուժասպառ կլինի:
Այն կմնա անպաշտպան, որովհետև նրա հետևորդներից շատերին կգրավի Աստծո Գթասրտությունը, իսկ Սատանան կմնա միայն իր բանակի կեսի հետ:
Նրա դատարկ խոստումներից հուսախաբված, նրանք կպատասխանեն Իմ Որդու Աստվածային Գթաասրտության Լույսին:
Մարտը ոչ միայն սկսվել է, այլև հոգիները հիմա բազմություններով հետևում են Իմ Որդուն, մինչ փնտրում են Հավիտենական Կյանքի Ճշմարտությունը:
Ես օրհնում են քեզ, զավակս:
Երկինքն ուրախանում է հոգիների դարձի և խավար հոգիների փրկության պատճառով, որը հնարավոր է դառնում նրանց աղոթքների միջոցով, ովքեր սիրում են Իմ Որդուն:
Քեր սիրող Մայր
Մայր Փրկության

Ոչ մի մարդ չգիտի հայտնության գրքի բովանդակության Ճշմարտությունը: Միայն Աստված գիտի:

Ուրբաթ, 31 օգոստոի, 2012թ., երեկոյան ժ 11:20

Իմ սիրելի աղջիկ, դուք մի պայթյունի եզրին եք, որով Իմ Գթասրտությունը դուրս կհեղվի աշխարհի վրա մի իրադարձության ընթացքում, որը կփոխի երկրի դեմքը:
Այս առաքելությունն արագ էր:
Դու կանչվեցիր հանկարծակի և շտապ կերպով, մինչ Ես առաջ էի շարժվում վստահանալու համար, որ աշխարհին տրվել է Ճշմարտությունը:
Այնքան քչերն են հասկանում, որ այս կերպ է Աստված կանչում մարգարեներին, անտեղյակ, մարգարեին նախապատրաստվելու համար ժամանակ չտալով:
Դա նշանակում է, որ խոսքերը հոսում են առանց տատանման:

Ոչ մի մարդ կարողություն չունի գրելու այնպիսի պատգամներ, ինչպիսին սրանք են: Ասել այդպես /որ սրանք մարդու կողմից են/, վիրավորանք կլինի Իմ Հոր և Սուրբ Հոգու հանդեպ:
Ոչ մի մարդ չի կարող մարդկային բառերի միջոցով բոցավառել Աստծո Սիրո Բոցը Նրա զավակների հոգիների մեջ, ինչպես այս Պատգամներն են անում:
Միայն Աստված կարող է այդպիսի արդյունք ստեղծել:
Ոչ մի մարդ չգիտի հայտնության գրքի բովանդակության մասին Ճշմարտությունը: Միայն Աստված գիտի:
Միայն Ես՝ Աստծո Գառը, իշխանություն ունեմ բացահայտելու թե ինչ են նրանք պարունակում: Ես հիմա անում եմ դա Իմ պատգամատար Մարիա Աստվածային Գթասրտության միջոցով, ով կփոխանցի Իմ Խոսքերը, այլ ոչ թե իր, չհավատացող աշխարհին:
Ուշ դարձրեք Իմ Խոսքին հիմա, քանի որ այն տրվում է ձեզ՝ ձեզ փրկելու համար: Ձեզ նախազգուշացնելու համար: Եվ ձեզ մաքրագործելու համար:
Պատրաստ եղեք, երբ ժամանակը գա:
Ես գալիս եմ Պատգամենրի միջոցով ձեզ նախապատրաստելու: Դուք չգիտեք օրը, ոչ էլ ժամը: Ուտի պետք է նախապատրաստեք ձեր հոգիներն այնպես, ասես Իմ գալու ժամանակը հենց հաջորդ օրն է:
Միշտ պատրաստ եղեք: Ես խնդրում եմ որ պարզ ու բաց մտքով կարդաք Իմ Պատգամները առաջին անգամից, քանի որ հավանաբար դա կլինի միակ անգամը, որ ականատես կլինեք Երկնքից եկող Իմ Ձայնին մինչև կգա այն օրը որին բոլորդ սպասում եք:
Ես օրհնում եմ ձեզ բոլորիդ:
Ես նշան եմ անում ձեզ՝ գալ Ինձ մոտ:
Երբ Ես ձեզ խնդրում եմ աղոթել, Ես պարզապես խնդրում եմ ձեզ վստահել Ինձ ձեր սեփական պարզ բառերով:
Ձեր սեփական ձևով: Ձեր անձնական մտքերով: Ես լսում եմ ամեն ինչ: Ես տեսնում եմ ամեն ինչ: Ես զգում եմ այն, ինչ դուք եք զգում: Ես ձեզանից յուրաքանչյուրի հետ եմ՝ կանգնած ձեր կողքին, պարզապես սպասելով այն օրվան, երբ դուք վերջապես տեղի կտաք Իմ Կանչին:
Դուք ոչինչ չունեք Ինձնից վախենալու, քանի որ ձեր հանդեպ Իմ Սերը կհաղթահարի ցանկացած խավար, որը ձեզ Ինձնից հեռու է պահում:
Շրջվեք դեպի Ինձ, և Ես դուրս կհեղեմ Իմ Լույսը ձեզ վրա:
Հետո Ես կտամ ձեզ այն խաղաղությունը, որին դուք ձգտում եք: Ես սպասում եմ: Ես համբերատար եմ:
Եկեք Ինձ մոտ, երբ պատրաստ լինեք:
Ես սիրում եմ ձեզ: Ես օրհնում եմ ձեզ:
Ձեր Փրկիչ
Հիսուս Քրիստոս